

ԱՐԱՐԱՏ

1907 ԱՄՍԱԿԻՐ ՌՅԾԶ

Տարի Ա. | ԱՊՐԻԼ | Համար Դ.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՊՐԻԼ 1907 Թ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

1. Կոնդակք Վեհափառ Հայրապետի . . . 299
2. Թուղթ Արեգակնափայլ Շահնշահին Իրանի . . 302
3. Քաղուածք ի կոնդակաց Վեհ. Հայրապետի . . 303
4. Քաղուածք Սինոդի օրագրութիւններից . . 305

ԿՐՕՆԱԿԱՆ

5. Աստուածոյ արդարու Թ. Թ. ռ. Գր. քհ. Նոր-Արևեանց. 310

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

6. Կաթոլիկ եկեղեցին Ֆրանսիայում. Գերմ. Թարգմ. Ա. Տաք վարդապետ 314
7. Բողոքական եկեղեցի 321

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

8. Պէտք է կազմակերպուենք. Գ. վ. Յովսէփեան . 323

ՄԱՏՅԱՆ ԱՔՈՒՆ 330

ՏԱՃԿԱՀԱՅՏ 333

9. Պատուէրակութիւն Սուքիաս եպիսկոպոսի ի Սանկտ Պետերբուրգ Հայոց դպրոցների մասին (1885 ամի) . 340

ԳՐԱԿԱՆ

10. Քրիստոսի հետքով. Թարգ. Մամբրէ վարդապետ . 354
11. Հենրիկոս Իբսեն. Ս. Յարութիւնեան . . . 361

ԳԻՏԱԿԱՆ

12. Մամիկոնեանց կալուածները. Ստեփան Կանայեանց. 373
13. Ստացուած գրքեր. 391

Ա Ր Ա Ր Ա Տ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1907—ՌՅԾԶ

Տարի Խ.	Ա Պ Ր Ի Լ	Համար Գ.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

Հրամանաւ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵԻ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՊԱՏՃԷՆ

Տ. Կ.

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԻ

Ա.

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ . . . .

Գերաւճուռն Տ. Գառեգին արհեպիսկոպոսի, Առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի, հարազատի Մայր Աթոռոյս, հայրապետական օրհնութեամբ յայտ առնեմք.

Այսու կոնդակաւ Մերով պատուիրեմք Գերաշնորհ Հովիւն Ջերում՝ ըստ պահանջման Տ. Փոխարքային Կովկասու թողուլ առ այժմ առանց կիրառութեան զ«Ժամանակաւոր կանոնս Հայոց տաղրական եկեղեցական դպրոցաց», մինչ ցնոր տնօրէնութիւն Մեր ըստ այսմ խնդրոյ.

Ի վերայ իսկականին ստորագրեալ՝
ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Թ. 498
ի 23 Մարտի 1907 ամի
Ի Ս. Էջմիածին
Ըստ այսմ՝ 499—503.

Բ.

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ . . . .

Վասն տալոյ վոխանորդաց և գործակալաց որոշակի հրահանգս պարտուց և իրաւանց իւրեանց յարմարագոյն դատիվք այսու Հայրապետական կոնդակաւ Մերով կարգադրել, զի ամենայն վոխանորդք որք ընդ Ձերով իրասւասութեամբ են, արասցեն ժողովս ի շրջանի իւրեանց՝ մասնակցութեամբ գործակալաց իւրեանց և կազմեսցեն կանոնս յօդուածք առ յօդուածք վասն պարտուց և իրաւանց վոխանորդաց և գործակալաց, յիշատակելով եթէ որպիսի վարչական միջոցս յարմար դատին վասն ածելոյ յուղղութիւն իշխանութեամբ իւրեանց ղքահանայս և զստորադրեալս առանց դիմելոյ թեմական իշխանութեան յայլ և այլ թեթևակի դէպս, ևս վասն հակողութեան, բարեզարդութեան և վարչական այլ և այլ գործողութեանց թէ քահանայից և թէ եկեղեցեաց։ Եւ ապա, յետ ստացնալոյ զկարծիս ամենայն վոխանորդաց և գործակալաց թեմին, ընդ Ձերով եղբայակցութեամբ և դիտողութեամբ առաջի առնել զայն Մեզ ց 1 յուլիս ամսոյ այսր ամի։

ի 23 Մարտի 1907 ամի
ի Ս. Էջմիածին
Թ. 504—509։

Գ.

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ . . . .

Ի լուսն Կոնդակի Մերոյ Թ. 40 ի 11 յունուարի 1907 ամի, որ վասն գործադրութեան «Ծխական Կանոնադրութեան», ունիմք պատուիրել զհետևեալն.

Ի բազմաթիւ խնդրանաց ժողովրդականաց երևի, եթէ ընծայացուք ոչ կարեն տալ զսահմանեալ քննութիւն յերկրորդ դասարանի յայնպիսի առարկայից, որք սկսանին միմիայն և ոչ աւարտին յայնմիկ, ուստի և անմասնութեան առաջի առնել հոգևոր իշխանութեան զպահանջեալ վկայականն, որով և ոչ լինի հնարին կատարումն ա. և բ. հրահանգաց 59 յօդուածոյ այնր կանոնադրութեան յաղագս այնոցիկ գիւղօրէից, թիւ տանց որոց է պակաս քան զ 100, ընծայացուք նոցին պարտին առաջի առնել վկայական Բ. դասարանի, սակս որոյ այսու Հայրապետական Կոնդակաւ Մերով հրամայեմք քննել յԲ. դասատան միմիայն ի հետևեալ առարկայից.—Հայոց լեզու՝ ըստ ծրագրի Բ. դասարանի, Հմտութիւն Ս. Գրոց, Խորհուրդք եկեղեցւոյ, Կարգ պատուհածպաշտութեան, Գործածութիւն տօնացուցի, Երգեցողութիւն չարականաց, Հայոց պատմութիւն լրիւ, Եկեղեցական պատմութիւն լրիւ, Թուաբանութիւն՝ չորս գործողութիւն ամբողջ թուովք և վերլուծութիւն, և զկնի բաւարար քննութեան տալ վկայական՝ յիշատակելով զչափ ուսման իւրաքանչիւր առարկայի.

Այլ և յուշ առնեմք պատուիրել վարչութեան թեմական դպրոցի ի կատար ածել զայս հրաման ամենայն օրինապահութեամբ, այն է՝ ընդունել զխնդիրս յընծայացուաց, քննել և տալ զվկայականս խնդրատուաց.

Ի 23 Մարտի 1907 ամի
Ի Ս. Էջմիածին
Թ. 515—519.

ԹՈՒՂԹ ԱՐԵԳԱԿՆԱՓԱՑԻ ՇԱՀՆՇԱՀԻՆ ԻՐԱՆԻ

Ի ՊԱՏԱՍԽԱՆԻ ԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ.

Առ Նորին Տէրութիւնն վեհագոյն, եւ հրեշտակատիպ Հովուապետն հրիսոնէից, մեծն ի հոգեւորականաց Մեսիականաց, հովուապետն հովուապետաց Միւրիչ կաթուղիկոս Մեծ Հայրապետն հանուրց Հայոց որ ի սփիւռս երկրագնդիս.

Ողորմութեամբն Աստուծոյ ի խինդ և ի բերկրանս արքայական սրտիս Մերոյ ընկալեալ զթուղթ Քերովբէական վեհափառութեանդ, որ յաղագս ընտրութեան և կարգման Տեառն Եղնկայ արքեպիսկոպոսի Ապահունեաց ի պաշտօն առաջնորդութեան Հայոց Ամերսատականի յայտ առնեմք.

Քանզի Մեր ևս արքայական կամք այս են, զի համայն ազգք, որք ընդ հովանեաւ Մեծի Տէրութեանս Իրանի վայելեսցեն հանապազ յանդորրու և յակաստանի, հաճոյ թուեցաւ Մեզ հրաման պատուիրանի կարդալ առ պաշտօնեայս բովանդակ ատենիցն Ամերսատականի ճանաչել զՏէր Եղնիկ արքեպիսկոպոսն առաջնորդ Հայոց երկրին այնորիկ և նմա յանձն արարեալ զբովանդակ գործս հոգեւորականս Հայոց՝ յամենայնի աջակից լինել նմա յիրագործումն նպատակաց իւրոց և արդար պահանջից։

Խնդրեմք հուսկ ի Քերովբէատիպ Տէրութենէդ Ձերմէ յիշել զմեզ յամենայն ժամ ի սրբանուէր աղօթս Ձեր։

Ստորագրեալ—**Մուհամմադ Ալի Շահ.**

Կնքեալ—**Թագաւոր Մուհամմադ Ալի Շահ Ղաջար.**

Գրեցաւ ի Թեհրան յարքայական պալատան, յամին 1324 ի 29. երորդումն ամսեանն Զիլղադէի, յառաջներորդում ամի թագաւորութեան Մերոյ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՓԱՂՈՒՄԱԾ Ի ԿՈՆՏԱԿԱՅ Վ.ԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ա.

Հայրապետական տնօրինութիւնք.

Կոնդակ յանուն Կոնսիստորիային Երևանայ, որով պատուիրեցաւ տալ Թադէոս վարդապետի Տէր Նիկողայոսեան յամիան 12 ր. թոշակ ի վիճակային արդեանց ի 1-էն յունուարի 1907 ամի։ Թ. 384.

— Յանուն Առաջնորդին Ատրպատականի, որով լուծաւ պսակն կարապետի Բալայեանց ընդ կնոջն Եղիսաբեթի Սեթինանեան և թոյլ տուաւ վերջնոյս մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Թ. 395.

— Յանուն Տ. Գարեգին վարդապետի Յովսէփեան ի քարոզութիւն յաւագ եկեղեցւոյ Վանուց, որ ի Տփխիս։ Թ. 4002.

— Յանուն Սինոդին Ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ կարգադրել զխնդիր ռոճկի Տ. Մատթէոս վարդապետի։ Թ. 422.

— Յանուն քահանայական մխութեան Երևանայ։ Թ. 468.

— Յանուն Տ. Մատթէոս վարդապետի, որով տուան նմա իրաւունք հաշտեցուցանելոյ զուսուցիչս Նուխւոյ։ Թ. 470.

— Յանուն հոգևոր հովուին Բուլղարիոյ, որով լուծաւ պսակն Միքայելի Համբարձումեան ընդ կնոջն Շահանդխտոյ՝ տալով առաջնոյն իրաւունս վերստին ամուսնութեան։ Թ. 472.

— Ցանուն Առաջնորդին Ատրպատականի, որով լուծաւ պսակն Օննիկի Սարրաջեան ընդ կնոջն Զաբելի Հովուեան Թոյլատրելով երկոցունց ևս մտանել ի նոր ամուսնութիւն։ Թ. 486.

— Ցանուն Առաջնորդին Տփխեաց, որով պատուիրեցաւ Թողուլ առ այժմ առանց կիրառութեան զԺամանակաւոր կանոնս Հայոց տարրական եկեղեցական դպրոցաց»։ Թ. 498.

— Ի նոյն միտս յանուն առաջնորդացն այլոց Թեմից Ռուսահայոց, և Կոնսիստորիային Ատրպատականայ։ Թ. 499—503.

— Ցանուն առաջնորդին Շամախւոյ, որով պատուիրեցաւ ի ձեռն փոխանորդաց և գործակալաց առնել ժողովս և մշակել յօդուածս վասն ՚յուղղութիւն ածելոյ զքահանայս։ Թ. 504.

Ի նոյն միտս յանուն առաջնորդացն այլոց Թեմից Ռուսահայոց, և Կոնսիստորիային Ատրպատականայ։ Թ. 505—509.

— Ցանուն Սինոդի, որով պատուիրեցաւ տալ արձակուրդ Տ. Ղևոնդայ Եպիսկոպոսի և հոգալ զնիւթականն։ Թ. 514.

— Ցանուն Առաջնորդին Տփխեաց, որով պատուիրեցաւ ի լրումն Թ. 40 կնդակի ի 11-ն յունուարի տարւոյս պատուիրել վարչութեան Թեմական դպրանոցին քննել զընծայացուս ըստ ցուցեալ առարկայից։ Թ. 515.

— Ի նոյն միտս յանուն առաջնորդացն այլոց Թեմից Ռուսահայոց, և Կոնսիստորիային Ատրպատականայ։ Թ. 516—520.

— Ցանուն Տ. Մարտիրոս քահանայի Զատիկեան՝ Ծխատեառն Հայոց Օրհէևի, որով պատուիրեցաւ չըլլադայել ի միջավայրի իւրեանց հանգանակել նպաստ վասն սովելոցն Տարօնոյ։ Թ. 527.

— Ի նոյն միտս յանուն Տ. Խաչատրոյ քահանայի Զաբիֆեան, Ծխատեառն Հայոց Ն. Նախիջևանի։ Թ. 532.

— Ցանուն առաջնորդին Ատրպատականի, որով պատուիրեցաւ գումարել ժողով հայուհեաց բարեգործական ընկերութեան վասն յաւելլոյ ինչ ինչ յօդուածս ի կանոնագրութեան ընկերութեան Թ. 542.

— Ցանուն Սինոդի. յետս առաքմամբ օրագոյն, եթէ խնամէութիւն չորրորդ աստիճանի չիք թոյլատրելի։ Թ. 551.

— Ցանուն նորին՝ առաքել զՏ. Արտակ վարդապետն ի Փիշնև ըստ հրաւիրանաց Տ. Առաջնորդին։ Թ. 552.

ԳԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ

Յ7-ն մարտի Սինոդն հրամայեաց յանուցանել հաւատարմաւոր Ուս. Շրջանին Կովկասու, եթէ բացի ոտնից Ծննդեան, Մկրտութեան, և Ս. Յարութեան Փրկչի պարտ է աղատ կայուցանել ի պարապմանց զհայազգի աշակերտս պետական դպրոցաց յատուկ ոտնից՝ Աւետման, Գղութեան ի Յաննայէ, Ծննդեան Ս. Աստուածածնի, Ընծայման ի տաճարն Ս. Աստուածածնի, Ս. Լուսաւորչի մտից ի վիրսն, Ս. Թարգմանչաց, Ս. Առաջին Լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթուղիմէոսի առաքելոց, Ս. Գևոնդեանց, Ս. Վարդանանց զօրավարաց, Անուանակոչութեան Տեառն, Տեառնընդառաջի, Անուանակոչութեան Վեհափառ Հայրապետի ամենայն Հայոց։ Հ. 205.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց մերժել զխնդրոյն թիւն Կոստատրիային Երևանայ վասն ձեռնադրելոյ զՀայրապետ Յովհաննիսեանց ի քահանայ Ալափարս գեղջ ի պատճառս մարմնաւոր պակասութեան։

Յ 9-ն մարտի Սինոդն լուեալ գ.յայտարարութիւն Անդամոյ սորին Տ. Բաբգէն վարդ. պատուէր եւ վանական կառավարութեան պահանջել ի Մաքսատայ Վաո եկեանց գմի հազար երկերիւր ռուբլիս և ի քարհատ վարպետաց գմի հարիւր ռուբլիս։ Հ. 225.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց մերժել գմիջնորդութիւն կոնսիստորիային Երևանայ վանն ձեռնադրելոյ գԽուրշուան Տ. Ղազարեան ի քահանայ Ղայթուր գեղջ ի պատճառս թերուս դոլոյ։ Հ. 222.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց կարգել գՀովել վարդ. վանահայր վանուցն Հոռոմոսի։ Հ. 224.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց պատուիրել կոնսիստորիային Երևանայ անխափան շրջեցուցանել յեկեղեցիս զդանձանակ յօգուտ Մայր Աթոռոյ և երկրորդ շրջաբերական հրամանաւ պատուիրել ամենայն կոնսիստորիայից վանս շրջեցուցանելոյ զդանձանակ յօգուտ Մ. Աթոռոյ յամենայն եկեղեցիս Հայոց։ Հ. 226.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց Թոյլ տալ կոնսիստորիային Երևանայ ընդունել գՀայկն Տ. Յակոբեան ի հոգևոր կոչումն ձեռնադրելով զնա քահանայ Ա.վնայ գեղջ։ Հ. 227.

Յ 12-ն մարտի ի կոնդակէ Վեհափառ Հայրապետի տեսանելով, զի պ. Ենգիբարեան ոչ ևս կարէ վայելել զվստահութիւն Նորին Սրբութեան ի պատճառս ինչ ինչ հանգամանաց, ի հետևումն որոյ և Նորին Սրբութիւնն ոչ կարէ կոչել զնա ի ժամ խորհրդակցութեան կարևոր խնդրոց, ուստի առաջարկել նմին Ենգիբարեանցի դրաւոր հրաժարել ի պաշտամանէ հաւատարմատարի Սինոդիս։ Հ. 228։

Յ 19-ն մարտի Սինոդն եդ ամենախոնարհ յայտարարութեամբ խնդրել ի Նորին Սրբութենէ առնել զպատչա-

ճաւոր անօրինութիւն վասն յայտ առնելոյ զաղբերս պահպանութեան և զտեղւոյ հիմնարկութեան Դպրանոցի թեմին Շամախւոյ և առնել զմիջնորդութիւն առաջի Բարձրագոյն Իշխանութեան վասն բանալոյ զԴպրանոցն։ Հ. 268.

Յ 26-ն մարտի Սիմոնդն հրամայեաց թոյլ տալ Կոնսիստորիային Երևանայ ծախսել ռուբլիս չորս հարիւր վասն նորոգութեանց առաջնորդարանի և կոնսիստորիայի, պահանջելով զգումարն յունևոր եկեղեցեաց վիճակին։ Հ. 294։

Ի նմին թուի Սիմոնդն հրամայեաց թոյլ տալ Կոնսիստորիային Աստրախանայ ձեռնադրել զԲարսեղն Քալինեանց ի քահանայ եկեղեցւոյն Հայոց ս. Խաչ քաղաքի։ Հ. 299.

Ի նմին թուի Սիմոնդն հրամայեաց թոյլ տալ Կոնսիստորիային Երևանայ ձեռնադրել զՂազարն Տ. Խաչատրեան ի քահանայ Ախալթեան գեղջ։ Հ. 300.

Ի նմին թուի Սիմոնդն հրամայեաց բացատրել Առաջնորդի թեմին Նոր Նախիջևանի և Բեսսարաբիոյ, զի իրաւունք իւր են արգելուլ ինքնակոչ և թափառական քահանայից առնել քահանայագործութիւն ի թեմի իւրում։ Վասն տեղափոխութեան քահանայից հարկ է առնել զգրաւոր համաձայնութիւն թէ նախկին և թէ նորոց ծխականաց թոյլատուութեամբ Կոնսիստորիայի։ Հ. 310

Ի նմին թուի քանզի գալիր Թովմասեան ձեռնադրեալ է ըստ յատուկ հրամանի Նորին Սրբութեան, ուստի մնայ առաջնորդի թեմին Բեսսարաբիոյ խնդրել զնշանագրութիւն ի Նորին Ս. Օծութենէ։ Հ. 318.

Յ 2-ն ապրիլի Սիմոնդն չատ համարելով զապաշխարութիւն Գրիգոր քահանայի Տ. Ներսիսեան՝ պատուիրել Կոնսիստորիային դարձուցանել զնա ի պաշտօնատեղի իւր։ Հ. 329.

Յ 6-ն ապրիլի Սիմոնդն հրամայեաց հրաւիրել զկարապետ Տ. Գրիգորեան ի պաշտօն հաշուապահի վանական հաստատութեան ռոճկաւ 800 ր. ի տարին։ Հ. 335.

Ամուսնալուծութիւնք

Յ 7-ն մարտի Սինոդն հաստատելով զեղրակացութիւն Կոնսիստորիային Ղարաբաղոյ՝ յանձնել զՄատէոսիանոս քահանայ Վարդապետեանց ի դատ մարմնաւոր իշխանութեան վանն կատարելոյ զպսակ անչափահաս Հեղինեայ Մուսայելեանց ընդ Ալլահ-վերտիի Աստուածատրեանց. իսկ զպսակեալսն բաժանել ի միմեանց ցհասանել Հեղինեայ յարիւնս հասակի։ Հ. 206.

Յ 14-ն մարտի Սինոդն հաստատելով զեղրակացութիւն Կոնսիստորիային Շամախւոյ հրամայեաց լուծանել զպսակ Յովհաննիսի Թառայեանց ընդ կնոջն Մագթաղինէի Մարտիրոսեան, առն միայն իրաւունս տալով մտանել ի նոր ամուսնութիւն։ Հ. 244.

Յ 16-ն մարտի Սինոդն հաստատելով զեղրակացութիւն Կոնսիստորիային Շամախւոյ հրամայեաց լուծանել զպսակ Եփրեմայ Տ. Մանուէլեանց ընդ կնոջն Թագուհւոյ Քարահանեանց, իրաւունս տալով երկոցունց մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլս։ Հ. 251.

Ի նմին թուի Սինոդն ոչ գտանելով հիմն օրինաւոր լուծանել զպսակ Միքայէլի Մելքոնեան ընդ կնոջն Սիրանուշի Մամիկոնեան՝ հրամայեցին մերժել զխնդիրն։ Հ, 276։

Ի նմին թուի Սինոդն ոչ գտեալ հիմն օրինաւոր՝ հրամայեցին մերժել զխնդիրն Յովսեփայ Տիգրանեանի վանն լուծանելոյ զպսակն ընդ կնոջն Նազիժդայի Մանթաչեան։ Հ. 277.

Ի նմին թուի Սինոդն ոչ գտեալ հիմն օրինաւոր վանն լուծանելոյ զպսակ Մարգարտայ Տոնոյեան ընդ կնոջն Եղիսաբեթի, հրամայեցին մերժել զխնդիրն։ Հ. 278.

Յ 21-ն մարտի Սինոդն հաստատելով զեղրակացութիւն Կոնսիստորիային Աստրախանի լուծանել զպսակ Մատիաննոսի Ճեպչեանց ընդ կնոջն Վարվառեայ, իրա-

ւոլնս տալով առնն և եթ մտանել ի նոր ամուսնութիւն։ Հ. 279.

Ի նմին Թուի Սինոդն ոչ գտանելով հիմն օրինաւոր լուծանել զպսակ Մտեփանոսի Վեզիրեանց ընդ կնոջն Շուղակաթայ՝ հրամայեաց մերժել զկնդիրն։ Հ. 292.

Ի նմին Թուի Սինոդն հաստատելով զվճիռ Կոնսիստորիայի Երևանայ՝ հրամայեաց լուծանել զպսակ ամուսնոց Ադիբեկի Զիլոյեան ընդ Ոսկեհատի Ալեքսանեան, իրաւունս տալով կնոջն մտանել ի նոր ամուսնութիւն։ Հ. 303։

Ց 23-ն մարտի ոչ գտանելով հիմն օրինաւոր լուծանել զպսակ Գէորգայ Քեչեճեան ընդ կնոջն Թումեանի Բաղդասարեան հրամայեաց մերժել զկնդիրն։ Հ. 288.

Ց 30-ն մարտի Սինոդն հաստատելով զեղրակացութիւն Կոնսիստորիային Վրաստանի՝ հրամայեաց լուծանել զպսակ Այվազեանց Մտեփանոսի ընդ կնոջն Գայիանեայ Բարեկեան, միայն կնոջն թոյլ տալով մտանել ի նոր ամուսնութիւն։ Հ. 315.

Ի նմին Թուի Սինոդն հաստատելով զվճիռ Կոնսիստորիային Հայոց Վրաստանի հրամայեաց լուծանել զպսակ Գէորգայ Ադամեանց ընդ կնոջն Թինաթինի Յովհաննիսեան, առն և եթ թոյլ տալով մտանել ի նոր ամուսնութիւն։ Հ. 317.

Ց 2-ն ապրիլի Սինոդն հաստատելով զեղրակացութիւն Կոնսիստորիային Վրաստանի՝ հրամայեաց լուծանել զպսակ Պետրոսի Ղամազեանց ընդ կնոջն Աղաւնւոյ Անտոնեան. իրաւունս տալով կնոջն և եթ մտանել ի նոր ամուսնութիւ. Հ. 330,

Ց 9-ն ապրիլի Սինոդն հաստատելով զեղրակացութիւն Կոնսիստորիային Վրաստանի՝ հրամայեցին լուծանել զպսակ Ալեքսանի Ռևաչեան ընդ կնոջն Սոփիայի, միայն առն թոյլ տալով մտանել ի նոր ամուսնութիւն։ Հ. 343.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

Երբ հեռուից մառախուղի միջով դժուար կլինի որոշելը թէ ի՞նչ է առաջդ. նոյն իսկ չես կարողանայ ջոկել սիւն է թէ մարդ, մօտենում, տեսնում ես, որ մարդ է, բայց ով է, չես կարողանում ճանաչել։ Եւ երբ արդէն կպչելու չափ մօտենում ես, այն ժամանակ միայն որոշում ես մարդու երեսի դէմքրութիւնը։ Նոյնն է և Աստուծոյ արդարութեան հասկանալը։ Մեր բոլորիս աչքի առաջ տարածուած է կեանքի անարդարութեան թանձր մառախուղը, պէտք է երկար և անթարթ նայես, որ նրա միջից կարողանաս պարզ որոշել Աստուածային ճշմարտութիւնը։ Մինչդոյն Աստուածային ճշմարտութիւնը մօտիկից և հեռուից կարող է երևել զանազան տեսակ։ Յիսուս կատարելապէս և պարզ տեսաւ Աստուծոյ արդարութիւնը և մարդկանց ցոյց տուեց մօտիկից, իսկ դպիրները և փարիսեցիները տեսնում էին նրան հեռուից և նրանց թուում էր, որ Յիսուս փոխանակ Աստուծոյ արդարութեան՝ քարոզում է բոլորովին ուրիշ բան։ Նրանք մեղադրում էին Նրան, Նա իբր փոխում է Մովսէսի օրէնքը, մարգարէների վարդապետութիւնը։ Յիսուս պատասխանեց նրանց. «Մի համարիք, եթէ եկի լուծանել զօրէնս և զմարգարէս, ոչ եկի լուծանել, այլ լնուլ» (Մատ. ե. 17)։

Ահագին տարածութեան վրայ կան ոսկու հանքեր. ոսկեխառն աւազը դասաւորուած է շերտերով մէկը միւսի վրայ և որքան խորը փորես, այնքան ոսկու քանակը շատանում է. եթէ վերի շերտի վրայ, օրինակ՝ հարիւր փութ աւազին գալիս է մի մասնալ ոսկի, հետևեալ շերտում՝ երկու-երեք մասնալ և այդպէս շարունակ։ Երբ գործը կատարուում է վայր ի վերոյ, այն ժամանակ սովորաբար թեթև կերպով ջրից անց են կացնում վերի շերտը

և ապա կիսակատար թողնում. յետոյ սկսում են երկրորդ չերտը և այսպէս շարունակ։ Այդպէս վարուեցան նաև դպիրները Աստուծոյ արդարութեան հետ, որ տրուած էր նրանց Մովսէսի օրէնքներում և մարգարէների դրուածքներում։ Նրանք թեթևակի վեր առին օրէնքի մակերեւոյթը և կարծեցին թէ այդ է բոլորը։ Փրկիչը ասում էր, որ այդ սխալ է. պէտք է փորել խորը. պէտք է ուղղադէտ նայել դէպի Աստուծոյ արդարութիւնը։ Այն ժամանակ կպատահի այն, ինչ որ կէս գիշերին աստղալից երկինք նայելիս. առաջ կտեսնես քիչ աստղ, բայց խորամուխ լինելով կտեսնես անհամար աստղեր։ Ահա Աստուծոյ արդարութեան այդ աստղերը Յիսուս ուզում է ցոյց տալ կարճատես մարդկանց։ Նա չէ եկած քանդելու, փոխելու արդարութիւնը, որ տրուած էր Մովսէսի և մարգարէների ձեռքով, այլ եկել է բաց անելու այն արդարութիւնը իւր ամբողջ մեծութեամբ և փայլով, իրականացնել կատարելապէս։ Այն քանդել չէ կարելի. Այն յաւիտենական է։ Աշխարհ կքանդուի, բայց Աստուծոյ արդարութիւնը կանգուն կմնայ, և եթէ մէկը ամենափոքր բանի մէջ ընտրէ անօր, ինքն էլ փոքր կլինի և ով այդ արդարութեան մի փոքր մասը կատարէ և ուրիշին էլ նոյնը սովորեցնէ, նա մեծ (?) կլինի երկնքի թագաւորութեան մէջ։ Բայց ընդ միշտ սահմանափակուել այդ փոքրով չի կարելի։ Դպիրների և փարիսեցիների հասկացողութիւնը Աստուծոյ արդարութեան մասին շատ նուիւն էր և ծանծաղ, որի վրայ չի կարելի հիմնել Աստուածային իսկական կեանքը մարդոց մէջ, ճշմարտութեան հասկացողութեան մէջ պէտք է միշտ առաջ երթալ։ «Եթէ ոչ առաւելցի արդարութիւն ձեր աւելի քան զդպրաց և փարիսեցւոց, ասում է Յիսուս աշակերտներին, ոչ մտանիցէք յարքայութիւն (Աստուծոյ) երկնից»—«Ուսարուք զի ասացաւ առաջնոցն. մի սպանանիցես. զի որ սպանանիցէ պարտական լիցի դատաստանի (Ելից Ի 13), այլ ես ասեմ ձեզ, եթէ ամենայն, որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց, պարտաւոր լիցի դատաստանի և որ ասիցէ ցեղբայր իւր

«յիմար»՝ պարտաւոր լիցի ատենի, և որ ասիցէ ցեղբայր իւր «մորոս» պարտաւոր լիցի գեհենի հրոյն»։

Այստեղ ի նկատի է առնուում Աստուծոյ արդարութեան դէմ երեք տեսակ յանցադործութիւն և դրուում է երեք տեսակ պատիժ։ Նախ՝ փոքր, յետոյ՝ մեծ և վերջապէս ամենամեծը։ Ընկերոջ անձնաւորութեան դէմ կատարուած յանցագործութեան առաջի աստիճանն է՝ մարդու անտեղի ստորացումը՝ թէկուզ մտքով միայն։ Եթէ ես առանց յայտնի պատճառի, ուրիշին համարում եմ ինձանից վատ, բարկանում եմ նրա վրայ անտեղի, իմ մէջ դատապարտում եմ նրան ի զուր՝ ես ինքս ինձ ենթարկում եմ դատի, ինքս ինձ դատապարտում եմ։ Ուրիշի անձը ստորացնելով՝ նոյն իսկ առանց Նրա դիտութեանը, ստորացնում եմ ինքս ինձ։ «Որ ասիցէ ցեղբայր իւր յիմար՝ պարտաւոր լիցի ատենի». այսինքն ոչ թէ այլ ևս անձնական դատի է ենթարկւում, այլ հասարակաց դատաստանի։ Յիմար՝ (նշանակում է «դատարկ մարդ»)։ Ստացուում է այս տեսակ միտք. անձնականապէս ինքդ քո առաջ ստորացրիր ուրիշին և դրանով ինքդ քեզ ստորացրիր, ինքդ քեզ դատապարտեցիր. իսկ երբ քո այդ դէպի ընկերդ տածած արհամարհանքդ արտայայտեցիր հրապարակով, այդ ստորացած մարդուն ղեկաւորիր քո դուրդ «յիմար» խօսքով, դրանով ինքդ քեզ ստորացրիր հրապարակով. ուստի և պէտք է ենթարկուիս հասարակաց դատաստանի՝ ծերակուտի։ «Իսկ որ ասիցէ «մորոս» պարտաւոր լիցի գեհենի հրոյն»։

«Գեհենի հուր» այստեղ անուանուում է Երուսաղէմի մօտի հովիտներից մէկը Գեհենը։ Այս հովտի մէջ մի ժամանակ Իսրայէլացիք, մեղսական թագաւորների ժամանակ, կենդանի երեխաները զոհ էին բերում Մոլոխ կուռքին։ Վերջերում կուռքը մոռացութեան տրուեցաւ, բայց սարսափելի յիշատակը մնաց Գեհենի հովտի վրայ։ Այդ հովիտը դարձաւ աղբանոց, որտեղ քաղաքից բերում, թափում էին ամեն տեսակ աղբ և կեղտոտութիւն։ Որպէս զի այդ աղբը չփտի և չապականէ օդը, այրում

էին և այդպիսով այդ կրակը անշէջ ճնում էր ընդ միշտ։ Այստեղից գնհենը սկսեց անուանուիլ հրային։ Եւ այն ժամանակ Աւետարանի խօսքերը այս միտքը կատանան։ Եթէ մեկը իւր մերձաւորին ոչ միայն իրանից աւոր է համարում, այլ և ուրիշից էլ աւոր, անուանում է նրան «մորոս»—խենդ և դրանով հաւասարեցնում անբան անասուններին, նա ինքն իրան էլ համարում է բոլոր մարդկանցից ցած, իրան հաւասարեցնում բարոյական աղբին, մարդկային տականքին, որի տեղն է գնհենի կրակը։ Այստեղ մենք տեսնում ենք որ փրկիչը, լուսաբանելով «մի սպանանես» պատուէրը, պահանջում է ոչ միայն մարմնաւոր դոյութեան պահպանութիւնը։ Մարդը մարդու համար սուրբ պէտք է լինի։ Դա կենդանի Աստուծոյ տաճար է (Կոր. Ա. 16.) Աստուծոյ կենդանի պատկեր (Ծն. Ա. 26)։

Երբ մենք լինում ենք թագաւորական պալատում, մանենք գալիս թանգարաններում, պատկերասրահներում, որքան զգոյշ ենք լինում, որ որևէ առարկայի չդիպչենք, չգլորենք, չքերթենք։ Իսկ մարդկանց մէջ մանգալիս աղատութիւն ենք տալիս մեր արմունկներին, բռունցքներին. աներես կերպով հրհրում ենք բոլորին, որոնք կանգնած են ճանապարհի վրայ։ Ուրեմն չենք համանում Աստուծոյ արդարութիւնը։ Բառեր գիտենք, կրկնում ենք բերանացի, ասում ենք ուրիշներին, բայց իսկապէս ինչ են նշանակում այդ բառերը՝ չգիտենք։ Մեր աչքերի առաջ տարածուած է թանձր մառախուղ, չատ ենք հեռացած ճշմարտութիւնից, չենք որոշում նոյն իսկ նրա գիմագծերը։ Պէտք է ազատուել մառախլապատ ծածկոյթից, պէտք է մօտենալ Աստուածային արդարութեան լոյսին։

Թարգմ. Գրիգոր Բահ. Նար-Աբեւեանց.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՆ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

4) Հռովմը մերժում է Ֆրանսիայի կողմից առաջարկած նպաստաւոր պայմանները։—2) 1907 թ. Յունուարի 2-ի նոր օրէնքը։—Պապի կոնդակը։—4) Եպիսկոպոսների երրորդ ժողովը։

1. «Եկեղեցին պետութիւնից բաժանելու օրէնքի հեղինակները ամեն բան նախատեսել էին, բացի այն՝ ինչ որ պատահեց», ասաց մի քանի շաբաթ առաջ Կլեմանսոն պարլամենտում։ Ֆրանսիական կառավարութեան զեկավարի այս խօսքը, որ քիչ մնաց մինիստրութեան ճգնաժամ առաջ բերէր, կատարեալ ճշմարտութիւն է։ Այո՛, բաժանման օրէնքը ամեն բան մանրամասնօրէն աչքի առաջ էր ունեցել։ Մանրակրկիտ կերպով մտածուած էր, թէ ինչ պիտի անեն եկեղեցական շինութիւնները և թէ ինչպէս պիտի դործադրեն նոցա եկամուտները, դանազան պաշտամունքների հոգևորականներին ինչպիսի ռոճիկ պիտի տրուի, եկեղեցական համայնքները ինչպիսի պայմաններում առաջ դալ և գոյութիւն ունենալ կարող են։ Սակայն մինիստրութիւնը հաշիւը առանց Հռովմի էր տեսել. ոչ ոք չէր նախատեսել, որ Պիոս Ժ. Ֆրանսիական մանրամասն մշակուած այս օրէնքներին մի հատատառն «non possumus»-ով (չենք կարող) կպատասխանէ։

Հռովմի այս դաժան անհաշտելու թեան պատճառով Բրիանն էլ սիպտուած եղաւ կանոնաւոր ճանապարհը բռնել։ Թէև նա այժմ մտադրութիւնը փոխել է, բայց չի կարելի ուրանալ, որ նա այդ ուղղութեամբ առաջին քայլն արդէն արել էր։ Ֆրանսիան ներկայացնում էր աշխարհի առաջ մի տարօրինակ թատերդութիւն. անկրօն և նոյնիսկ մինիստրը ձգտում էր հաճոյանալ պապին և առաջարկում էր ամեն տեսակ նպաստաւոր պայմաններ, որպէս զի նորան համոզել կարողանայ նրբ սիրելի օրէնքն ընդունել տալու։ Բրիանը նախ յայտարարեց, որ Հռովմից բաժանուելը անկարգութիւն կլինի։ Նա շեշտեց, թէ այն քահանան, որ Հռովմի պապի հետ հաղորդակցութիւն չունի, վատ քահանայ է։ Ապա հրատարակեց նա, որ Ֆրանսիայի այն քահանաներն ու քաղաքացիք, որոնք Հռովմին հպատակուել

չեն ուզում, Ֆրանսիայի եկեղեցական կալուածքները սեփականելու իրաւունք չունեն։ Փոխանակ Ֆրանսիական քաղաքականութեանը նպաստելու, մինիստրը հռոմէական աստուածաբանութեան յետևից էր ընկել։

Բարեբախտաբար այդ Հռոմին բաւականութիւն չտուեց։ Պիտ ը. և նորա խորհրդականները այս բոլոր դիջողութիւնների մէջ Հռոմի առաջ նոցա ունեցած երկիւղի մի ապացոյց տեսան, այդ պատճառով և պահանջեցին է՛լ աւելին։ Սակայն, չնայած Բրիանի բարի կամքին, նորա այժից վեր էր դորանից աւելին տալը։ Որովհետև ոչ միայն Կլեմանսոն այլ և պարլամենտի անդամների մեծամասնութիւնը բացարձակապէս երես դժկամակութիւնը յայտնեցին։ Պարզ էր, որ ոչ պարլամենտը և ոչ երկիրը այլ ևս դիջում չէին ուզում անել։ Եւ ահա յառաջ եկաւ մի կատաղի երկութիւն. առաջ յայտարարել էին, թէ այն քահանաները, որոնք Հռոմին չեն հնազանդիլ, վատ քահանաներ են. իսկ այժմ ստիպուած տեսան իրենց այն քահանաներին, որոնք հրաժարվում էին հռոմի հրամաններին՝ աստուածաշաւութեան մասին յայտարարել մերժում էին, ուրեմն լաւ քահանաները էին, դատի ենթարկել։

Որովհետև 1905 թ. դեկտ. 9-ի բաժանելու օրէնքը եկեղեցին բացարձակապէս մերժում էր, դեկտեմբերի սկզբին մինիստր Բրիանը մի շրջաբերական ուղարկեց նահանգապետներին, որ բոլոր եկեղեցիները մնան մի միայն աստուածպաշտութեան համար և ուրիշ ոչ մի նպատակի չծառայեն։ Քահանան եկեղեցու վրայ վարչական կամ կանոնաւորական ոչ մի իրաւունք չունի։ Եկեղեցւոյ շահագործութեան և կամ նորա մէջ գանուած իրերի (օր. աթոռների և այլն.) համար նա ոչ մի վարձ պահանջել չէ կարող։ Մի միայն աստուածպաշտութեան ժամանակ նա կարող է գանձանակ ժողովել։ Եկեղեցական դումարումների համար պարտաւորական էր, 1881 թ. օրէնքի համեմատ, առաջ ժամանակեայ յայտարարութիւն, իսկ նախարարը բաւականանում է միանգամից ամբողջ տարուայ համար յայտարարելով։ 1881 թ. օրէնքի համեմատ իւրաքանչիւր ժողովի համար կենսական բիւրոյ պիտի կազմուէր. եկեղեցական դումարների համար այդ օրէնքը ջնջուում էր։ Եպիսկոպոսներից շատերը միևնոյն այս յայտարարութեամբ դոհ էին։ Ահա այսպէս է գրում ի մէջ այլոց Բորդոյի Լեկոյ արքեպիսկոպոսը. «Որովհետև այս յայտարարութիւնը (եկեղեցական ժողովներին վերաբերեալ) մի մի միայն մի ձևականութիւն է, և որ և է իրաւունքից հրաժարուել չի պահանջում ամենևին, ուստի մենք հիմք չենք

տեսնում չընդունելու այդ օրէնքը»։ Բայց հէնց նոր էր արքեպիսկոպոսը իւր հոգևորականներին խորհուրդ տուել 1881 թ. օրէնքի այս հաւատուրացութեանը յարմարուել, որ Պիոս Ը. մի նոր հեռագրով Ֆրանսիայի կաթոլիկներին արգելեց այդ օրէնքին էլ հպատակուել։ Անմիջապէս Լեկոյ արքեպիսկոպոսը, ինչպէս և նորա մեւս ընկերակիցները իրենց բոլոր յայտարարութիւնները յետ վերցրին։

Վերջապէս ֆրանսիական կառավարութեան համբերութիւնը հատաւ։ Դեկտ. 12-ին Մոնտանինի-դի-Միրաբելլոյին, որ երբեմն նուիրակութեան առաջին քարտուղարն էր, աքսորեցին, որովհետև ֆրանսիայի հոգևորականութեանը դրդում էր երկրի օրէնքի դէմ ապստամբելու։ Միաժամանակ Պարիզի երեք քահանաների դատաստանի ենթարկեցին, որովհետև սոքա դեկտ. 9-ին բացարձակապէս ապստամբութիւն էին քարոզել։ Անհնազանդ հոգևորականների համար էլ նոր կանոններ հրատարակուեցան։ 1) Ռոճիկներն ու յաւելումներն որոշ դէպքերում յետ վերցնել։ 2) Կաթոլիկ եկեղեցւոյ պաշտամունքի համար եղած հասարակական կտակները պէտք է ցուցակագրուեն և հսկողութեան տակ դրուեն։ 3) Եպիսկոպոսների պալատները, քահանայից տները և հոգևոր Դպրոցները անմիջապէս պէտք յանձնուեն կառավարութեան։ 4) Աղքային ապահովութեան համար որոշ կարգադրութիւններ պէտք է լինին։ 5) Վերջապէս 3 տարուայ ամսի ընթացքում մօտ 5500 սեմինարիստներ զինուորակոչութեան պէտք է հրաւիրուին։

2. Միևնոյն ժամանակ պետութիւնը սակսուած էր, եթէ նա չէը ուզում, որ երկրում կրօնական պատերազմ ծագէը, մի այնպիսի նոր օրէնք մշակել, որ կարողանար կաթոլիկների համաձայնութիւնը գտնել։ Այդ օրէնքը դեկտեմբերի վերջին ներկայացուեց պարլամենտին և 1907 թ. դեկտ. 28-ին սենատում արտատանած իւր յայտնի ճառում Բրիանը մատնանիշ էր անում այն բանի վերայ, որ ֆրանսիական հոգևորականութիւնը առաջին օրէնքը ուրախութեամբ ընդունած կլինէը, եթէ Հռոմը չսակսէը մերժել այն։ Եթէ Հռոմում, ասաց նախարարը անդրմադրելի ճնշման միջոցներ չունենայինը, որոնք ֆրանսիայի հոգևորականութեան անդամների խղճի վերայ ներգործութիւն ունեն, այն ժամանակ սոքա վաղուց հպատակած կլինէին օրէնքին։ Արդ, նորանց պրօեքտը վերին աստիճանի ծանր է և տանջալից. եթէ հպատակուին պապին, այն ժամանակ, իբրև ֆրանսիայի քաղաքացիներ իրենց խղճի հետ ծանր պայքարի մէջ կմտնեն. իսկ եթէ չեն հպատակի, այն ժամանակ Հռոմում

պատրաստ են չատ միջոցներ նորանց գոյութիւնը ոչնչացնելու համար: Մենք ուղում ենք այս նոր օրէնքով եկեղեցւոյ համար անկարելի գարձնել օրինականութեան սահմանից դուրս գալը: Ինչ որ նա ցանկանում է և ինչ որ մենք անպայման մերժում ենք, այդ հալածանքն է: Մենք նորա դէմ կռուում ենք միայն ազատութեան զէնքերով: Ազատութիւնը ամենավատանգաւոր և ամենազօրեղ թշնամին է, որ կարող է եկեղեցւոյ դէմ ելնել:

Համաձայն 1907 թ. Յունուար 2-ի օրէնքի եկեղեցիներն ու մատուռներն են մնում են նաև այն դէպքում հաւատացեալների և նոցա հոգևորականների սեփականութեան տակ, եթէ 1905 թ. դեկտ. 9-ի օրէնքով եկեղեցական համայնքներ չեն հիմնուել (յօդ. 2.) բայց եպիսկոպոսների պալատներն ու հոգևոր դպրոցները ամբողջովին տերութիւնից պիտի յետ ստանայն: Քահանաների տները ևս պիտի յանձնուի համայնքի ձեռքը (յօդ. 3): Այն համայնքներում, որտեղ քահանայական տուն չկայ, դադարում է բնականաբար և բնակարանի համար հատուցումն, եթէ ոչ մի եկեղեցական համայնք չկայ այնտեղ: Եկեղեցւոյ այն կալուածքները, որ 1905 թ. օրէնքի համեմատ կրօնական համայնքներից չի պահանջուել, կանցնին հասարակական բարեգործական հատատութեանց ձեռքը (յօդ. 4.): Նոր օրէնքի հրատարակուելուց յետոյ մի ամսուայ ընթացքում 1905 թ. օրէնքի հիման վերայ կատարուած բոլոր յայտերը (բայց ոչ ուճիկները) այն բոլոր քահանաներին մերժել, որոնք այնուամենայնիւ իրենց պաշտօնը շարունակում են այնպիսի ծխերի մէջ, որտեղ ոչ 1905 թ. և ոչ էլ 1907 թ. Յունուարի 2-ի նոր օրէնքին են հպատակուել ցանկանում (յօդ. 5.): 1905 թ. դեկտ. 9-ի օրէնքի կարգադրութիւնները, դոցա հետ և կատարելու որոշումները իրենց ղօրութեան մէջ կմնան, ինչ որ ներկայ 1907 թ. Յունուարի 2-ի օրէնքին ընդդէմ չէ:

3. Հռովմի ս. Աթոռի պատասխանը չատ չուշացաւ. պապի կոնդակը ստացուեց 1907 թ. Յունուարի 6-ին ուղղած՝ ֆրանսիայի «կարդինալների, արքեպիսկոպոսների, եպիսկոպոսների և ֆրանսիական հոգևորականութեան ու ժողովրդին»: Պիոս Ժ. մերժում է իբրև թէ Հռովմը իւրայիններին հալածանքի է ենթարկում, որպէս զի դորանով հաւատ և եռանդ զարթեցնի, «որովհետև հալածանքն ինքն ըստ ինքեան չար բան է և իրաւունք չի տրուած չարիք գործելու, որպէս զի դորանից բարիք առաջ գայ»: Ճշմարտապէս դեղեցիկ և քրիստոնէական սկզբունքներ: Բայց երբ պապն ասում է. «Էնց առաջին ժամից մեր թշնամիք մտադրուել են գլխաւորապէս ձեզ մեզանից բա-

ժանել, ապա ձեր մէջ անմիաբանութիւն սերմանել», այն ժամանակ ճշմարտութիւնից հեռանում է նա: Ուղիղ հակառակն է ճշմարտութիւնը: Զորրորդ յօդուածը չի՞ աշխատում ամեն կերպ արգելք հանդիսանալ հերձուած առաջ գալուն: Բրիանը պարլամենտում հրապարակապէս յայտնց, «այն քահանայք, որոնք իրենց եպիսկոպոսից բաժանուում են, վատ քահանաներ են և ոչ մի յարգանքի արժանի չե՞ն»: Չէ՞ որ այսօր էլ նա 1905 թ. օրէնքի համաձայն կազմած, բայց անհրաժեշտաբար հերձուածողական կրօնական համայնքներին պատկանող կալուածքների յանձնումն մերժում է: Ի՞նչ է մնում, ուրեմն, պապական բացատրութիւնից: Ապա պապը բողոքում է եկեղեցական կալուածները բարեգործական հաստատութեանց ձեռքն անցնելու և եկեղեցապատկան շինութեանց քաղաքին և հասարակութեանը վերադարձնելու միտումի դէմ: Նոր օրէնքն աւելի վատ է քան թէ բաժանման օրէնքը և դա դատապարտելի է, որովհետև վանդուսը է նուիրապետութեան յարգանքի, եկեղեցւոյ և նորա կալուածքների աղատութեան համար: Վերջը բերում է պապը պատմութեան դատաւճիռը. «Նա պիտի ասէ, որ եթէ առաջուց վատահ ձեր վեմ վհհանձնութեան վերայ՝ մենք չվարանեցանք ձեզ ասելու, որ զոհաբերութեանց ժամը հնչել է,—այդ նորա համար է, որ աշխարհին յիշեցնենք յանուն բոլոր իրերի Տիրոջ, որ մարդս պարտաւոր է այս աշխարհում տածել աւելի բարձր հոգսեր քան այս կեանքի անցաւոր պատահականութիւնները, և թէ այս երկրի վերայ մարդկային հոգւոյ բարձրագոյն ուրախութիւնը, անկապտելի ուրախութիւնը գերբնականօրէն կատարուած պարտքն է լինչպէս էլ լինի, և դորա նով է որ Աստծուն պատուած, ծառայած և սիրած կլինենք ամեն բանից վեր»:

4. Յունուարի 15-ին կրկին անգամ տեղի ունեցաւ Ֆրանսիական եպիսկոպոսների ժողովը: Այս ժողովն էլ, որ բաժանման օրէնքից յետոյ երրորդն է, միևնոյն պատճառներով նոյնչափ անյաջանակ էր, որչափ նախկինները: Ֆրանսիական եպիսկոպոսութիւնը վատիկանի համար ոչ մի նշանակութիւն չունի: Պապն անձամբ է կամենում ամեն բան վճռել: Նոյն իսկ Գերիդոր Ե. այնքան ինքնիշխանութիւն չէր վերագրել իրեն, որքան Պիոս Ը-ը. Գաղղիական անկախութեան վերջին հետքը բոլորովին կորած է: Ժողովի իսկական կառավարիչները ոչ թէ Ֆրանսիական կարդինալներն՝ Ռիչարդ (Փարիզ), Կուիէ (Լիոն) և Լեկոյ (Բորդոյ) էին, այլ ինքը պապը, նորա քարտուղար մոնսինիոր

Մերբե-դել-վալը և ոտան ներկայացուցչ մանավինոը Վ. Լիկոն, Բելգիայի նունցիուսը:

Եպիսկոպոսներին զբաղեցնում էր երեք մեծ հարց. պաշտամունքի դադարեցումը և պահպանելը, և մեծ ու փոքր հոգևոր դպրոցների վերսին կազմակերպումը: Սակայն նոքա աւելի մեայն ցանկութիւններ արտայայտեցին, քան իսկական վճիռներ տուին: Վերջինները Հռոմին էր վերապահած: Ինչ որ պաշտամունքին է վերաբերում, եպիսկոպոսները Հռոմից հարցրին՝ «կարելի է 1907 թ. օրէնքի պահանջած յայտարարութիւններն անել, դոնեա այն համայնքների մէջ, որտեղ համայնական խորհուրդը խաղաղասիրական ղգայմունքով է տոգորուած»: Հռոմը պատասխանեց. «Ոչ կրօնական համայնքներ և ոչ յայտարարութիւններ» (Ni associatisns, ni déclarationo): Երևի պատը ապատում է, որ ֆրանսիական կառավարութիւնը անմիջապէս իրեն հետ բանակցութիւններ սկսէ ֆրանսիական եկեղեցական համայնքների համար:

Պաշտամունքը պահպանելու համար եպիսկոպոսները վճռել էին Պետրոսի անուան նուիրած գանձանակադրի օրինակով պատրաստել գանձանակադրամ նշանակել: Բայց այդ օգուտ էր տպատուում նաև մատնաւոր դործերից: Մինչև անդամ մատծուեց քահանաների համար հանրակեցարան հիմնել: Քահանաներին իրաւունք էր տրուում իրենց նախկին տները վարձով վերցնել: Որտեղ քահանայք իրենց մինչև այժմ ունեցած քահանայական տներում բաբեյաջող պայմաններով մնալ չեն կարող և նոյն տեղում ուրիշ ոչ մի յարմար բնակարան չէ դտնուում, այդ տեղերից քահանայը պիտի չեռ կանչուին: Մեծ և փոքր հոգևոր դպրոցները վերսին կազմակերպելու համար եպիսկոպոսները որոշեցին վարուել 1875 և 1850 թ. թ. օրէնքների համեմատ: Մի առանձին հոկոզութիւն պետք է դործ դրուէը դինուորական ծառայութեան մէջ եղած սեմինարիստների վերաբերմամբ. մեծ սեմինարիաններից մէկին տեսուչը պէտք է կանոնաւոր կերպով այցելէ նոցանց իրենց զօրանոցներում:

Հէնց նիստի ժամանակ եպիսկոպոսական ժողովը Օրլէանի և Դիժոնի եպիսկոպոսների առաջնորդութեամբ մի պատգամաւորութիւն ուղարկեց Հռոմ, եպիսկոպոսների առաջարկութեանց համար պապի վճիռը ստանալու: Առաջարկութիւնների մէջ առանձին ուշադրութեան արժանի է այն միտքը, թէ մի կողմից եպիսկոպոսների կամ քահանաների, միւս կողմից նահանգապետների կամ քաղաքապետների մէջ պէտք է պայման կայուն, որն հիման վերայ եկեղեցիները 18 տարի եկեղեցական

իշխանութեան տրամադրութեան տակ պիտի մնան։ Այս դաշինքի վերաբերութեամբ պապի կողմից ընդունած օրինակի մի ձևը եպիսկոպոսները հրատարակեցին հետևեալ որոշ հատատիացումով. «Մենք յայտնում ենք, որ վարձակալութեան դաշինքը կամ ամենայն տեղ պիտի չգործադրուի կամ ոչ մի տեղ չի ընդունուիլ։ Այս դաշնադրութիւնները միայն այն րոպէից կսկանեն գործադրութեան մէջ, երբ որ և է տեղ այդ պայմանները համայնքների ներկայացուցիչների և միւս կառավարիչների կողմից հաւանութիւն գտած կլինեն»։ Ընդհատ պարլամենտում արմատականների խնամ ընդդիմութեան՝ Բրիանն էլ կամեցաւ այդ ցանկութեան համեմատ վարուել։ Նա մի շրջաբերականով չորս ծրագիր ուղղեց նահանգապետներին եպիսկոպոսների կողմից առաջարկուած դաշնադրութեան նկատմամբ, նախապէս պարլամենտի մէջ բոլոր ժողովների, ուրեմն և կրօնական ժողովների համար ծանուցանելու պարտականութիւն վերացնելն յաջողցնելով։ Բանակցութիւնները Հռոմի հետ վարում էին Պարիզի արքեպիսկոպոսի միջոցով։ Արմատականները Բրիանին նախատում էին, որ նա այս դաշնադրութեամբ մի նոր կոնկորդատի հիմք է դնում և ֆրանսիական համայնքները տալով գլխով յանձնում կաթոլիկ հզերականութեան։ Սակայն նորան յաջողուեց փետրուարի 19-ին իւր եկեղեցական քաղաքականութեան համար փառաւոր վոտահութեան քուէ ստանալ։ Այժմ էլ սակայն դժուարութիւնները ծագում են վատիկանի կողմից, որովհետև Բրիանը պնդում է, որ իւրաքանչիւր անգամ ծուխը փոխելիս մի նոր դաշինք պիտի կռուի, և, ոչ էլ օտարերկրացիները, ոչ էլ վանական կարգերի մէջ եղած կրօնաւորները պիտի այդպիսի ներաւունք ունենան, այլ մի միայն աշխարհիկ հոգևորականները։ Վատիկանը յայտարարեց, որ վանական կարգերի մէջ եղած կրօնաւորներին քահանայական պաշտօնի ներաւոնքից զրկելը բոլորովին անընդունելի է։ Եւ այսպիսով շատ կասելի է, որ եկեղեցւոյ կողմից եղած այս առաջին և միակ դրական առաջարկն էլ կրկին խորտակուի շնորհիւ Հռոմի անհնազանդութեան։ Առ այժմ բանակցութիւնները դադարեցրել են։ Քահանաները հրաման են ստացել մնալ եկեղեցիների մէջ, մինչև որ ուժով այնտեղից հեռացուին։ Գանի որ Բրիանն է մինիստր, այդպիսի բան տեղի չի ունենալ։

Դերմ. Քարտ. **Առտակ վարդապետ.**

Chr. d. Chr. Welt.
1907, Nr. 12.

Պաշտօնապէս թոյլ է տրուած Ռուսաստանում քաց անել ժողովարարութիւն Հռոմի աթոռի օգտին: Այս ժողովարարութիւնը պապի միջնորդութեամբ է եղած և պատճառաբանուած է Ս. Աթոռի նիւթական նեղ կացութեամբ:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԿԵՑՔԸ

Անցեալ թուականի Նոյեմբ. 27-ին գումարուել է Վ.խոբապենի շրջանում Աւետարանական Ընկերութեան ընդհանուր ժողովը: Նաւոտու դպրութեան ընկերութիւններից առաւել ուշադրութեան արժանի է այս միութիւնը, որ 304 հոգի խակական անդամ ունի և բազմաթիւ համակրողներ նոյն երկրի ամեն կողմում: Այս ընկերութիւնը առանձին համակրութիւն է վայելում իւր ընդարձակ և օգտակար դործունէութեան շնորհիւ: Մեր ընթերցողներին գաղափար տալու համար թուենք համառօտաբար նորա դործունէութեան ասպարէզները, քաղելով Ch. d. Ch. W. թերթից:

Ընկերութիւնն ունի ա) հետևեալ դաստիարակչական հաստատութիւնները. փրկութեան տուն, տնտեսութեան դպրոց, դաստիարակչական տուն, փոքրիկ երեխաների դպրոց, որբանոց: Փրկութեան տներ կոչւում են քրիստոնէական այն դպրոցները, ուր դաստիարակւում են յատկապէս փոքրահասակ յանցաւորներն ու բնաւորութեամբ վիչացած կամ վատ հակումներ ցոյց տուող երեխաները: Տնտեսութեան դպրոցներում մատաղահաս օրիորդները վարժւում են տնային տնտեսութեան վերաբերեալ պարտաւորութիւնների մէջ:

(Ր Ասպնջանոցները Վիսբադենում տղամարդկանց և աղջկանց համար, քրիստոնէական հիւրանոցներ: Առաջին տեսակ ասպնջանոցները շինուած են գլխաւորապէս թափառական բանուորների համար: Գործազուրկ բանուորները անցնում են այս քաղաքից մինչը յաջողը գործ գտնելու համար. այս ասպանջանոցները շինուած են նրանց ոչ միայն գիւրութիւն, ամենաչնչին վճարատրութեամբ քնելու տեղ և ինունդ տալու, այլ և բարոյապէս նրանց վերայ ազդելու նպատակով: Մինչդեռ պանդոկներում նրանք արբեցութեամբ են զբաղւում, այստեղ քարոզ են լսում, հաւաքական աղօթքին մասնակցում և ոգելից խմիչքներ կամ չեն ստանում կամ շատ չափաւոր քանակութեամբ: Փող չունեցողները մէկ կամ երկու օրով աշխատանք են ստանում իրենց ծախսը հոգալու համար, իսկ ճանապարհ ընկնելիս յանձ-

նպատակ են վերցնում հետևեալ իջևաններում ընդունուելու համար: Համարեա ձրի ապրնջականութիւնը և որոշաց ու բարեկամական վերաբերմունքը գրաւում է բանուորներից շատերին: Գերմանիայի բոլոր այդպիսի, քրիստոնէական ապրնջանոցները կապ ունին միմեանց հետ և մի մեծ միութիւն են կազմում:

Աղջկանց ապրնջանոցները նոյն նպատակին են ծառայում ինչ բանուորների համ ապրնջիններին համար: Բացի այս ապրնջանոցներից ընկերութիւն ունի Վիսբադենում «Հայրենիք» անուանով մի հաստատութիւն այն օրիորդների և աղջիկների համար, որոնք քաղաք են գալիս պաշտօն գնելու: Անմեղ աղջիկներին վնասից գայթակղութիւններից ազատելու համար այդ հաստատութիւնն ընդունում և պատսպարում է նրանց, մինչև գործ գտնելը: Հաստատութեան պաշտօնեաները կայարաններում սպասում են և նորեկներին հրաւիրում իրենց մօտ: Այս հաստատութիւնները ունին ընթերցարաններ, դպրոցարաններ, ունին իրանց պարկ և զբաղմունքեան դահլիճը, ուր որոշ ժամանակ միասին զբաղմունք կարող են. այս բոլորի նպատակն է մանաւանդ աղջիկներին սպառնացող գայթակղութիւններից:

Գ) ընկերութեան տներ և ժողովարանները, ուր դասախոսութիւններ, կրօնական նուագահանդէսներ և ամեն տեսակ քրիստոնէական կամ եկեղեցական ժողովներ են լինում: Ընկերութիւն ունի և ողորմած քոյրերի կամ սարկաւագուհիների մի հաստատութիւն, ուր ցանկացողները կրթւում են հիւանդապահութեան պաշտօնի համար՝ համայնքներում կամ հիւանդանոցներում ծառայելու նպատակով:

Դ) Ընկերութիւն ունի իւր թերթերը, «Ողորմած Սամարացի», «Աւետարանական կիրակնօրեայ թերթ» 1854 թուից, շրջիկ գրավաճառների ընկերութիւն 1864 թուից, Հրատարակչական ընկերութիւն 900—1000 անդամով, տալել է իւր գոյութեան օրից 4620000 օրինակ գիրք:

Ե) Կանանց ընկերութիւն, որոնք աշխատող և բանուոր դասակարգի հիւանդներին դիւրութիւններ են տալիս իրենց հաստատութեան մէջ կազդուրուելու:

Կայսրը գնահատելով ընկերութեան ծառայութիւնները իւր տարամատրութեան տակ եղած պահեստի դրամներից 30000 մարկ նուէրը է տուել այս միութեան:

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

ՊԷՏՔ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԵՆՔ

Ա.

Ռուսաց յեղափոխութեան ալիքները հասել են և մեր ժողովրդին։ Կեանքի մէջ հանդէս են եկել նոր գործօններ, նոր կուսակցութիւններ և ուղղութիւններ, որոնք իրենց գաղափարները՝ սխալ թէ ուղիղ՝ աշխատում են տարածել ժողովրդի աւելի լայն խաւերի մէջ։ Մի կենդանի պայքար է սկսուած տապալելու հին կարգերը և այս պայքարը յաճախ մոլեգնութեան հասած՝ օգտակարն ու վնասակարը, սխտանին և անպիտանը ընդունակ չէ միմեանցից զանազանելու։ Յեղափոխութիւնը մաքրում է կեանքի մթնոլորտը, բայց բուռն, անսանձ յեղափոխութիւնը նման է աւերիչ փոթորկին, որ կարկուտ ու անձրև է թափում երկրի վերայ, կատաղի հեղեղներ յառաջացնում իրենց կործանարար հետևանքներով։

Հայ կեանքի մէջ յեղափոխական յորձանքներն իրենց հարուածներն ուղղեցին և՛ մեր եկեղեցու կարգերի դէմ։ Կեդրոնական ժողովը իւր մանուկ ճառախօսներով, իւր օգային ամրոցներով ու նախագծերով բնորոշ արտայայտութիւն էր ժամանակի հիւանդութեան և երիտասարդ սերնդի մէջ հաստատուած խառնակնդոր գաղափարների։ Հայոց եկեղեցին պիտի ղրկուէր իւր կալուածներից, դպրոցներից, քաղաքակրթական կոչումից, և միայն ծիսապաշտական մի հաստատութիւն դառնար՝ ոգէա, արարողութիւնները կատարելու չափ հազիւ ընդունակութիւն ունեցող պաշտօնեաներով։ Այդ ևս մի զիջումն էր խաւար ամբոխին, անհրաժեշտ մի չարիք, որ պէտք էր ականջ տանել։

Բայց այդ մի կողմն էր միայն։ Կեդրոնական ժո-

ղոջը ապացոյց էր մի և նոյն ժամանակ, որ մեր եկեղեցին և հոգևորականութիւնը չատ զգալի կերպով կորցրել է իւր բարոյական հեղինակութիւնը ժողովրդի որոշ խաւերի մէջ։ Այդ ժողոջը անշուշտ անկարող կլինէր իւր համբակ և տաքգլուխ ճառախօսների արտայայտած ծայրայեղ գաղափարներն իրագործել, եթէ նոյն իսկ հնարաւորութիւն ունենար չարունակել իւր նիստերը. անհատականն չէ նաև, որ ղեկատութեան զգացումը սկսէր հետզհետէ փոքր ինչ ամոքել ժողովի ամբողջութիւնը. բայց և այնպէս իբրև երևոյթ չի կորչնում այն իւր պատմական մեծ նշանակութիւնը։ Ինչ որ լրագրութիւնը տարիների ընթացքում ձեռնում էր պատահական կերպով, ընդհատումներով, կեդրոնական ժողովը իւր նախընթաց պարագաներով չատ յայտուն կերպով դրեց ընդհանրութեան առաջ։ Պատմական մի դաս էր այդ, որ երբեք չպէտք է վրիպէ մեր խորին ուշադրութիւնից։ Ինչքան էլ կամենանք լաւատես լինել, ցաւալի իրողութիւնն անտես անել չենք կարող. մեր ժողովրդի որոշ մասերի մէջ հակակրութեան կամ սառն անտարբերութեան զգացում է տիրում դէպի եկեղեցին և հոգևորականութիւնը։ Սրտերն այլ ևս չեն բաբախում եկեղեցու բաղդով և եկեղեցին չի կարողանում ջերմացնել նրանց, ոգևորութիւն ներշնչել այն գաղափարների համար, որի անունով ապրում է ինքը։ Կրօնական կապը խախտուած է նրանց մէջ, բայց թուլանում է նաև ազգայինը։ Կրթուած դասի մի ստուար մասի համար եկեղեցին թանգ էր միայն ազգային տեսակէտով. այլ եկեղեցին է պահպանել և նպաստել ազգային քաղաքակրթութեան զարգացման. նորա հովանաւորութեան տակ պաշտպանութիւն է վայելել մայրենի լեզուն, դպրոցական գործը։ Բայց քաղաքական նոր բերմունքների հետ սկսել է խախտուել և այս կապը։ Կարծում են քաղաքական փոքր ինչ տանելի աղատութեան հետ կվերջանայ և եկեղեցու դերը, առանց նորան կարելի կլինի պահել և զարգացնել մեր քաղաքակրթական ժառանգութիւնները։ Կան խմբեր և շրջաններ, որ շատ աւելի հեռու են գնում.

եկեղեցու գոյութիւնն ու վարդապետութիւնը նոքա միա-
սակայն են քարոզում և խոչնդոտ տնտեսական և քաղա-
քակրթական յառաջադիմութեան։

Բ.

Ժողովրդական որոշ խաւերի սառնութիւնը և ոչ բա-
րեկամական հայեացքը դէպի եկեղեցին առանց պատ-
ճառների չէ անշուշտ։ Եթէ դորա մի պատճառը արտաքին
է՝ օտար քաղաքակրթութեան ազդեցութիւնը, ոչ պակաս
նպաստել է այդ սառնութեան նաև մեր ներքին տկարու-
թիւնն ու ապիկարութիւնը։ Սորա վերան պէտք է աւե-
լացնենք և այն բնական պատճառը, որ ժողովրդական
եկեղեցու մէջ անկարելի է, որ բոլոր անդամները հաւա-
սարապէս հաւատացեալ լինին և սրտով կպած եկեղեցու
հետ։ Այդ հնարաւոր էր միայն քրիստոնէութեան առա-
ջին դարերում, երբ եկեղեցին կազմուած էր փոքրիկ
համայնքներից։ Բայց քրիստոնէութիւնը պետական և ժո-
ղովրդական կրօն դառնալուց յետոյ, հաղարաւոր մարդիկ
եկեղեցու մէջ պիտի մանէին, առանց իսկական մտքով
քրիստոնեայ լինելու։ Ինչպէս պատմութեան ընթացքում,
այնպէս և այժմ, անհնար էր եկեղեցու համար իւր հօտի
բոլոր անդամներին անխտիր մատչելի դարձնել աւետա-
րանի ճշմարտութիւնը։ Հասկանալի է, որ մեր խօսքը այս
տեսակ անտարբերների մասին չէ։ Որքան և ցաւալի լինի
այս իրողութիւնը, բայց մենք կարող ենք հաշտուել այն
տեսակէտով, թէ եկեղեցու փրկարար գործունէութեան
և բարոյական հեղինակութեան առաջ սահպատած կլինին
խոնարհուիլ այդպիսիները և նոյն իսկ մեքենայապէս են-
թարկուիլ նորա բարոյական կարգապահութեան պահանջ-
ներին։ Վտանգաւոր է աւելի առաջին երկու պատճառնե-
րից յառաջացած սառնութիւնն ու անտարբերութիւնը,
որ յաճախ հակակրութեան և թշնամութեան է վերածւում։ Որովհետև մի տեղ ներգործում է գիտակցութիւնը,
լինի այն նոյն իսկ սխալ հիմքերի վերայ հաստատուած
գիտակցութիւն, միւս տեղը դառնութեան զգացումը։

Քաղաքակրթութեան զարդացման էական օրէնքներից մէկը ազգերի փոխադարձ չփումն է, հոգևոր ազդեցութիւնը։ Չկայ ազգային արուեստ, քաղաքակրթութիւն, որ բոլորովին ինքնուրոյն լինի բառացի իմաստով։ Հանճարեղ և հզօր ազգերի քաղաքակրթութիւնն իսկ մեծ կամ փոքր չափով զարկ է ստացել հարևան ազգերից։ Հայ ժողովրդի քաղաքակրթութիւնը, ինչպէս հին ժամանակները, նոյնպէս և այժմ, ենթարկուած է իւր դրացի աւելի մեծ ազգերի ազդեցութեան։ Եւրոպական քաղաքակրթութեան դրական բարիքների հետ իւրացրել ենք և նորա բացասական կողմերը։ Այդ բացասական կողմերից մէկն է հակակրօնական և հակաեկեղեցական տրամադրութիւնը։ Ժ.Ը. և ԺԹ. դարերի նիւթապաշտական մակերութային աշխարհայեցողութիւնը առանց դժուարութեան հաստատուեմ է մեր հասարակութեան որոշ խաւերի մէջ, թէև իւր բուն հայրենիքում՝ վաղուց դատապարտութեան է ենթարկուել։ Սոցիալական շարժումներն էլ դործնականութեան մէջ միացած են նիւթապաշտական հայեացքների հետ, թէև այդ իսկապէս անհրաժեշտութիւն չէ։ Հաւանօրէն հայ բանուորական դասակարդն էլ նոյն ճանապարհով կընթանայ, ինչ որ Եւրոպայում և կսկսի անտարբեր դառնալ դէպի եկեղեցին, եթէ այդ մասին նախօրօք չհոգանք։ Մեր մտաւոր շարժման նորագոյն պատմութեան մէջ, մասնաւորապէս, շատ խոշոր տեղ է բռնում և ուսուցչական ազդի ազդեցութիւնը, բայց տարաբաղդաբար այն սառնութիւնը, նոյն իսկ արհամարհանքը, որ կայ նոյն ազդի կրթուած դասի որոշ մասի մէջ դէպի պրաւոսլաւ եկեղեցին, փո խադրուում է և մեր կեանքի մէջ։

Այս բացասական տրամադրութեան քիչ չէ նպաստել մեր եկեղեցու պաշտօնէութեան և վարչական կազմակերպութեան թուլութիւնը։ Մեր եկեղեցու պաշտօնէութիւնը նոր պայմանների համար պատրաստուած չէր։ Առանց այն էլ սրինաքամ էր եղել իւր հօտի հետ դարաւոր բռնութիւնների և հալածանքների տակ. առեղծագործող և կենսունակ ոյժը պակասել էր նորա մէջ, իսկ միայն

ձեսերով և արարողութիւններով անկարող էր նոր զարթնող մարքին բաւականութիւն տալ։ Եւ այդ ոչ դատապարտելի էր և ոչ զարմանալի։ Ընդհակառակ հիացման արժանի է, որ մեր եկեղեցին կարողացել է պատմական այնքան ձախորդ հանգամանքների մէջ պահպանել իւր դոյութիւնը և որոշ չափով քրիստոնէական ոգի, հասկացողութիւն աւանդել ներկայ սերնդին՝ նախնեաց քաղաքակրթութեան մնացորդների հետ։ Մենք հասկանում ենք նորա ներկայ վիճակը իւր պատճառներով, իսկ այստեղ հասկանալ նշանակում է ներողամիտ լինել։

Բայց իրողութեան առաջ աչքներս փակել չենք կարող։ Մեր եկեղեցին մի տեսակ քայքայման գործողութեան մէջ էր. տգիտութեան, սիմոնականութեան, չհասկանալ և ամուսնալուծական խնդիրների մէջ աչառօտ երեւոյթները պէտք է հետզհետէ նոր զարթնող ժողովրդի աչքում ոչ միայն թուլացնէին հոգևորականութեան և նորա հետ եկեղեցու հեղինակութիւնը, այլ և շատերի մէջ դառնութիւն յառաջ բերէին։ Պէտք էր մտածել նորա վերակազմութեան և վերածնութեան մասին, պէտք էր պատրաստել պաշտօնէութեան մի նոր սերունդ, որ անցեալի աւանդած թանգագին բարիքների հետ պատուաստել կարողանար եւրոպական գիտութիւնն ու քաղաքակրթութիւնը, և ապագայի պայմանների պատճառով թմրած եկեղեցու մէջ նոր ոգի և կեանք ներշնչէր։ Բայց պակասում էր ղեկավարող ձեռքը։ Մատաղ գաղափարները, ինչպէս նորածիլ տունկերը, կարօտ են աւելի խնամքի և հոգատարութեան։ Ընդհակառակ կամայականութիւնն ու անորոշութիւնը, անսկզբունք և պատահականութեան ենթարկուած կառավարութիւնը բոլորովին խախտեց կարգապահութեան և աւանդութեան մնացորդները և խորշակահար եղան նորագոյս սկզբնաւորութիւնները։ Վրայ հասաւ ռուսական յեղափոխութիւնը և մարքերի շփոթութեան և քաոսի մէջ մեր եկեղեցին գարձաւ ծովի ալիքների վերայ պատահականութեան ենթարկուած անղեկ մի նաւ։ Երբեք չի կարելի մոռանալ, որ կեդրոնական ժողովը գումարուած էր

Մայր Աթոռի պարիսպների մէջ, և եթէ այնքան միակողմանի կերպարանք ստացաւ, անժամն չէր այդ գործում և հայ հոգևորականութիւնը։ Դադարեց կեդրոնական ժողովը. բայց այնտեղ արձարձուած գաղափարները չեն դադարել ժողովրդի որոշ խաւերի մէջ գոյութիւն և վարակիչ ազդեցութիւն ունենալ։ Դորա ապացոյցն է մեր դպրոցական և վարչական հաստատութիւնների երերուն, անկերպարան և խռովայոյզ վիճակը, որքան այդ ժողովրդից է կախուած, և մամուլի մի մասի մինչև անմտութեան հասցրած արշաւանքը։

Գ.

Ի՞նչ պէտք է անենք։

Ահա այն հարցը, որ անյրաժեշտաբար դրուած է մեր առաջ և որի համար անտարբեր մնալ չենք կարող։ Մենք սովոր ենք ամեն ինչ Ս. Հայրապետից սպասել, բայց Ս. Հայրապետը ծերացած է, տկար, և իզուր կլինեն այս պայմանների մէջ ամեն ինչ վերևից սպասել։ Ջէ որ ամենքս քահանաներ և վարդապետներ, որբազան առաջնորդներ և եպիսկոպոսներ՝ մեր հոգևոր պետի գործակիցներն ենք և նորա հետ նոյն եկեղեցու պաշտօնեաները։ Հայ հոգևորականութիւնը պէտք է ցոյց տայ, որ մի մեռած դիակ չէ և որ նորա մէջ բոլորովին չէ հանգել Ս. Ներսէսների, Սահակների, Մեսրոպների և Ղևոնդների հոգին։ Մեր առաջ ծաղկեր են և Մխիթարեաններ չկան իրենց զօրքերով կանգնած, որոնք սպառնան մեր կրօնի և եկեղեցու գոյութեան, բայց կայ ոչ պակաս մի վտանգաւոր թշնամի՝ կրօնական անտարբերութեան ոգին, որ հետզհետէ զօրանում է և սպառնում ճաքակել մեր ժողովրդի սիրտը։ Հայ հոգևորականութիւնը պէտք է կազմակերպուի, բայց ոչ քաղաքական նպատակներով կամ այս ու այն քաղաքական կուսակցութիւնների դէմ կռուելու, այլ այն հոգևոր թանգագին բարիքների համար, որ տալիս է մեզ քրիստոնէութիւնը, որ տուել է մեր դարաւոր ազգային եկեղեցին։ Ջուտ քաղաքական լենդիներով եկե-

ղեցին չէ զբաղուում և չպէտք է զբաղուի, բայց անտարբեր մնալ չէ կարող դէպի կեանքի այն երևոյթները, որոնք մեծ կամ փոքր չափով կապ ունին մեր ժողովրդի հոգևոր–քաղաքակրթական զարգացման հետ։ Հօտի կրօնական–բարոյական–քաղաքակրթական յառաջադիմութիւնը եկեղեցու դոյութեան նպատակն է ու կոչումը. եկեղեցին կրթական հաստատութիւն է բառի ամենալայն հասկացողութեամբ, ուստի և օգտւում է այն բոլոր միջոցներից, որոնք ազնուացնում են մարդկային հոգին. դպրոցական և բարեգործական հաստատութիւններ, որքազան արուեստ իւր ճիւղերով, դիտութիւն, գրականութիւն, լրագրութիւն և կենդանի խօսք։ Առանց այս միջոցների հնարաւորութիւն էլ չկայ մարդկային հոգին կրթել, ազնուացնել և առաջնորդել հօտին դէպի այն բարձրագոյն իդէալը, որ մարմնացած է Քիստոսի անձնաւորութեան և վարդապետութեան մէջ։ Պէտք է կազմակերպուինք, որպէս զի մեր կոչման հետ կապուած արքազան պարտաւորութիւնները կատարել, անձնուէր և գիտակցական գործունէութեամբ պաղած սրտերը կրկին ջերմացնել կարողանանք։ Պէտք է սովորենք քրիստոնէութիւնը ժամանակի նոր լեզուով քարոզել և նորա վերայ հիմնել մեր եկեղեցու վերածնութեան արքազան գաղափարը՝ քաղաքակրթական մաքուր և ազնիւ ձգտումներով։ Դէրձը, միայն սիրոյ և անձնուիրութեան զգացմունքից բղխած գործը կարող է նուաճել անտարբեր սրտերը և լուծանել այն խառպոտ երդը, թէ բոլոր կրթական և կուլտուրական հաստատութիւնները պէտք է խլել եկեղեցու և հոգևորականութեան ձեռքից և յանձնել ժողովրդին։ Որպէս թէ եկեղեցին և հոգևորականութիւնը ժողովրդից կտրուած, քսլտուրին տարբեր շահերով գոյութիւն ունեցող հաստատութիւններ լինէին։ Դարերի ընթացքում հայ եկեղեցին իւր պաշտօնէութեամբ ամենասերտ կապերով միացած է եղել իւր հօտի հետ ազգային գաղափարի տանմանների մէջ և մեր ձգտումը պիտի լինի այդ կապերը աւելի ամրացնել, օգտակար և հետևողական գործունէութեամբ։ Բայց դորա հա-

մար պէտք է միացնենք մեր թոյլ և բաժան բաժան ու-ժերը մի և նոյն նպատակի համար։

Ռուսաստանի ազատագրական շարժումը զարթեցրել է ամեն դասակարգի և ուղղութեան մարդկանց, ամենքն աշխատում են կազմակերպուել, իրենց գաղափարները տարածել, միայն հայ հոգևորականութիւնը պէտք է անշարժ մնայ։ Ճանուն քրիստոնէական կենդանարար կրօնի, յանուն մեր ազգային հինաւուրց եկեղեցու և ժողովրդի բարոյական վերածնութեան և քաղաքակրթութեան պէտք է կազմակերպուենք և՛ մենք։ Բայց այդ մասին հետևեալ անգամ։

Գ. վ. Ծովակեան

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ապրիլի 4-ին Մայր տաճարում՝ պատարագից յետոյ հայրապետական մաղթանք կատարուեց Սրբազնագոյն Կաթուղիկոսի ծննդեան 88-րդ տարեդարձի առթիւ։ Պատարագից յետոյ ամբողջ միաբանութիւնը ներկայացաւ Ն. Սրբութեան և ստացաւ նորա հայրական օրհնութիւնը։

Տ. Մատթէոս վարդապետը Ս. Հայրապետի կոնդակով գնաց Նուխի՝ պարզելու դպրոցի մէջ ծագած խռովութիւնների պատճառը, և՝ եթէ հնարաւոր է, հաշտեցնել կռուող կողմերին՝ դպրոցի մէջ խաղաղութիւն հաստատելով։ Բայց Տ. Մատթէոսի ջանքերը ապարդիւն անցան և նա ստիպուած եղաւ Ն. Սրբութեան դիմել՝ փակելու ժամանակաւորապէս դպրոցը։

Տ. Արտակ վարդապետ Սմբատեան նշանակուած է Քիշնեւի Կանսիստորիայի անդամ ժամանակաւորապէս ար-ձակուած տեղական երկու քահանայի փոխարէն։ Վերջին-ներս Կանսիստորիայի քարտուղար պ. Կ. Օհանջանեանի հետ ենթարկուեցան պատասխանատուութեան, Սինոդի ան-դամ Տ. Յուսիկ վարդապետի կողմից, որ քննիչ էր նշա-նակուած, դրամական զեղծումների և յափշտակութիւն-ների մէջ մեղադրելով։

Մի քանի օրով Մայր Աթոռ էին եկել Հին Նախի-ջևանի յաջորդ Տ. Լևոն և Բագուի գործակալ Տ. Զաւէն վարդապետները. առաջինը իւր փոխանորդութեան վե-րաբերեալ գործերով, իսկ երկրորդը՝ Սրբալոյս Միւռոն տանելու։

Մայր Աթոռ վերադարձան Տ. Տ. Եղիա, Յուսիկ և Գարեգին վարդապետները։ Յուսիկ վարդապետը Վեհա-փառ Հայրապետի կոնդակով Նպաստամատոյց Յանձնա-ժողովի խնդիրքով ուղարկուած էր Ռուսաստանի հայաբնակ քաղաքները պ. պ. Հ. Առաքելեանի և Ա. Արտախանեանի հետ մեր սովատանջ և հայ–թուրքական ընդհարումների պատճառով աղքատացած ժողովրդի համար ժողովարա-րութիւն անելու։ Իւր այս առաքելութիւնը կատարելուց յետոյ՝ անցել էր Քիշնեւ՝ Սինոդի յանձնարարութեամբ այնտեղի Կոնսիստորիայի գործերը քննելու և էջմիածնա-պատկան կալուածների վիճակը ուսումնասիրելու մասնա-գէտների խորհրդակցութեամբ։ Իսկ Գարեգին վարդա-պետը մեծ պատի ընթացքում քարոզում էր Տփխիսի Վանքի մայր եկեղեցում։

Տ. Մատթէոս վարդապետ ընտրուած և հաստա-տուած է Ալեքսանդրապոլի փոխանորդ։ Բարձրապատիւ Հայրը Զատկի տօներից յետոյ գնաց իւր պաշտօնատեղին։

Զատկի տօնի առթիւ Մայր Աթոռի միաբանութիւնը ներկայացաւ Ն. Սրբութեան և շնորհաւորեց յարութեան տօնը։ Երեւանից նոյն նպատակով Մայր Աթոռ էր եկել Գերապատիւ Տ. Յուսիկ Արքեպիսկոպոս Հոդաբարձութեան մի քանի անդամների հետ։

Զատկի արձակուրդներին Մայր Աթոռ էին եկել մի խումբ հայ նկարիչներ՝ պ. պ. Թեոդեմէդեան, Եղիշէ Թադէոսեան և Շարբաբլեան, հնաոյր և լուսանկարիչ պ. Լերինակու հետ, հնութիւններ և մանրանկարներ ընդօրինակելու և լուսանկարելու համար։

Ապրիլի 27-ին Վեհափառ Հայրապետը ճանապարհ ընկաւ դէպի Տփխիս։ Ամբողջ միաբանութիւնը Վեհարանում Ն. Սրբութեան աջը համբուրելուց և բարի ճանապարհ մաղթելուց յետոյ՝ ուղեկցեց նորան պարիսպներից դուրս՝ մինչև կառք նստելը։ Հաւաքուած էր ժողովրդի բաւական բազմութիւն։ Ն. Սրբութեան ուղեկցում էին Տ. Տ. Ղևոնդ եպիսկոպոս և Մեսրոպ, Մխիթար, Ներսէս և Մեսրոպ Մագաղեան վարդապետները։ Նորին Սրբութիւնը ժամանել է Տփխիս, նոյն ամսի 28-ին, իսկ 30-ին այցելութեան է գնացել Տ. Փոխարքային։ Ն. Պայծառափայլութիւնը մի ժամից յետոյ իւր ընտանիքի և դեներալ դուբերնատորի հետ փոխայցելութեան է եկել Ս. Հայրապետին։

Այս տարի Ձեմարանի մանագիտական բաժինն աւարտեցին 17 հոգի. դոցանից չորսը Բ. լսարանցիք էին, որոնք իրաւունք էին ստացել Գ. լսարանցիների հետ վերջնական քննութիւն բռնելու։ Նորաւարտները Ապրիլի 29-ին հոգևհանգիստ կատարել տուին Ձեմարանի հիմնադիր Գէորգ Դ. կաթուղիկոսի դերեզմանի վերայ, և նոյանից մէկը՝ Բէպապճեան Գրիգոր՝ երախտագիտական մի ճառ կարդաց։

ՏԱՃԱՀԱՅՔ

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը ս. Պատրիարք Հօր ուղղած պաշտօնագրով մը կներկայացնէ իր առաջարկները՝ Մայր Աթոռոյ և Պոլսոյ և Պատրիարքութեան հետ Կիլիկիոյ կաթողիկոսութեան յարաբերութեանց մասին: Ս. Կաթողիկոսը կառաջարկէ որ իր ձեռնադրած եպիսկոպոսները կատարեալ իրաւասութիւն ունենան պաշտօնավարելու Էջմիածնայ և Պոլսոյ Պատրիարքութեան թեմերուն մէջ, և ի հակադարձաբար, որովհետև ինք իրը կաթողիկոս նոյն իրաւասութեամբ կձեռնադրէ եպիսկոպոս, ինչ իրաւասութեամբ որ կձեռնադրէ Ս. Հայրապետն և երկուքին ձեռնադրածներն ալ միևնոյն են, կըսէ: Ս. Կաթողիկոսն անհրաժեշտ չի համարիր եպիսկոպոսական ձեռնադրութեան, նաև Միւռոնի օրհնութեան առթիւ որ և է հրահանգ ստանալ: Կառաջարկէ նաև որ իր անունն Ընդհ. Հայրապետին անունէն վերջ յիշատակուի պատարագի ատեն, Էջմիածնայ և Պոլսոյ պատրիարքութեան բոլոր թեմերուն մէջ, քանի որ կառաջարկուի իրեն Ս. Հայրապետին անունը յիշել Կիլիկիոյ թեմերուն մէջ: Ս. Կաթողիկոսը կառաջարկէ որ Պատրիարքարանի և Ազգ. Կեդր. Վարչութեան կողմէ իրեն տրուած «Ամենապատիւ» տիտղոսը վերապահուի Երուսաղէմի և Պոլսոյ Ս. Պատրիարքներուն, նաև հրաժարեալ Պատրիարքներուն, որովհետև, կըսէ, այդ տիտղոսը Պատրիարքաց յատուկ է և ինք Կաթողիկոս մ'է: Կյայտնէ որ Պոլիս գտնուած ժամանակ Պատրիարքարանի կողմէ խոստումներ եղան իրեն վանքին նիւթական և բարոյական զարգացման մասին, ուսկի կխնդրէ որ այդ խոստումները լիովին գործադրուին: Ս. Կաթողիկոսը կըսէ որ թէև յարաբերական խնդիրներու համար կողմէ Պատրիարքարան, սակայն, իրերու ընթացքով, ազատ կզգայ ինքզինքն հարկ եղած ատեն առանց Պատրիարքարանի միջնորդութեան ուղղակի դիմումներով վարել իր թեմին եկեղեցական-վարչական խնդիրները: Ապա ծաղովոյ նկատառման յանձնուած ըլլալով այս պաշտօնագիրը, իր երեկի նստին մէջ նկատելով որ յառաջագոյն այս մասին վարչական ծրագիր մը պատրաստուած և հաղորդուած է Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին, Ս. Պատրիարք Հօր յանձնեց բանակցիլ Ս. Կաթողիկոսին հետ նոյն ծրագրին հիմանց վրայ, և կարևորն առաջարկել ի հարկին Ազգ. Կեդր. Վարչութեան:

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը վեռապրալի երկրորդ շաբթուն այցելելով Զոք-Մերգմէն, տեղւոյն եկեղեցիին մէջ հանդիսաւոր պատարագ մատուցեր ու քարոզ խօսեր է երկսեռ հաւատացեալներու խուռն բազմութեան մը ներկայութեան: Տեղւոյն աղգայիններըը որոշեր են իրենց վարժարանին իրը հաստութիւնը կալուած բաղնիք մը շինել 600 ոսկի ծախքով, որուն 400 ոսկին պատրաստ է արդէն: Տ. Տ. Սահակ Ս. Կաթողիկոս վեռապրալ 13-ին, իր հետևորդ վարդապետներով, այցելեր է Օճագլըի, Էօզէրլիի և վարի թաղի եկեղեցիները. նաև գիւղին վերևը գտնուող գերեզմանատունը, ուր տեղական սովորութեան մը համեմատ, տօնավաճառ կազմուած էր: Իր այս այցելութեանը առթիւ, Ս. Կաթողիկոսը ծագկեայ փիլոն կրելու արտօնութիւն շնորհեր է Զոք-Մերգմէնի Տ. Մեսրոպ քահանային և վեռապրալ 15-ին վերադարձեր է Սիս:

—

Սիսեցի լուրեր. Երէկ ծանուցինք Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին հովուական այցելութիւնն ի Զոք-Մերգմէն ու շրջակաները: Ս. Կաթողիկոսին Սիս վերադարձին առթիւ հետևեալ տեղեկութիւնները կը ստանանք այս առաւօտ.—«Փետր. 20-ին, Ս. Կաթողիկոսը մայրավանք վերադարձաւ. մեաբաններէն Տ. Հրանտ, Տ. Մկրտիչ և Տ. Կիրակոս վարդապետները ու ծանօթ աշխատասիրանները, ինչպէս նաև ազգ. ու ժառանգաւորաց վարժարանի աշակերտներն ու ժողովրդեան խուռն բազմութիւն ընդառաջ գացին դիմաւորելու: Փետր 24-ին, Ս. Սահակ Պարթևի տօնին առթիւ, մայրավանքի տաճարին մէջ պատարագ մատոյց Տ. Գևորգ վրդ.: Եկեղեցական արարողութիւններէն ետք, Տ. Տ. Սահակ Ս. Կաթողիկոս՝ իր անուան տօնախմբութեան առթիւ՝ ընդունեց շնորհաւորական այցելութիւնները՝ կառավարիչ Վահէ Մուհտրըէմ փաշայի, կառավարական պաշտօնատուներու, ծանօթ ազգայիններու, ինչպէս Հայ Հռոմէականաց ու Հայ Բողոքական եղեռելիներու: Մխիթարեան, ազգ. ու ժառանգաւորաց վարժարաններու ուսանողներուն և Հոգաբարձութեան կողմէ ուղերձներ կարդացուեցան: Ս. Կաթողիկոսը, այս առթիւ, շնորհաւորական հեռագիրներ ստացաւ էջմիածնէն՝ Ս. Հայրապետէն և Կ. Պոլսոյ ու երուսաղէմի Ս. Պատրիարքներէն, ինչպէս նաև Կիլիկիոյ թեմերու հոգևոր հովիւներէն:

«Նոյն երեկոյին վանքի ժառանգաւորաց վարժարանին տեսուչ Տ. Գարեգին վրդ. Խաչատուրեանի նախաձեռնութեամբ՝ հրօնային-ղրական երեկոյթ մը սարքուեցաւ, ուր մասերմական

հանդամանք մը ունէր. կը նախադահէր Ս. Կաթողիկոսը և ներկայ էին միաբան հայրերը. հանդէսը բացուեցաւ Տ. Գարեգին վարդապետի մէկ հակիրճ բանախօսութեամբ և շարականով մը: Երեկոյթը կը բաղկանար կրօնային-գրական արտասանութիւններէ, որոնք կընդհատուէին երգերով: Սոյն գրական հանդէսը որ մօտաւորապէս երեք ժամ տևեց, վակուեցաւ Ն. Ս. Օծութեան մէկ բանախօսութեամբը, որով օրուան կրօնային տօնը բացատրելէ վերջ, մասնաւորը չնորհակալութիւնները յայտնեց Տ. Գարեգին վարդապետին, որու անխոնջ ու անձնուէր պոհողութեանց չնորհիւ ժառանգաւորաց վարժարանը նախանձելի դիրք մը ունի այժմ, նաև ուսուցչական մարմնոյ և միաբանութեան, որ միշտ համակիր ղեկացումներ կը տածէ վարժարանի յառաջդիմութեան ու վանքի նիւթական բարւոյն ու բարելաւման նկատմամբ:

—

Անկնքէն Փետր. 25 թուականաւ կզրեն թէ տեղւոյն մատեան հոգաբարձութիւնը նկատելով որ ժողովուրդը չի կրնար քահանային թոշակին և մատեան 4,000 ֆրանկի պարտքն և կամ անոր տոկոսն հայթայթել, վակեց մատուռը, մինչև որ կարող ըլլայ անոր պարտքն հատուցանել: Այս առթիւ խնդրած է Պատրիարքարանէն որ տեղւոյն հոգևոր հովիւ Տ. Դաւիթ քահանային յարմար պաշտօնատեղի մը ցոյց տրուի. այսպիսի խնդիրք մ'ալ չլսեցած քահանան ըրած է, մէջ բերելով բազմանդամ ընտանիքի մը տէր ըլլալը:

—

Պարիզի մէջ մեռած պրն. Անդրանիկ Իօնատքուի կտակին վրայ նոր և վաւերական լուրերու նայելով, կտակով որը և անոր տղաքներու թողած է իր կէս միլիոն ֆրանքէ աւելի հարստութիւնը: Գումարին մէկ մասը պատրաստ արժեթուղթեր են, պահուած Օաեսայի արքունի գրամատան մէջ, մէկ մասն ալ տոկոսով տրուած վոխատուութեան, վոխառէնն ստանալով իբրև աւանդ՝ նոյն անձերուն անշարժ կալուածները, որոնք ծախու հանուած են և ամուրդի պայմանաժամն ալ լրացած է: Այս գործերը վարելու համար Ոուսաստանի մէջ փաստաբան մը վարձած է, որ գործին կհետապնդէ: Նաև կիմդրու մեծահատոր աշխատութիւն մը, արդիւնք երեսուն տարուան տքնութեան, բայց դժբախտաբար դեռ կիսատ: Այս գործին շարունակութիւնն ու հրատարակութեան բոլոր աշխատութիւնն յանձնարարած է ձեռնհաս բանասէրի մը, որ տպագրելի առաջին մասն իր քովն ունի և իր սրբագրութեամբ ու հսկողութեան տակ

պիտի հրատարակուին բոլոր մասերն ալ։ Գործը ճաքռնեբէնի և հայերէնների համեմատութիւնը չէ միայն, այլ բոլոր կենդանի և մեռեալ լեզուներու համեմատութիւնն հայերէնի հետ, որ կը-կարծուի թէ նոր դուռ մը պիտի բանայ լեզուաքանութեան քաոսէն դէպի լոյս աշխարհ։ Տպագրութեան համար 158,000 ֆրանք դրած է Բրետի Լիոնէլ մէջ, և խնդրած է Ս. Պատրիարքէն, որ այդ գումարն իր գործին շարունակութեան և տպագրութեան միայն պէտք է յատկացնել։ Միայն թէ ցաւալի է որ քոյր, քեռորդի, ևլն. ունենալով հանդերձ՝ բան մը չէ ձգած անոնց։ Հանգուցեալն «հեռաւոր» ազգական չունի, այլ շատ մօտաւոր մէկը, քոյր մը, որ այրի է և կենակից Պոլիս։ Հիմա քոյրը միջոցներ ձեռք առեր է կտակը ջնջել տալու և անվաւեր հռչակելու համար։

—

Բահանայական հաւաքոյթ յօրելեան մը տօնուեցաւ երէկ։ Մայր եկեղեցւոյ աւագերէց և Կրօն. ժողովի անդամ Տ. Միքայէլ Ա. քահ. Աչճեան իր քահանայութեան քսանհինգամեակը կը լրացնէր և այս առթիւ ճաշկեայ վիլլան կրելու արտօնութիւն կը տանար Ս. Պատրիարք Հօրմէն։ Տ. Միքայէլ Հայրը ընդունեց եկեղեցականներու և աշխարհականներու շնորհաւորութիւնները։

—

Թուլչայի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ երէց՝ Տ. Ղևոնդ քահ. Փափազեան ակսած է տպագրել Աւետարանի Առակներուն մեկնութիւնը, գործ՝ իր շատ մը մեկնութիւններով ճանօթ Պետրոս արքեպիսկոպոս Ադամեանի Պերթամեանցի, գրաբար շարադրութեամբ։ Տ. Ղևոնդ քահանայի սոյն հայերէն տպագրութեան մէջ ցոյց տուած գեղարուեստական ճաշակը գնահատուած է անցեալ տարի Պոլքէշի մէջ տարբուած Ռումանական Արուեստահանդէսին Գնահատիչ Յանձնախումբին կողմէ և արժանացած է արծաթ մետալի։

—

Թեքիրտաղի և Վանայ Առաջն. Տեղապահները Տ. Արիստակէս Սրբազան և Տ. Ներսէս Ծ. վարդ. Ներկայացան Ժողովին և իրենց հրաժեշտի ողջոյնը մատուցին և շնորհակալութիւն յայտնեցին այն վստահութեան համար՝ որով Ազգ. Կեդր. Վարչութիւնը պատուած էր զիրենք յանձնելով այս կարևոր պաշտօնները և խնդրեցին Ազգ. Վարչութեան Աջակցութիւնը։ Ժողովը յայտնեց թէ Վարչութեան աջակցութիւնը ապահովուած կրնան նկատել և թէ յուսալից են որ իրենք ևս պիտի կատարեն անթերի իրենց պարտականութիւնը։

Կրօնական ժողովը եկեղեց. երգեցողութեանց Քննիչ Յանձնաժողով մը կազմած էր 4 քահանաներէ և 4 աշխարհականներէ, Ս. Պատրիարքը Հոր առաջարկին համաձայն, այս ժողովի անդամներուն վրայ աւելցած են նաև ուրիշ երկու արուեստագէտ երաժիշտներ՝ Յարութիւն էֆ. Սինանեան և Աւետիս էֆ. Խոյատանճեան: Կրօն. ժողովոյ այս որոշումը մանաւանդ գոհունակութեան արժանի է, որովհետև այժմ արևելեան և եւրոպական երաժշտութեան կատարելապէս հմուտ անձերէ յանձնաժողով մը կազմուեցաւ այսպէսով, որոնք կը յուսանք թէ մեծապէս պիտի նպաստեն մեր եկեղեցական երգեցողութեանց կանոնաւորման:

—

Աւտաճի Խպրեվաճիր. Ուսեալ և ամուրի հղերականները պատրաստելու համար ամենէն կարևոր Հաստատութիւնն է Արմաշի Վարժեվանքը, որուն նման կամ հաւասար կրօնական-ուսումնական հաստատութիւն մը ո՛չ երուսաղէմ և ո՛չ ալ Սիոնի: Արմաշեան վարդապետները այժմ թէ թեմերու մէջ երբ առաջնորդ կամ տեղապահ, և թէ մայրաքաղաքիս մէջ երբ քարոզիչ և Պատրիարքարանի ժողովի անդամ ու եկեղեցական պաշտօնեայ ըլլալու և գրչով կարևոր աշխատութիւնները կը կատարեն:

Արմաշի պէս կարևոր վանական-ուսումնական Հաստատութիւն մը Ս. Պատրիարք Հոր և եղիշէ եպս. Դուրեանի վերատեսչութեան ժամանակ շատ փայլուն շրջան մը անցուցած է: Այժմեան վոխ-վանահայրը իր նախորդներուն ուսումնական կարողութիւնը չունի, բայց վանական-տնտեսական լանդիշնեռու կարգադրութեան նկատմամբ անոնց կրնայ հասնիլ փոքա-ռութեամբ: Տ. Թորգոմ վրդ. աւելի յարմար է առաջնորդութեան քան վանահայրութեան:

Արմաշի վանքին և անոր շուրջ գտնուող վանական շէնքերուն մէջ պատսպարեալներուն թիւը այժմ 74 հոգիի կը հասնի: Առնցմէ 7-ը միաբան վարդապետներ են:

Տ. Թորգոմ Ծ. վ. Դուշակեան, վոխ-վանահայր և վերատեսուչ:

Տ. Մեսրոպ վրդ. Նարոյեան, Տեսուչ ուսումնարանի: Պարտաճանաչ, ջանասէր և ուսումնական վարդապետ մը, յայտնի արդէն իր գրական «Հարմակ» անունով: Տ. Մեսրոպ վրդ. ամենէն աւելի անհրաժեշտ է ուսումնարանի համար:

Տ. Շաւարշ վրդ. Սահակեան, օգնական-տեսուչ. ընդունակ և խոստմնալից երիտասարդ վարդապետ մը:

Տ. Պատկ վրդ. Տ. Խոքէնեան, միաբան–ուսուցիչ։

Արմաշի վանքին մէջ բոլոր պատապարեալները պահելու, վարժարանի և վանական կալուածներու ամբողջ ծախքերը հոգալու Դպրեվանուց Խնամակալութիւնը ամսական 6,500 ղրշ. դրամ կը ղրկէ փոխ–վանահօր։ Խնամակալութեան կողմէ ուրեմն տարեկան 78,000 ղրշ. կը ղրկուի Արմաշ։ Բացի այս ամսական դրամական նպաստէն, փոխ–վանահօր տրամադրութեան ներքև դրուած են նաև վանական կալուածներու հասոյթները, որոնցմէ ամենէն կարևորն է 1. ջաղացքը, որ վանքին տարեկան կը հայթայթէ, 2. վանքին մշակելի հողերը, որ գիւղացիներէն կը վարձուին տեղական հացահատիկ տրուելով, 3. վանքապատկան անտառը, ուսկից վանքին անհրաժեշտ եղած վառելիքի նիւթերը (փայտ, ածուխ) շէնքերու համար դեռան ու տախտակ կը հայթայթուի, 4. վանքի այգին ու բանջարանոցը, ուսկից միաբանութեան և աշակերտաց սեղանի խաղող, կեռաս, բանջարեղէն կը մատակարարուի, 5. վանքին ոչխարի հօտը, որ մսեղէնի և կաթնեղէնի պիտոյքները կը դոհացնէ։

Արմաշի վանքին դրամական հասոյթներու գլխաւորը աղքիւրներն են ուխտաւորութիւնը, որմէ մայիսին, յունիսին և սեպտեմբերին առնուազն 600—650 ոսկի կը գոյանայ, և շերամապահութիւնը, որմէ յաջող տարիներ մօտաւորապէս 150—200 ոսկիի դումար մը շահ կը մնայ։ Փարաքէօմբեւիի եկեղեցին կամ «պզտիկ Արմաշ» նշանաւելի արդիւնք մը չի բերեր վանքին։ Այս հաշիւներէն կերևայ որ ուխտաւորութեան և շերեմապահութեան յաջող տարիներու մէջ Արմաշի խնամակալութիւնը բացառիկ ծախք մը ընելու հարկին ներքև չի գտնուիր։ Մինչև այժմ Արմաշի պիտոյքին պակսող գումարները բարեհոգաբար վճարած են հանգուցեալ Աբրիկ էֆ. և եղբայրը՝ Մաթուս էֆ. Ունճեան։ Տասը տարիէ ի վեր Արմաշի ծախքերուն մասնահաշիւ մը կազմուած չէ. ինչպէս կը լսենք Ս. Պատրիարքը Հայրը տասնամեայ մասնահաշիւ մը պատրաստելու վրայ է այժմ։ Ուսեալ, բարեկիրթ և պարտաճանաչ կրօնաւորներ պատրաստելու համար այժմ բոլոր քրիստոնէական եկեղեցիները մեծ ջանքեր կ'ընեն։

Յոյները Եւբկի վարժարանը բարձրացնելու համար ջանք չեն խնայեր. կաթոլիկ և բողոքական համայնքներ մեծ գումարներ կը ծախսեն նոյն նպատակով։ Արմաշը առ այժմ միակ դպրեվանքն է, ուսկից ուսեալ կղերականներ կը պատրաստենք։ Եղած ծախքերը որքան ալ խոշոր երևնան, դեռ լիապէս չեն դոհացներ օրինակելի դպրեվանքի համար անհրաժեշտ եղող պի-

տոյքները: Այսքան դժուարներէ ծանօթ ըլլալէն ետքը՝ կրնա՞ւ ոնչինք յուսալու, որ Ամերիկեան վարդապետները իրենց եկեղեցականի վայել համեստ կեանքով աւելի կը սիրցնեն այդ հասարակութիւնը:

—

Երկնակայէն կը գրեն. «Վիճակիս Առաջնորդ Հոր բանիցուն գործունէութեան շնորհիւ՝ Առաջնորդարանի բոլոր ժողովներն ալ կազմակերպուեցան: Փաղ. ժողովը ամէն շաբաթ իր նիստը կը դումարէ կանոնաւորապէս. Ուսումնական Խորհուրդն ալ, որ քաղաքացիներուն ամէնէն զարգացած դասէն ընտրուած մարմին մըն է, լրջօրէն ձեռք առած է վարժարաններուն անկեալ վիճակին բարւոքման խնդիրը: Առաջնորդարանին սլուտճէն որ մինչև յարդ անսասդ վիճակ մը ունէր, գրեթէ կանոնաւոր ձև մը առնելու ճամբուն մէջ է:

—

Ս. Պատրիարք Հայրը, շաբաթ միջօրէին, Ազգ. Հիւանդանոց երթալով, նախ և առաջ այցելեց մանչերու Արհեստարանը—Որբանոցն ի Գաղլը—Ձեշմէ և մանրամասնաբար աչքէ անցուց այդ Հաստատութեան ներքին վիճակը: Անցեալ տարի, աշակերտներուն թիւը 170 էր, մինչև այժմ բարձրացած է 220-ի: Արհեստանոցին սանները ամենէն աւելի չաջողակ են վայել վրայ քանդակագործութեան և թիթեղագործութեան ճիւղերուն մէջ, և կարևոր ապսպրանքներ կըլլան քանդակագործական կահերու, թիթեղեայ լոգարաններու և զանազան առարկաներու. ընդհակառակը, դերձակութիւնը և կօշկակարութիւնը անկեալ վիճակ մը առած են Արհեստանոցին մէջ և չանձնարարութիւնները շատ ցանցառ: Ս. Պատրիարքը օրհնելով ու քաջալերելով սաներն ու ուսուցիչները, գնաց Հիւանդանոց և այցելեց աղջկանց Որբանոցը, որուն սանուհիներուն թիւը կը հասնի 130-ի. այնպէս որ, երկսեռ սաներուն թիւը վերջին մէկ տարուան մէջ բարձրացած է 300-էն 350-ի:

—

12,000 ոսկիի կտակը. Երկու ամիս առաջ գրեցինք որ 12,000 ոսկիի կտակ մը եղած է Ազգ. Հիւանդանոցին եւ բոպաբնակ աղդայինի մը կողմէ: Այժմ կրնանք ծանուցանել թէ այս կտակն ընողն է Բարիզաբնակ Տիկ. Թագուհը վիսչա, դուստր Պետրոս ամիրայ Խորասանճեանի և քոյր Հանգուցեալ Տոքթ. Խորասանճեան էֆ.ի: Բարեպարուհին մարտ 9-ին հրաւիրելով Բարիզի հոգևոր հովիւ Տ. Վռամշապուհ Ա. քհնյ. Փիլաբեանը, վաւերացնել տուած է կտակն և այնտեղ գտնուող Տեառք

Սպարթալեան, Մաքսուտ Ս. Մաքսուտեան և Միքայէլ Յարութիւնեան իբր վկայ ստորագրած են։ Այս կտակուած գումարով Բերայի մեծ պողոտային վրայ տուներ պիտի շինուին և անոնց վարձքը իր կենդանութեան պիտի ստանայ բարերարուհի տիկինը, և յետոյ պիտի յատկացուի Ազգ. Հիւանդանոցին։ Կտակագիրը պատրիարքարան ղրկուած է, պաշտօնական գործողութիւնները կատարուելու համար։ Տիկին Թագուհը վիշտ իր ամուսնոյն մահէն վերջ ամուսնացաւ անգլիացի հարուստ ազնուականի հետ, ուրկէ մեծ հարստութիւն մը ժառանգեց։ Իր նախորդ ամուսնէն ունի մանչ գաւակ մը Պօղոս պէյ։ Ս. Պատրիարք Հայրն օրհնութեան դիր մը ղրկեց որուն պատասխանեց բարերարուհի Տիկինը շնորհակալութիւն յայտնելով։

ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ

Սուրիաս Եպիսկոպոսի ի Սանկտ-Պետերբուրգ Հայոց դպրոցների մասին (1885 ամի).

Բ.

Դեռ ևս չձեռնարկած արձանագրելու այն իրողութիւնները՝ որոնք յանձնառու եղանք դպրոցական մասին, դարձեալ անհրաժեշտ կարևոր ենք համարում դնել այս տեղ բառ առ բառ գերապատիւ Ներսէս արքեպիսկոպոսի յանուն մեր ի 27 հոկտեմբերի և ի 29 նոյեմբերի արձակած նամակները. որպէս զի ակն յայտնի նշմարուի գործոյն ստիպողականութիւն հանդերձ արտաքին հրահանգներով լուծ որոց ամենակարևոր էր դատուում յատուկ մարդ ուղարկել Սանկտ Պետերբուրգ։ Այս օրերում ստանում ենք հրահանգող նամակները և Տիխխիսց պարոն Միմէոնեանցից գրուած՝ որով նա զմեզ ապահովում է թէ՝ կայսերական մայրաքաղաքում պատրաստ են արդէն հարցի յաջողութեան օգնել խորհրդով և գործով ինչպէս նոքին

դերապանցութիւն Կարապետ Եպրութիւնեան Եզեանց, մեծապատիւ Մկրտիչ Սարգսեան Սանասարեանց, պայծառափայլ իշխան Սիմէոն Դաւթեան Աբամելիք–Լազարեանց, բարձր գերազանց Նախարար լուսաւորութեան Ծովհաննէս Դաւթեան Դիլիջանով և այլք, նոյնպէս և Տփխիսէն անձամբ նոյն տեղը հասնող պարոն Դէորդ Եւանգուլեանց. և թէ առաջինների անուամբ ծանօթ մարդկանցից մեր մասին արդէն յանձնարարական գրութիւնք ևս եղած են։

«Գերապատիւ Սրբազան Հայր։ Օր աւուր բղխէ ղբան» «մարգարէն լաւ է ասել. իսկ այսօրուայ մեր անգլուխ «կառավարութեան համար չատ յարմար է գալիս։ Թօփքս «դարձեալ ուսումնարանաց նոր կանոնների մասին է, ըի «այս օրերս սատայանք Դանդուկով–Կորսակովից մեր թղթի «պատասխանը, որով կրկին անգամ ապառնալեօք գրում է «կատարել իւր հրամանը, և մինչև նոյեմբերի 10–ն լրեն «տեղեկութիւն հաղորդել։ Տփխիսից ինձ գրում են՝ որ «երբ իշխանն ընդունում է մեր գրութիւնը, մեծ զայրոյթ «է զգում, և նախ քան նախարարին ուղարկելը մեր գրու«թիւնը՝ խորհուրդ է հրաւիրել իւր մօտ և կարծիք է «յայտնել, անյապաղ նախարարից լուծումն խնդրել մոյնե«լու նոր կանոնների գործադրութիւնն առանց հոգևոր «իշխանութեանը դիմելու։ Բայց այդ կարծիքը չէ ընդու«նուել՝ խիստ համարուելով. յետոյ առաջակել է՝ որ իբր «նախարարին գրել, որ յարգուի Սինոդի խնդիրը, այդ էլ «չէ ընդունուել։ Վերջ ի վերջոյ ասում են՝ որ մեր թուղթն «արդէն մի շաբաթ է՝ որ ուղարկել են Նախարարին, և «ինչպէս երևում է՝ դեռ չսպասած նորանից պատասխան «ստանալուն, Սինոդին՝ շիտթայնելու դիտմամբ երևի, «գրում է փութով կատարել և մինչև նոյեմբերի 10-ն «իրեն տեղեկութիւն տալ։ Տակաւին այս թղթի վերայ «մտածում ենք թէ՝ ինչ պատասխանենք, ոմանք ասում «են՝ որ ամենևին չպատասխանենք. ոմանք՝ թէ նոյն պա«տասխանը կրկնենք, ինչ որ մինչև հիմա գրել ենք. ոմանք՝ «թէ հրաժարական տանք պաշտօնից, այսպէս ոչինչ եզրա«կացութեան եկած չենք։ Մի բան աւելի յարմար համա-

«ըեցինք՝ որ վիաբանութիւնը պատրաստէ մի գրութիւն «յանուն Սինոդի, յորում յիշելով Կաթողիկոսական իրա- «ւունքները և ժամանակի կառավարութեան ուսումնարա- «նաց մասին պահանջը՝ պարտք դնէ Սինոդի վերայ չդիպ- «չել այն նուիրական իրաւունքներին՝ որոնք միայն Կաթո- «ղիկոսներին են պատկանում, և այն թուղթը Սինոդն «իբրև ընդհանուր հոգևորականութեան ձայն ընդունելով՝ «ուղարկէ կառավարութեան ասելով ի միջի այլոց թէ՝ «ահա ընդհանուր Հայոց հոգևորականութիւնն ևս մեզ «վերայ պարտք է դնում չդիպչենք Կաթողիկոսական «իրաւանց. գուցէ մի ժամանակ ևս այսպիսով ընթա- «նանք — մինչև ընարութեան ժամանակները։ Զգիտեմ, «այդքան յիշած մարքերից ո՞րն աւելի Ձեզ յարմար թուի. «և Դուք ի՞նչ կարևոր խորհուրդ կտաք մեզ այս մասին. «ինդրեմ չուտով հաղորդեք, որպէս զի ըստ այնմ վա- «րուինք մենք։ Թէ և կասկածում ենք՝ որ պրոկուրորը «գուցէ մեզ բաժանէ միմեանցից և մի կամ երկու հոգի «իրան կողմ դարձնէ, սակայն այդ ևս մեզ չէ կարող «վնասեցնել, դարձեալ բազմութեամբ ձայնի կանենք ինչ «որ հարկաւորն է. բայց ի հարկէ ցանկալի էր կասկա- «ծանքներս միայն կասկած մնար և իրականութիւն չտա- «նար։ Ժամանք այժմէն հրաժարական տալը վաղ են համա- «րում ասելով՝ որ քանի կարելի է գործել՝ փախուստ «տալ հարկաւոր չէ։ Ամօթ և նախատինք նոցա երեսնե- «ներին՝ որոնք այսօրուայ վիճակին հասցրին մեզ, եթէ «լինէր մի գլուխ, այդքան մտածմունքը այսօր աւելորդ «էր. բայց ինչ արած, անցածն անցած է»։

«Սրբազան Հայր։ Գերապատուութեանդ գրած նոյեմ- «բերի 11 թուականաւ պատուական նամակը ստացայ «ամենայն յարգանօք, որուն կխուեմամ պատասխանել։ «Ուսումնարանական հարցը օրուայ խնդիր է դարձած մեզ «համար. անդադար գրագրութեան մէջ ենք Տփխիսի բա- «րեկամաց հետ։ Երեկեան օրն ստացանք նամակներ՝ որ «Դոնդուկովը վերջապէս համոզուել է մեր գրածի վերայ՝ «թէ Սինոդը ստորադրեալ լինելով վախում է Կաթողիկո-

«սից, հետևաբար այնպէս պէտք է վարուի այս գործում՝ «ինչպէս որ գրում է. ուրեմն կինայ՝ որ գործը յանձնենք «Նախարարի վճռահատութեան, այսպէս է մտածել իշ- «խանը։ Այժմ մեր բարեկամները չատ կարևոր են հա- «մարում՝ որ մարդ դնայ Ս. Պետերբուրգ, ուր և կլինի «Դոնգուկով իշխանը, այնտեղ նորան տեսնելուց յետոյ՝ «դիմէ նախարարին և մինչև անդամ կայսեր, խնդրէ նո- «րա ողորմութիւնը և ազատէ այն վտանգից մեր ազգային «դպրոցներն՝ ինչ որ սպառնում է նոցա։ Սինոդում այսօր «խորհուրդ արինք և վիճակուեցաւ Սրբազնութեանդ այդ «առաքելութեան պատիւը. Ձեզ միայն վայել է, Դուք «միայն կարող էք գործը մի խոհեմ ճանապարհի մէջ «դնել։ Արդէն Ձեզ առաջին նամակաւ հաղորդած եմ, որ «Սրբազնութեանդ վերայ միայն կարող ենք մտանանիչ «լինել, որոշուած վերջացած է այդ խնդիրը, և Դուք «պէտք է գնաք Ս. Պետերբուրգ։ Այժմ Սինոդը պատրաս- «տում է կարևոր գրութիւնները՝ որոնք այս կիւրակէ «աւուր փոչտային կուղարկուին Ձեզ, ուրեմն Դուք ստա- «նալուն պէս, առանց ժամակորոյս լինելու պէտք է ճա- «պարէք Պետերբուրգ և հոգալ ինչ որ հարկաւորն է։ Դի- «տեմ, որ ծանր է պաշտօնը և յանձնարարութիւնը, բայց «այն ևս գիտեմ թէ՝ ի սէր աղդի և եկեղեցւոյ սիրով «յանձնառու կլինիք այդ ծանրութիւնը բառնալու։ Ես «սոյն իսկ փոստային դրեցի Պետրոսին՝ որ ինչ որ խոր- «հուրդ ունի՝ դրէ Ձեզ. և Պետերբուրգ հարկաւոր մարդ- «կանց դրէ՝ որ Ձեզ օդնեն գործը յաջողութեամբ դլուխ «տանելու մասին»։

Վերադրուած նամակներից առաջինը ստացած իսկ օրն, այսինքն դեկտեմբերի 13-ին գրութեամբ դիմելով Ամենապատիւ Մակար սրբազան Արքեպիսկոպոսին՝ եղե- լութեանց մասին ծանօթութիւն ենք տալիս և ի միջի այլոց ասում ենք. «յատկապէս խնդրեմ զօդնականութիւն «Ձեր և դնարհուրդ. կարճ արդեօք նախ առ Ձեզ գալ և «հրահանգիլ, ապա ի Պետերբուրդ երանել. կամ բարեհա- «ճիք տալ ընդհակառակն յանուն Եղեռնի, Սանասարեանի,

«Դիլիանովի, Աբամելիք Լազարև և այլոց Բէյն Հնչեակ «պիտոյանաց յայսպիսի ինդիրս, կամ առ մեծ իշխան «Փոխարքայ–Կայսրեղբայր դուքս Միխայէլ Նիկոլայեվիչն «հաճեալ՝ տալ զդիր խնդրանաց։ Ցակաւին պատասխան չստացած Սրբազան Մակարիչ հանուամ է սրբազան Սի- նոդի կառավարչական մասին յ30-ն նոյն դեկտեմբերի 3342 թուահամարով յանուն մեր տրուած առաջադրու- թեան՝ որոյ հարազատ օրինակն է հետևեալ։

«Կառավարչի Հայոց թեմին Աստրախանայ գերապա- «տիւ Սուքիաս Եպիսկոպոսի. Ձկնի երրորդական միջնոր- «դական դրագրութեանց Սինոդիս ընդ Նորին Պայծառա- «փայլութեան կառավարչապետի քաղաքական մասին «Կովկասու վասն ազգային և եկեղեցական գործոց Հայոց «և երրորդ անգամ ընկալնելոյ ի նմանէ զվերժողական «պատասխանիս, Սինոդս նկատէ, զի առանց առաքման «ի կողմանէ սորին յատուկ և բանիբուն խոհական անձին «ի Ս. Պետերբուրգ ի միջնորդութիւն առ գլխաւոր պաշ- «օնեայս Տէրութեան Ռուսիոյ, անհնարին է ի ձեռս բե- «րել զգանկալին յառաջադիմութիւն գործոյս։ Սորին ազա- «գաւ Սինոդս դնելով զյոյս իւր ի վերայ գերապատուս- «թեանդ և քոյ կշռադատելով, զի Դուք Ձերով խոհեմ «և հեռատես նկատողութեամբ ունիք արդարացուցանել «զյոյս իւր, որոշեաց առ այս նպատակ նշանակել զՁեզ և «առաքել ի Կայսերական մայրաքաղաքն Ս. Պետերբուրգ։

«Ուստի և Սինոդս Սրբոյ Էջմիածնի համաձայնու- «թեամբ բոլոր անդամոց իւրոց հրաւիրէ զդերապատիւ «Սրբազնութիւն Ձեր և յանձն առնէ Ձեզ, ընդ ստանալ «գործս՝ առանց ժամակոչոյս լինելոյ, աշխատութիւն յանձն «կալեալ՝ փութով յոյժ դնալ անձամբ ի Ս. Պետերբուրգ «և խորհրդակցութեամբ ընդ երևելի անձինս ի մերազ- «նեից՝ որք անդ, հասուն մտօք և խոհական միջոցաւ զելս «հնարից ի գործ դնելով՝ նախապէս ներկայանալ Տեառն «Կառավարչապետին Կովկասու կնեազ Կորսակով–Դոնդու- «կովին, որ քանի աւուրքք յառաջ ուղևորեալ է ի Ս. Պե- «տերբուրգ, և հայցել ի նմանէ զչնորհս և զբարեմիտ

«միջնորդութիւն Նորին առ Տէր Նախարարն Ներքին գոր-
«ծոց և կամ առ նոյն ինքն ամենազօրմած Կայսրն Ռու-
«սաց. որպէս զի՝ միջնորդութեամբ Նորին և խնդրանօք
«Ձերովք ամենազօրմածաբար բարեհաճեսցի թագաւոր
«Կայսրն, եթէ ոչ իսպառ, գէթ յետաձգել զգործադրու-
«թիւն այնր նորոյ կանոնաց մինչ յընտրութիւն և ցհաս-
«տատութիւն նորոյ Կաթողիկոսի աղգիս։ Իսկ եթէ ան-
«հաճոյ իցէ Նորին Պայծառափայլութեան կարօտակոչի մի-
«ջամտել յայս գործ, յայն դէպս մատչիլ առ Տէր Նախա-
«րարն Ներքին գործոց այսու յատուկ միջնորդական
«գրութեամբ Սինոդիս (որ ընդ ամին առաքի), և խնդրել
«զմիջնորդութիւն նորա առ այս։ Եւ եթէ խնդրարկու-
«թիւնք Ձեր առ Նախարարն Ներքին գործոց անօգտաբեր
«և անբաւարարք ճանացեն ի կողմանէ Նորին և, ի վերջին
«դէպս ամենախոնարհ պաղատանօք արկանել ընդ գար-
«չապարօք Նորին Կայսերական Մեծութեան զաղերս Սի-
«նոդիս և հայցել ղչնորհս յերեսաց Նորին Կայսերական
«Մեծութեան, որպէս զի բարեհաճեսցի հրամայել՝ գնել
«զգործադրութիւն նոցոց Բարձրագոյն հաստատեալ կա-
«նոնագրութեանց վասն եկեղեցական դպրոցաց մերոց
«յետաձգել մինչ ցհաստատութիւն վեհափառ Կաթողի-
«կոսի, որով և ազատել զՍինոդս յայսմ գժուարատար և
«յանհանգիստ գրութենէ։ Վասն զի՝ ցանկութիւն և խնդիր
«Սինոդիս չէ բնաւ դիմադրել ընդդէմ բարեհաճ կամաց
«թագաւոր Կայսեր կամ օրէնսդրութեանց Նորին, այլ զի
«ներելական և ի նախնի սրբոց Հարց եկեղեցւոյ աւանդա-
«բար հասեալ ցայս վայր իրաւասութիւնք Կաթողիկոսաց
«աղգիս մի եղծցին, որով Սինոդս պարտաւոր գոյի առաջի
«աղգընտիր Հովուապետի իւրոյ, եկեղեցական կանոնաց և
«առաջի խղճի»։

«Ասդ՝ քաջայոյս է Սինոդս, զի գերապատուութիւն
«Ձեր ըստ աղգասիրական եռանդեացդ և ըստ քաջ հըմ-
«տութեանցդ ունիք զամենայն ճիգն աշխատանաց թափել
«և զինարաւոր միջոցս ի կիր ածել առ բարւոք ի յանգ
«հանել զայս վսեմ գործ և յանձնարարութիւն ի պար-

«ծանս ազգի և եկեղեցւոյ մերոյ սրբոյ։

«Ընդ սմին Սինոդս ընդարձակէ Զեզ զլիակատար «լրաւունս, զամենայն ծախս ուղևորութեան և կեցութեան «Ձերոյ ի Ս. Պետերբուրգ առնել ի վիճակային գումարաց «Աստրախանու և կամ յեկեղեցական արդեանց թեմիդ, «յարակցելով թէ՝ վասն նշանակելոյ Զեզ ի պէտս բնա- «կութեանդ զվայելուչ սենեակ՝ Սինոդս ի միասին ընդ «այսմ առանձին դրութեամբ խնդրեաց զպատշաճաւոր «տնօրէնութիւն իշխան Հոդարարձուի եկեղեցւոյն Հայոց «Մանկտ–Պետերբուրգայ։

«Իսկ վասն տեղեկութեան և կարևորն հրահանգու- «թեան՝ Սինոդս ընդ սմին առաքէ առ Զեզ զամենայն «գործս դիւանատան հանգուցեալ Կաթողիկոսի ազգիս և զբոլոր գրագրութիւնս յարուցեալս ի Սինոդիս վասն այսր «առարկայի»։

Սրբազան Սինոդի ներկայ պատուիրանագրութիւն դեռ ևս մեր ձեռք չհասած՝ ստանում ենք նորա հետա- գիրը մի և նոյն դեկտեմբեր ամսոյ 19-ին առաւօտեան 11 ժ. քարշուած արժանապատիւ Մամբրէ վարդապետի ստո- րագրութեամբ, որով հարցուում է. «Ստացաք Դուք Սինոդի «առաջադրութիւն, և երբ էք մտադիր դուրս գալու»։ Ս.մտոյն 20-ին պատասխանում ենք՝ որ Սինոդի պատուի- րանագրութիւն տակաւին ստացած չենք։ Որովհետև Կով- կասեան կառավարչապետի մասին ուս լրագրութեանց մէջ հրատարակուում էր թէ՝ դեկտեմբեր ամսոյ սկզբներըը Պետիգորսկի պէտք է գտնուի տեղական գործոց տօնա- հանդիսին, ուստի անդորրութեան համար և ստուգիւ տեղեկութեան՝ նոյն իսկ օրը հեռագրով խնդրեցինք Տփխի- սու Առաջնորդ գերապատիւ Արիստակէս եպիսկոպոսից հաղորդել, երբ է կառավարչապետն գնացած Պետերբուրգ և երբ է սպասուում նորա վերադարձ ի Տփխիս։ Այս հարցին նորին Սրբազնութիւնը 21-ին պատասխանում է. «Կառավարչապետը դուրս է գնացած նոյեմբերի 25-ին. իսկ թէ երբ կվերադառնայ՝ անյայտ է»։

Գ.

Քանի որ սրբազան Սինոդի հրովարտակ չէինք ստացած և անորոշութեան մէջ տատանուում էինք՝ դարձեալ մէկ ազօտ յոյս մեր սրտի անհանգստութեան ձայնին անդրադարձ էր լինում թէ՝ ո գիտէ այս չարչարանաց բաժակ թերևս անցնի մեզանով, ըստ որում և մասամբ անհամաձայնութիւն կար Սինոդի անդամոց մէջ Սանկտ-Պետերբուրգ մարդ ուղարկելու վերաբերութեամբ։ Սակայն երբ խնդիրն որոշ կերպարանք ստացաւ օր ըստ օրէ մտահոգութիւնը սկսաւ մեզ տանջել։ Մէկ կողմից յիշելով՝ որ Ռուսաստանի մէջ Բարձրագոյն հաճութեամբ հրատարակուած ամենայն օրէնք յընթացս երեքօրեայ ժամանակի անշուշտ կատարուած իրողութեանց կարգն է անցնում, և չէ կարող այն փոփոխուել՝ մինչև որ գործադրութեան մէջ ընդհարկար փորձերով նորա ճնշտակարութիւն կամ թերութիւն չատուգուի, այն ինչ մեր դպրոցաց համար եղած հրահանգ ամբողջ տատնամսեայ օրերում՝ երբէք չէ գործադրուած և այժմ փոփոխութիւն կամ յետաձգութիւն է պահանջուում։ Միւս կողմից աչքի առաջ ունենալով՝ սրբազան Սինոդի նման Հոգևոր Բարձրագոյն Ատենի երրակի խնդրարկութիւնք կառավարչապետից անպատասխան կամ անկատար թողնուած՝ լինքն իսկ իբրև բողոքաւոր Կայսերական մայրաքաղաքն է գնացած և ոչ մի երաշխաւորութիւն չկայ մի անձի խնդիր և աղաչանք յարգուելուն, մանաւանդ մեզ նման մի անյայտ և անծանօթ անձնաւորութեան, տարակուսութիւնը մեզ բոլորովին տիրեց։ Անհանգստութիւնն այլ ևս դադար չտուաւ մեզ։ Աճապարեցինք Ատարեանի մէջ մեզ ծանօթ Հոգևորականն և աշխարհական բանագէտների կարծիք հարցնել գործի յաջողութեան մասին, և մի-օրինակաբար ամենքից վարանական պատասխան լսեցինք։ Փորձեցինք հին և նոր յիշատակարաններից քաղուածներ անել հայոց ժողովրդեան՝ սկսած մեծին Պետրոսի կայսրութիւնից ցայսօր, ռուսաց արքայական գահոյից ժառուցած հաւատարիմ և

օգտակար ծառայութեանց համար, որպէս զի մեր ապագայ աղերսագրութեանց նիւթ դառնան. բայց ինքնին առողջադատութիւնից յանդիմանուեցանք. մեզ չքն հարցնիլ թէ՝ Հայոց ժողովուրդին այժմ ո՛վ է անհատատարիմ կամ անօգտակար ճանաչում։ Այսպիսի երեւմանց միջոցին գայթակղութիւն էր գալիս մեզ վերայ առաքեալի պարծենկոտութիւնը՝ նորա ուրացութիւնից յետոյ, այդպարագայնելով որ՝ «թէ մեռանիլ ևս հասանիցէ, սակայն ոչ ուրացայց զքեզ» խօսքերը մահուան վտանգի բացակայութեան ժամանակ են արտաբերուած։ Նոյնպէս իմ՝ Ներսէս եպիսկոպոսին գրածս՝ «այս հարցի մէջ Սինոդն ինձ ինչ որ հրամայէ, ընդունելի է՝» սոյն ճգնաժամից չատ յառաջ են գծագրուած։

Մի անգամ եղածն այլ ևս յետս դարձնելու հնար չկար, կամայ ակամայ պէտք էր յանձն առնել և սրբան կարելին է շուտով թողնել Աստրախան, որպէս զի կովկասեան իշխան կառավարչապետին Պետերբուրգ տեսնելու հնար լինի։ Դեկտեմբերի 21-ին առանալով Սինոդի հրովարտակ՝ նոյն իսկ օրն գրաւորաբար խնդրում ենք պարոն Նահանգապետի և վիշտային կառավարչի բարեհաճ կարգադրութիւնք, որպէս զի հարկաւոր համարուածք տնօրէնութիւնք լինին մեզ համար անարգել ճանապարհորդութեան մինչև Յարիցին՝ որ 410 մղոն ճանապարհ է և դժուարագնալի՝ մշտական տզմուտ և ճահճային լինելոյն պատճառաւ։ Խնդրում ենք արքունի ժողովրդական ուսումնարանների տեսչի յօժարութիւնն՝ Աղաբաբեան Հայոց գաւառային վարժարանի կրօնուսոյց արժանապատիւ Մելիքսեդեկ քահանայ Քալանթարեանցին ամսօրեայ ժամանակով արձակուրդ տալու, որպէս զի հետերնիս առնենք իբրև յաջողակ թարգման և չկարօտենք այս և այն անվըստահելի, անփորձ անձնաւորութեանց դիմել տարապարտ դժուարութեանց դուռն բանալ։ Առաջադրում ենք վիճակային Կոնսիստորիայէն ի միջի այլոց՝ Քալանթարեանց քահանային առժամանակ անդամակցական պարտաւորութիւնից ազատ կացուցանելով՝ տալ մեզ յուղեկից և նորա

տեղ կարգել բարեկրօն Գաբրիել քահանայ Բախթեանցին, մեր անունն իբրև բացակայ օրագրութեան մէջ ցոյց չտալ, նաև կարգադրել հասուցանել մեր ձեռքը երկու հազար րուբլի արծաթոց վիճակային և եկեղեցական դատարանե- րից թէ ճանապարհածախուց համար յետի և ի դարձն, և թէ՝ մայրաքաղաքում կեցութեան անհրաժեշտ պիտոյից համար։

Այն ինչ մեկ մեկից յետոյ ստանում ենք ժողովրդա- կան դպրոցների վերատեսչի, Նահանգապետի և փոշտային կառավարչի դրութիւնք՝ թէ մեր խնդիրը յարդուած է նոցանից, հասնում է լուր մեր ականջներին. Աստրախանի եկեղեցիների երեսփոխանները թեմական Ատենի հրամա- նով չեն կամենում մեզ ճանապարհածախս տալ, այլ մտադրութիւն ունին ժողովրդական ծողովներ բանալ և թոյլտուութիւն առանալ նոցանից այսպիսի արտակարգ ծախսարարութեան համար։ Զեն բարեհաճում անգամ փոխարինաբար ի հաշիւ մեր աննդադրամոց տալ դուսար, որպէս զի անարգել կարողանանք ուղևորել և իշխանու- թիւնից մեզ վերայ դրուած յանձնարարութիւնը կատա- րել։ Լուր է հասնում մեր ականջներին նաև, որ բա- րեկրօն քահանայք զանազան պատճառաբերութիւններով հրաժարուում են Մելքիսեդեկ քահանայի ժողովուրդը հովուել յանձն առնելուց։ Իսկ մերձակայ ծննդեան օրե- րում հարիւրաւոր տուն բարեպաշտ հասարակութիւն քրիստոնէական վսեմարութիւններից զրկել արդարու- թիւն չէր։ Երկայնամիտ համբերութեամբ և ընդարձակա- սիրտ վեհութեամբ տանում ենք այսպիսի անախորժու- թեանց. յանձն ենք առնում միայն Վիճակային Կոնսիս- տորիայի գանձարանում եղած հինգ հարիւր րուբլի դրամն ստանալ՝ պակասորդն անձնականից հոգալու յոժարու- թեամբ։ Հրաւիրում ենք մեզ մօտ քանի մի երիցունք և նոցա մէջ բաժանում ենք Քալանթարեանցի ծխականաց օրինակատարութիւնք՝ ոմանց բաժին տալով պատարագի հերթականութիւնն, ոմանց տնօրինէք և ոմանց տօն չնոր- հաւորէքներ հանգերձ պատահական օրինակատարու-

թեամբք։ Որպէս զի ամենայն ինչ կարգաւ եղած լինի և ժառանգութիւն կամ խզճահարութիւն չունենանք՝ դեկտեմբերի 23-ին կիւրակէ օր, սուրբ Աստուածամօր աւագ եկեղեցում պատարագի սրբազան խորհրդից յետոյ կատարում ենք հոգեհանգստեան կարգ ի յիշատակ այն օրհնեալ ննջեցելոց՝ որոց ժառանգները մեր հրաւէր յարգելով յօգուտ շինութեան աղքատանոցի դրամաւոր ընծայաբերութիւններ ունին արած։ Այս պարտք մեք ուխտադիր էինք կատարել ամսոյն 26-ին Սրբազան Պօղոս-Պետրոս առաքելոց եկեղեցում ի պատիւ նոցա տօնին անձամբ մատուցանելով սուրբ պատարագ. ըստ որում աղքատանոցի տան շինութեան համար անցեալ 1883 թուականին նոյն սուրբ առաքելոց տօնի օրն, նոյն առաւօտեան ատաճարում խրատական յորդորով նախապատրաստական ակիզբն արած էինք, ուրեմն և այն տեղ վայել էր վերջնական դոհութիւն մատուցանել Աստուծոյ և շնորհակալութիւն ժողովրդեան՝ որ մի տարուայ ընթացքում յաջողեցին մէկ աղքային սեփական հաստատութիւն ունենալ, հաստատութիւն՝ որ 13,000 րուբլիից առաւել արժէք ունեցաւ, և այդ փոքր բան չէր, մանաւանդ այսպիսի ժամանակում. սակայն վերահաս ճանապարհորդութիւնն՝ որ տեղի պէտք է ունենար ամսոյն 26-ին, առաւօտեան 10 ժամին, դորա կարգը յեղափոխեց։

Մինչդեռ ամենայն արգելք վերջացած էինք համարում՝ ահա նոր առիթներ յառաջ եկան։ Արժանապատիւ Մելքիսեդեկ քահանայ յայտնուում է և ծանուցանում՝ որ ծերոց հովուատարութիւնն յանձն առնող երիցունք առաջի միայն խոստացած են իւր պարտքեր կատարել, մեր բացակայութիւնից յետոյ ժողովրդեան իրաւացի տրտունջներ կբարձրանան և ինքը պատասխանատու կհամարուի, որ որոշակի տնօրէնութիւն չէ արած նոցա մասին։ Ասում է՝ որ Աստրախանից մինչև Յարիցին փոշտային ճանապարհն սաստիկ ցեխ լինելուն պատճառաւ չէ կարելին սահնակով գնալ. իսկ բաց հասարակ իջևանի սայլակով դժուար է այնքան հեռաւորութիւն, օր և դիշեր ուղևո-

թութեամբ վճարել։ Ծանուցանում է նոյնպէս՝ որ ժամադրուած օրն անհնարին է ճանապարհ դուրս գալ, ըստ որում Վոլգայ գետի վերայ դէ նաւ է բանում, և դէ սառոյցն է այնքան ամրացած՝ որ կարողանայ ծանրութեան տեղի տալ. այդ իսկ պատճառու արքունի փոչտն երեք— չորս օր է չէ ուղարկուած. ուրեմն առաւել լաւ չէ սպասել մինչև ծննդեան ոօնի կատարումն՝ որից յետոյ առևնայն դժուարութիւնները վերացած կլինին և անդորր հոգւով կլինի մեր բացակայութիւն։ Ընտանեկան դժուարթիւնը գլուխ է բարձրացնում մեր մէջ և ուղղակի քահանայի պատճառաբերութեանց պատասխանում ենք։ Ձեր ծխականաց օրինակատարութիւնը սառնձնողք յարգեն իրենց խոստումն և մեր յանձնարարութիւն կամ դէ, Դուք երբէք պատասխանատու չէք հասարակութեան առաջ, այլ մեք։ Մեզ համար դժուար չէ եկեղեցեաց մէջ ծանուցումն առնել՝ որ Քալանթարեանցի ժողովրդականք ազատ են նորա բացակայութեան ժամանակ, ինչ քահանայի կամեհան ծուխ լինել և արդիւնք նոցա յանձնել կարող են, իսկ Դուք հատութից մասին մեզանից կատանաք բաւականութիւն։ Ճանապարհական դժուարութեանց համար Ձեզ հոգալ պէտք չէ. մեք այդ մասին նախատես լինելով՝ յանձնած ենք թեմական Ատենի անդամոց ծածկութով կատք վարձել կամ գնել։ Քալգէտ ենք՝ որ ընտանեաց և գաւառաց տէր անձնաւորութիւն էք, ուստի և ամենայն հնարաւորութիւն ձեռք կառնենք ղՁեզ անվնաս և անվտանգ տանել և բերել. որպէս զի դէ ոչինչ ծանրութիւն չբերենք մեր խղճին և անախորժութիւն Ձեր դերդաստանին։ Արդէն հեռագրաւ Սիմոդին ծանուցած լինելով՝ որ ամսոյս 26-ին պէտք է դուրս գանք՝ չենք կարող յետաձգել ուղևորութիւնը մինչև ծննդեան ոօնի կատարումն և անօրհնեաց աւարան. եթէ գիտենանք՝ որ անչուշտ Վոլգայի սառոյց պէտք է մեր ոտից ներքև կոտրուի և ընկղմուինք, դարձեալ չենք յօժարիլ գանց առնել, կամ օր ընդ օր ձգել մեր դուրս գալ։ Եթէ Դուք պատճառներ էք որոնում մեզ հետ չգալու. լաւ լսացէք՝ նախապէս

զՁեզ կարգելենք քահանայագործութենէ, և ապա կերթանք. որպէս զի դարձեալ ժողովրդականք Ձեր հովուութեան միայն և եթ ապաստան մնացած չհամարուին։

Ինչպէս յետոյ անձնական փորձերիս հաւաստարմացայ՝ արժանապատիւ Մելքիսեդեկ քահանայն ունէր իրաւունք վերոյբերեալ առիթներուն, մանաւանդ ժողովրդականաց հովուութեան անորոշութիւնն, ասացուածի առարկայ չընել. ըստ որում նախանձէն յառաջացած ընկերական չկամութիւնն ամենայն մանրիկ դէպքերից մեծամեծ իրողութիւններ կարող էր յառաջ բերել, Ինչ և իցէ, գեկտեմբերի 25-ին ուրացանք գերապատիւ Մակար արքեպս. հեռագիր ի պատասխանի մեր նամակին՝ որով ծանուցանուած է. «Ձեզ հաւատացած յանձնարարութիւնը չատ «կարևոր է և կբերէ Ձեզ պատիւ։ Յանկալի էր և ինձ «տեսակցել Ձեզ հետ, բայց որովհետև ժամանակն չէ նե«րում, այս պատճառաւ փութացէք ուղղակի Պետեր«բուրգ։ Աշխատեցէք գործել խոհականութեամբ և հան«դարտութեամբ, և լինելով ճիշտ արտայայտող Սինոդի «դգացմանց՝ ձեռնարկուիլ մի միայն նորա Ձեզ տրուած «հրահանգներով։ Աստուած թող օգնական լինի Ձեզ»։ Առանց փոփոխելու մեր նախագիծը՝ նշանակած օրուայ առաւօտեան 10 ժամին թողինք Ատրպատեան։ Դեռ ևս սահնակով կամ սայլերով չէին երթևեկում դեպի վերայով պաղի անհաստատութեան պատճառով, այլ ոտով։ Անվատահ երկիւղածութեամբ քայլերնիս փոխելով՝ յաճախ և յոհնակէ զգուշացողներ ունենալով, անփորձ, անատեան տակ գրինք ալ ափի վերայ. մտանք փօշտային լիճանին, ճանապարհային զգեստներ հագանք, ուղևորողներին հրաժեշտ ողջոյն կարդացինք և արդէն պատրաստի կացքի մէջ տեղաւորուեցանք։ Ո՛վ ուղևորութիւն ատած է, դիտէ՝ որ ամենից դժուար տանից դուրս գալն է, այնուհետև ոչ մի արգելք այնքան չէ ճնշում մարդու. ժամ առ ժամ յառաջանում է, որքան և դանդաղ քայլերով լինի, և նպատակին մերձենում։ Սակայն ինձ համար ոչ ծովային, ոչ երկաթուղիով և ոչ հատարակ փօշտայով գնացքները չու-

նին իրենց ուշադրաւ տպաւորութիւն, այլ տանից դուրս գալն է հանդիսատ, ընթացքը դժուարին, մանաւանդ երբ ընդ երկար լինի ճանապարհն և քանի մի օրեր տևէ։

Զգիտեմ, ինչ տղայական միտք էր ինձ տիրել, անդադար իմ ականներ համարելով, քաղաք և գիւղեր անցնելով, օր և գիշերներ հաշուելով՝ աչխատում էի յունվարի առաջին օրը, վաղքաջ ընդ առաւօտն, Կայսերական մայրաքաղաք հասնել և ոչ մի հանգստութիւն չառած՝ եկեղեցի մտնել, սուրբ պատարագ տեսնել, զգեստաւորուիլ գոհացողական մաղթանք կատարել, դասնալ առ պանդուխտ հայազգիս և կաղանդի շնորհաւորէք խօսիլ, ինձ յանձն եղած դպրոցական գործի յաջողութիւնն հաւատացած էի թէ կախուած է նոր տարուայ սկզբում արքայական տոհմի համար կատարածս օրհներգութենէն։ Այնքան յեղյեղեցի այս թեթև կարծիք՝ մինչև արժանապատիւ ուղեկիցս սկսաւ ձանձրութիւն դառնալ այն և ուր ուրեմն զուարճութիւն։ Ո՛չ Յարիցին, ոչ Գրեազի, ոչ Մոսկուայ՝ առաւել քան չոգեկառաց համար սահմանուած ժամանակ, միայ չկամեցանք, ոչ ոքի հեռագրով ձանձրութիւն տալ յանձն չառինք։ Թէ և ոչ առաւօտուն, բայց ընդ երեկո 9 ժամին, յունվարի առաջին օրը միլիոնաւոր ելեքտրական, շլացնող ճրագարանների հոսանաց տակ հասանք Պետերբուրգ, և ուղղակի Դեմուտ անունով հիւրանոցում իմ ականեցանք, որոց խուլ առանձնասենեակներին չեն կարողանում հասնել փողոցային խլացուցիչ տղաղակներ կամ կառքերի դղրդիւն։

(Շարունակելի)

ԳՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏՔՈՎ

Գ. Թ.

Հռաքէլ Վինսլօուի հետ ունեցած խօսակցութիւնից յետոյ Ուոլլին Պէյը մի քանի օր շարունակ տխուր տրամադրութեան մէջ էր։ Նա այլ եւս ակմբանոց չէր յաճախում. նատել էր տանը եւ ոչ ոքի հետ չէր խօսում։ Նա առաջուց չէր կարող ենթադրել, որ Հռաքէլը իւր համար թանկագին մի գանձ էր եւ այժմ, մերժումից յետոյ, սաստիկ վիշտը տանջում էր նրան։

—Մթթէ ամէն ինչ վերջացած է ընդմիշտ,— ասում էր նա ինքն իրան, անց ու դարձ անելով գրասենեակում։ —Անենք թէ այժմ ես անարժան եմ նրա համաձայնութեանը, բայց եթէ ես փոխուեմ, եթէ ցոյց տամ, որ իմ մէջ եւ՛ կան լաւ կողմեր. որ ինձնից եւ՛ մի բան դուրս կը գայ, մթթէ այն ժամանակ ես պատասխանը նոյնը կը լինի։

Ծանր թախիծը պատեց նրան, երբ տեսաւ, որ յիրաւի միանգամայն արժանի էր Հռաքէլի կրակոտ յանդիմանութեանը։

—Արդարեւ. ինչպէս անմիտ եւ դատարկ կերպով էր անցկացրել իւր տարիները,—մտածում էր նա, յիշելով Հռաքէլի խօսքերը։—Ոչ մի լուրջ գործ, ոչ մի լուրջ միտք եւ ոչ էլ նոյն իսկ նախապատրաստութիւն նրանց համար։ Եւ ինչո՞ւ։ Որովհետեւ երբէք մտքովն անգամ չի անցկացրել մի այլ կեանքի անհրաժեշտութեան կամ գէթ հնարաւորութեան մասին, քան ակմբանոցները, կաֆէչանտաններըը, ճաշարաններն ու գոմերը։ Այն ուսումնարանում, որտեղ ինքը եւ իւր ընկերակիցները դաստիարակւում էին, գիտութիւններով չզբաղուելը մի տեսակ պարծանք

էր համարում։ Ուսումնական զբաղմունքներին նոքա նայում էին որպէս մի ծանր պարտականութեան և ուսումնարան գնալը համարում էին որպէս կեանքի մի անխուսափելի չարիք, որ պէտք էր սիրտը պնդացնելով, մի կերպ տանել։

Նրանց չէր զբաղեցնում ոչ մի լուրջ վիճաբանութիւն. նրանք չունէին գեղարուեստա-գրական կամ փիլիսոփայական խնդիրների վերաբերեալ համախմբում-ներ, ինչպէս այդ լինում է միւս ուսումնական հաստատութեանց մէջ։ Նրանք թէ տանը և թէ ուսումնարանում սովոր էին անտարբեր, նոյն իսկ արհամարհական աչքով նայել գիտական մաքերին ու բարձրագոյն գաղափարներին, որպէս իրենց չվերաբերող և իրենցից աւոր մի բանի։ Նրանց շրջապատողներից և ոչ մէկի մտքովը չէր անցկացել ջերմացնել նրանց հոգին, տաքացնել նրանց սիրտը։

Իրենց դաստիարակների, դաստիարակչուհիների, ուսուցիչների և ուսուցչապետների մէջ Ռօլլին չէր յիշում գէթ մի կենդանի անձնաւորութիւն, գէթ մէկը, որ գոնէ փորձած լինէր շարժելու նրանց միտքը, զարթեցնելու նրանց մէջ աստուածային կայծը։

Այժմ միւսի էր միայն, որ ինքը սկսէր իրեն բարեփոխել և Ռօլլին եռանդուն կերպով գործի կպաւ։ Նա սկսեց գրքեր կարդալ։ Բլեկիի «մտաւոր, բարոյական և ֆիզիքական կրթութիւնը», Պէյլի «կամքի կրթութիւնը» մի շարք մեծ մարդկանց, հերոսների, զօրեղ բարի կամքի տէր անձանց կենսագրութիւններ և որ գլխաւորն է երկար կանգ առաւ Աւետարանի վրայ և խորհրդածութեանց նիւթ դարձրեց նորա էական գաղափարները։

Աւետարանի մէջ նրա առաջ բացւում էր բոլորովին մի նոր աշխարհ, կեանքը լուսաւորւում էր մի նոր պայծառ լուսով։ Առանձնապէս նա կանգ առաւ հետևեալ խօսքերի վրայ. «որտեղ ձեր գանձն է, այնտեղ և ձեր սիրտը կը լինի» (Մատթ. Զ. 21)։

—Որտեղ է յիրաւի իմ գանձը։ Ի՞նչն է ինձ համար ամենից աւելի արժէքը ու գնի ունեցել։ Ի՞նչ բանի է

ձգտել իմ սիրտը.—մտածում էր նա ինքն իրեն և ինքն էլ ցաւած սրտով պատասխանում։

—Ոչ մի բանի։ Ամբողջ կեանքս անց եմ կացրել, որպէս դատարկ սրտով մի մարդ։ Թլատը դոնե ընկնում է փողի յետևից. փառասէրը ամեն ինչ զոհ է բերում բարձր պաշտօնի համար, իսկ ես նոյն իսկ այդպիսի կոպիտ նպատակներ չեմ ունեցել կեանքիս մէջ։

Ռօլլին Պէջը համոզուում էր, որ իւր վարած կեանքը իսկապէս ատելացուցիչ էր մարդկային արժանապատուութեան համար. դա նման էր փեթակի մէջ եղած ձրիակեր ճանճերի դրութեան։ Մեղուները աշխատում են, մեղրահացեր են պատրաստում ու մեղրով լցնում, իսկ ձրիակեր ճանճերը,—Ռօլլինները, վայելում են ուրիշի աշխատանքով ձեռք բերուած մեղրը և անգործութիւնից ձանձրանում։

—Ի՞նչ բանի համար են ուրեմն պատրաստել մեզ մեր դաստիարակները.—զայրոյթով հարցնում էր ինքն իրեն Ռօլլին։—Ի՞նչի մասին են մտածել մեր մանկութեան ու պատանեկութեան դեկավարները, մեր մեծերը։ Ահա արդէն քսանհինգ տարեկանից անց եմ և ինչ եմ արել ցարդ։ Կէս ճանապարհը, գուցէ նոյնիսկ աւելին, արդէն անց եմ կացրել, և դեռ առաջին անգամ եմ հարց տալիս. «իսկապէս ես ուր եմ գնում»։ Եւ դեռ լաւ է, որ գոնէ Հռաքելի դառն խօսքերը սթափեցրին ինձ, աչքերս բաց արին, մտածել տուին ինձ։

—Ուղիղ որ «չիք չարիք առանց բարեաց» խօսքերի մէջ խոր ճշմարտութիւն կայ,—եզրափակեց Ռօլլին Պէջ։—Հռաքելի մերժումը մի դառը, բայց և անհրաժեշտ դեղ է ինձ համար։

Հռաքել Վինսլօուի հետ ունեցած խօսակցութիւնից մի շաբաթ յետոյ՝ Ռօլլին յայտնեց իւր տատին ու քրոջը, որ ուրիշ տեղ պիտի գնայ երկար ժամանակով։

—Ո՞ւր։

—Յետոյ կը հաղորդեմ։ Առայժմ ես կը ցանկայի մի քանի շաբաթի կատարեալ միայնութեան մէջ անցկացնել,

նա յոգնել եմ մեր այս սովորական կեանքի դատարկու-
թիւնից։

Գոյը այլևս երկար ու բարակ հարցուփորձ չարաւ։ Նա նկատել էր, թէ ինչպէս իւր եղբայրը վերջին ժամա-նակները չարունակ մտածմունքների մէջ էր խորասու-զուած և կանանց նրբազգած սրտով դուշակում էր, որ նրա ու Հռաքէլի մէջ մի ինչ որ բան էր պատահել։

Ռօլլին ճանապարհ ընկաւ միայնակ, չառնելով հետը նոյն իսկ ծառային։

Սակայն նորա ճանապարհը շատ երկարել էր։ Նա իւր ճոխ բնակարանից տեղափոխուեցաւ Ուղիղ Անկիւնը, որի կենարանում՝ բազմաչատ տներից մէկի մէջ մի սե-նեակ վարձեց և այնտեղ բնակուեցաւ։

Նա ցանկանում էր մտնել կեանքի խորքերը և դիտել կեանքը ոչ թէ ոճնական և զարդարուն կողմից, ինչպէս նա տեսել էր մինչև այժմ, այլ առօրեայ, աշխատաւոր կողմից։

—Նախ և առաջ կը մտնեմ կեանքի մէջ,—ասում էր նա ինքն իրան,—կը նայեմ թէ ինչն է ամենից աւելի անհրաժեշտ և ապա գործի կը կպչեմ։

Նա ժամերով մտն էր գալիս վաղորցներում, ներա էր մտնում գինետներն ու գարեջրատները, մտենում էր ամենքին, խօսում էր նրանց հետ, հարցնում էր նրանց կարիքները, դիտում էր երեխաների խաղերը։ Տպաւորու-թիւնները զօրեղ, ծանր և ցնցող էին։ Նա յաճախ վե-րադառնում էր իւր սենեակը ջարդուած և բարոյապէս տանջուած։

—Միթէ ինչպէս սարսափելի է կեանքը։ Ի՞նչպիսի սոսկալի գոյութիւն են քաշ տալիս հազարաւոր և միլիո-նաւոր մարդիկ, եւ ինչպէս մենք, աւանդութեան ու ճախութեան մէջ ապրողներս, ամօթարեր անտարբերու-թեամբ ենք նայում կեանքի այդ բոլոր սարսափներին։

Ռօլլին պէջը տեսնում էր հարբած երեխաներ, կեղ-տոտ ճահճի մէջ կորած մատաղահասակ աղջիկներ, անոք և անօգնական բազմաթիւ մարդիկ ու ընտանիքներ։

Փողոցներում խմբերով թափառում էին անտուն անտէր երեխաներ, ողորմութիւն խնդրում և գողութեան սովորում։ Հասարակաւորները, որոնք քիչ թէ շատ աչխատանք ունէին, ունեցած չունեցածը խմելու էին տալիս։ Կանայք ուժասպառ էին լինում կարողութիւնից վեր աչխատանքի պատճառով։ Ամենուրեք տիրում էր աղքատութիւն, տգիտութիւն, ֆիզիքական ու բարոյական անմաքրութիւն։

Սկզբներում Ռօլլին յուսահատութեան մէջ ընկաւ։ Նրա ձեռները թուլացան։ Նա մտածում էր.

—Այստեղ ոչինչ չի կարելի անել։ Այս կեանք չէ, այլ ճահիճ։

Բայց յետոյ նա սկսա առաւ.

—Ջէոր ճահիճներն անդամ չորացնում են և հրաչալի մարգագետիններ ու արօտներ գարձնում։ Հետևապէս այստեղ էս կարելի է բարեփոխութիւններ մտցնել։

Եւ որքան նա աւելի էր մտածում, այնքան աւելի էր պարզում նրա համար մարդկային ճահճի բարեփոխութեան հնարաւորութիւնը։

—Պատերազմի ժամանակ որքան շատ հիւանդներ ու վիրաւորներ են լինում,—մտածում էր Ռօլլին,—և նրանց բոլորին խնամելու համար գտնւում են բաւականաչափ բժիշկներ, սանիտարներ ու գթութեան քոյրեր։ Պատերազմի տարին ամեն ոք, ով կարող է. գնում է տանջւածներին օգնութեան։ Երիտասարդ կանայք և աղջիկներ, յաճախ ամենալաւ ընտանիքներից թողնում են իրենց հանգիստ կեանքը և չափից դուրս ծանր աչխատանք յանձն առնում։ Ովքեր մնում են տանը, նրանք էլ վիրակապներ, հարկաւոր չորեր են պատրաստում, նուիրատուութիւններ ժողովում։ Հասարակութիւնը յանկարծ զարթնում է թմրութիւնից։ Ամենքն էլ բռնւում են գործունէութեան եռանդով։ Աչխատանքը եռում է հազարաւոր տանջւածներ թեթևութիւն են գտնում իրենց ցաւերից և ազատւում վերահաս մահից։

Ինչու հասարակութիւնը նոյն տեսակ սրտագին և

սիրալիր վերաբերմունք չունենայ դեպի Ուղիղ Անկիւնը և նրա նման թաղերի թշուառ բնակչութիւնը։ Այստեղ չէ որ նոյնպէս սարսափելի պատերազմ է մղւում և այն էլ չարունակ։ Այստեղ կեանքի խաւար կռուի մէջ, գոյութեան կատաղի կռւում, կարիքի, յուսահատութեան ու աբատների սարսափելի հարուածների տակ ամեն օր կոչւում են հազարաւոր թշուառ աղջիկներ, անտէր երեխաներ և աղքատութիւնից ուժասպառ եղած ընտանիքի հայրեր ու մայրեր։ Եթէ բարի ցանկութիւն լինէր, մի՛թէ չէր կարելի օգնել նրանց։

Ահա, Ուղիղ Անկիւնի փողոցներում տասնեակներով վազվզում են փոքրիկ անտուն չարաճճիներ։ Նրանց վիճակը դառն է, այժմ աղքատութիւն և ապա բանտ։ Բայց այս ամենը հեշտութեամբ կարելի է փոխել։ Բաւական է, որ երկու–երեք հաւատա կանայք, հինգ–վեց աղջիկներ օգնութեան հասնեն նրանց և այդ «ճահճի» զանազան ծայրերում երևան կըգան մի քանի ապաստաններ։ Երեխաները կը ծածկուին յարկի տակ, աշխատանքի կը վարժուին և բարի ու աղնիւ պատանիներ կը դառնան։

Դեռահաս պատանիները երեկոները խմբերով թափառում են փողոցներում գինետների ու կասկածելի նկուղների առաջ և այդ տեղերի ապականուած օդի հետ ի միասին ներս են ծծում բարոյական ապականութիւն։ Մի՛թէ ամբողջ քաղաքում չի կարելի գտնել երկու–երեք հոգի, որ երեկոներով օգտակար ընթերցանութեամբ և գիտական զրոյցներով զբաղեցնէին երիտասարդներին նրանց ազատ ժամերին։ Քանի–երեսուն այդպիսի ընթերցողներ օրըստօրէ ամբողջ տարուայ ընթացքում կարող կը լինէին իրենց շուրջը հաւաքել Ուղիղ Անկիւնի ամբողջ երիտասարդութիւնը, զբաղեցնելով նրանց միտքը, բարոյապէս թարմացնելով նրանց և նրանցից նոր սերունդ պատրաստելով։

Սոսկալի է Ուղիղ Անկիւնի բնակիչների ընտանեկան նիստուկացը, ամենուրեք տիրում է կեղտոտութիւն և որև է յարմարութեան կատարեալ բացակայութիւն։ Երե-

խանելի վրայ խնամք տանելը անհնար է այդտեղ։ Եւ այս ամենը առաջանում է ոչ թէ միայն աղքատութիւնից, այլ շատ բան՝ գռեհկութիւնից, տգիտութիւնից և կանանց ու մայրերի չափազանց ընկճուած դրութիւնից։ Այստեղ մեծապէս օգնել կարող էր նուիրուած ու կրթուած կանանց մի հաւետ խումբ։ Նրանք կարող էին շրջել այդ մութ ու կեղտոտ բնակարանները, սիրտ տալ կարիքի տակ ընկճուած իրենց խեղճ քոյրերին, լուսացնել նրանց երեխաներին, օգնել բնակարանները կարգի բերելու, մաքրելու և բնակութեան յարմար դարձնելու։

Ռօլլին յիշեց, որ Ֆրանսիայում ճանապարհորդելու ժամանակ, լսել էր բարի կանանց այդտեղակ խմբերի մասին։ Ազատ և միայնակ կանայք շրջում են երեխաներով ծանրաբեռնուած բանուորների տները և այնժամանակ, երբ այր ու կին աշխատանքի են գնացած լինում, նրանք փոխարինում են ընտանիքի մօրն ու տանտիկնոջը։ Խեղճ ծնողներն աշխատանքից վերադառնալով՝ տեսնում են երեխաները մաքուր, կուշտ և ուրախ. սենեակը սրբուած, ճաշը պատրաստ։

Մի՞թէ այստեղ փողի խնդիր է։ Հարկաւոր է սիրտ ունենալ և սէր, պէտք է իսկապէս քրիստոնեայ լինել։ Պատերազմի ժամանակ դաշտային հիւանդանոցներում այդպիսի քրիստոնեայ կանայք հարիւրներով ու հազարներով են լինում։ Մի՞թէ չկան այդպիսիները, կամ չի՞ կարելի գտնել սովորական ժամանակ խնամելու ոչ թէ պատերազմում վիրաւորուածներին, այլ կեանքի մէջ խեղճութիւնուածներին։

—Կան, անշուշտ կան,—պնդում էր ինքնիրեն Ռօլլին։—Միայն նրանք չգիտեն, թէ իրենց նմանների շատ մեծ կարիք է զգացւում։ Պէտք է նրանց գոյժի դրդել, ցոյց տալ, թէ ինչ է կատարւում Ուղիղ Անկիւնում, թէ ինչպէս են ապրում մարդիկ այդպիսի թաղերում։

—Առհասարակ, մեզ նման կուշտ և գոհ մարդկանց համար,—եզրափակեց Ռօլլին,—շատ օգտակար կը լիներ մօտենալ այդ տեսակ թշուառներին, աւելի մօտիկից դի-

տել նրանց կեանքը, համեմատել նրանց ազգասութեան հետ մեր լիութիւնը։ Մեզ համար այդ նոյնիսկ աւելի կարեւոր կը լինէր, քան նրանց համար։ Ձափից դուրս մենք արդէն բթացել ենք սրտով ու խլացել հոգով։

Ռօլլինը իւր վրայ զգում էր, թէ որքան մեծ կարեւորութիւն ունի այդ թշուառների կարիքով լի կեանքին ծանօթ լինելը։ Նրանց մէջ նա ապրելով՝ մարդ էր դարձել. ուրիշ կերպ էր զգում իրեն, ուրիշ կերպ էր մտածում, այլ կերպ ցնորում ապագայի մասին։ Նրա մէջ մի միտք էր ծնել, որ ամբողջովին բռնել էր նրան և նա հաստատում էր, որ այդ մտքի իրագործումը կը նպաստի «ճահճի» չորացնելուն, կերջանկացնէ մարդկանց և իրան էլ երջանիկ կը դարձնէ։

Որքան աւելի նրա մէջ հաստատնանում էր իւր ծրագիրը, այնքան աւելի նրա սիրտը լցւում էր ուրախութեամբ և զգում էր, որ կարող է ամենայն վստահութեամբ ասել.

— Այժմ ես կարող եմ արժանի համարուել Հռաքէլին։ Այժմ նա այլևս չի ասիլ, որ ես կեանքի նպատակ չունեմ, որ ես ոչ մի բանի պէտք չեմ։

Ռուս. թարգմ. **Մամբրէ վարդապետ.**

ՀԵՆՐԻԿՈՍ ԻԲՍԵՆ*)

Մի հեղինակ, որ չի գրում ընդհանուրին ծանօթ լեզուով, սովորաբար նորա վերայ ծանրացած է անէծք։ Նոյն իսկ երբորդ կարգի մի տաղանդ, բայց որ չատերին

*) Դանիայի մեծ քննադատ Գէորգ Բրանդեսը ուսանողների ընկերութեան հրաւիրանօք կարդացել է Քրիստինիա քաղաքում մի համառօտ տեսութիւն Իբսենի մասին, որ թարգմանաբար տալիս ենք Արարատի ընթերցողներին (տես Лит. Науч. Сборникъ 1906):

մատչելի լեզուով է գրում, աւելի է գնահատուում, քան առանձնակարգ մի հանճար, որի գրուածքը թարգմանօրէն պիտի կարդան։

Դարձեալ՝ եթէ թարգմանուի էլ այդպիսի մի երկ, դարբս է դալիս, որ գրուել է մի քանի սիրողների համար, որ հեղինակը միայն այն հասարակութեան մատչելի է, որին նա պատկանում է, բայց աշխարհի բազմութեան օտար է։ Նորա երկը համապատասխան է այն անձանց հասկացողութեան, որոնց մէջ մեծացել է, որոնց համար գրել, բայց մեծամամնութեան պահանջին համապատասխան չէ,

Եթէ Հէնրիկոս Իբսենին յաջողուել է յաղթել այդ արգելքներին, պատճառը նախ այն է, որ նորա յետին ժամանակ թատերական երկերը արձակ են գրուած, կարճ և գրուցատրական եղանակով, անպէս որ թարգմանելիս շատ քիչ բան է կորցնում։ Երկրորդ, քանի Իբսէն զարդանում էր, այնքան քիչ էր գրում միայն հիւսիսի համար, այլ գրում, աչքի առաջ ունենալով ամբողջ մարդկութիւնը։

Նորան քիչ էր հետաքրքրում արտաքին ճշմարտանմանութիւնը. օրինակ Նորուեգիայում դղեակ չկայ, բայց նա Ռոսմերխոլմն է նկարագրում այնտեղ։ Եւ վերջապէս նա իւր արուեստով ժամանակի սահմանը անցել էր։

Գերմանացի ամենից աւելի երևելի թատերգուները՝ օրինակ Փրիտրիկոս Դեբել, միայն Իբսենի կատարեանների էին։ Դաղիացի հեղինակները (թատերգ.) որոնք Իբսենի պատանեկութեան ժամանակ բեմի տիրապետողներն էին, օրինակ Աղեքսանդր Դիւմա, Էմիլ Ոժիէ, Իբսենի հետ համեմատելիս բոլորովին հնացած են երևում։

«Էսարտացի Ֆրու Ինգեր»ից յետոյ, Իբսեն այլ ևս բամբասանքը թատերգութեան նիւթ չէ դացնում։ Հանդիսականի առաջ ամէն տեղ մարդու ներքին էութիւնն է։ Բարձրանում է վարագոյրը, մենք անհատի ինքնատիպ կնիքն ենք տեսնում։ Երկրորդ անգամ բարձրանում է,

իմանում ենք նորա անցեալը և վերջապես երրորդ անգամ՝ և բացուում են բնաւորութեան ամենախոր հիմքերը։

Իբսենի գլխաւոր գործող անձինք բոլորն էլ աւելի խորին հետաքրքրական էին քան ժամանակակից սովորական նատուրշչիկները, և բացուում է մեր առաջ առանց անգամ ամենափոքր արուեստականութեան։ Նորա արուեստը բոլորովին նոր է. ոչ մի ժենախօսութիւն, ոչ մի անտեղի զարդ։

Իբսենից յետոյ էլ չէ կարելի գրել այնպէս, ինչպէս որ գրում էին առաջ։ Բնութագրութեան թատերական արուեստի պահանջը մինչև այն ժամանակ չտեսնուած բարձրութեան է հասցրել։

Հիւսիսի գրականութեան գեղարուեստի արդեանց մեծ մասը Եւրոպայի համար կորած է։ Միայն Հենրիկոս Իբսենն է, որ ներկայացաւ նրա համար ամենաինքնուրոյնը և ամենամեծը։ Այս կերպ նա յայտնուեցաւ բարձր քաղաքակրթի Եւրոպային յանկարծ։

Հենրիկոս Իբսենը կատարելապէս արդարացրեց Եւրոպայի յոյսը և նորա միջոցով առաջին անգամ Սկանդինաւական հիւսիսը մտնում է Եւրոպայի գրականութեան զարգացման պատմութեան մէջ։ Բանն այն չէ, թէ ով է անուն հանել, այլ այն թէ բազմութեան վերայ անկասկած ազդած լինի։ Իսկ դորա համար հարկաւոր է, որ այն անձը ազատանդի նման անվհանգ և սուր լինի։ Այս յատկութեան տէր մարդը միայն կգրէ իւր անունը դարերի էջերի վերայ։

Իբսենի առաջին գրական յաջողութիւն բերել է նորա «Բրանդը»։ Թէև նորան չէին հաշուում առաջնակարգ բանաստեղծ, բայց և այնպէս բանաստեղծ էին համարում։ Դանիայի և Նորուեգիայի միակ քննադատը, որ պարտք էր համարել մի կերպ գովել Իբսենին, սակայն չէր կարողացել չասել, «եւ այս բանաստեղծութիւն է կոչուում»։

Դեռ ուրիշը տարի առաջ Բըերնսոնը արդէն հանրածանօթ էր իւր «Միւնհէ» պատմուածքով։ Նորան իսկոյն հրատարակեցին Նորուեգիայի միակ մեծ անձը։ Այն ինչ Իբսենը նորա առաջ ինչպէս մի դժգոյն լուսին էր։ Բննադատութիւնը նորան երկրորդական տաղանդ էր համարում։

Իբսենը պիտի յամառ կռիւ վարէր, որ իւր բանաստեղծական կոչումը ապացուցաներ։ Հենց ինքը երկար տանջուում էր, արդեօք այժ կունենայ բանաստեղծական մեծ գործեր գլուխ հանելու. «Նա ճաշակել էր կասկածի դառն բաժակը»։

Այս պատերազմից յաղթող դուրս եկաւ խորասուզուելով իւր սիփական եսի մէջ, իսկ միայնութեան հակումը հասցրեց Նորան մինչև հանճարին։

Նորան՝ շրջապատողների սառնութիւնը և անտարբերութիւնը աւելի ինքնավստահ դարձրին։ Երբ մի անգամ լրագրում կարդաց. «պ. Իբսեն մեծ գրող է». և մի ուրիշում. «Իբսենը չունի, ինչ որ հանճար է կոչուում, բայց նա տաղանդ է իբրև գեղարուեստագէտ», այնպէս ազդեց Նորա ինքնասիրութեան վերայ, որ ինքնագիտակցութեան մէջ ընդհանրների շարքը դասեց իրեն։

Շուտով Իբսենը հնարաւորութիւն ունեցաւ քննել այն մարդուն, որի վերայ ոչ ոք չէր կասկածում և որը առանց վարանման յաղթութիւնից յաղթութիւն էր անցնում, որի անմիջական ինքնավստահութիւնը Նորան հարբեցրել էր։

Հետևանքն այն եղաւ, որ Իբսենը մի առասպելում, որ պատկերացնում է XIII դարի սկզբում Նորուեգեան, դատաւ նիւթ, ուր ինչպէս թուում էր, իւր պատմական պատկերն էր ներկայացնում և հնարաւորութիւն էր տալիս լուսաբանելու Իբսենի և Բըերնսոնի հակադիպութիւնը։ Նա գրեց «Դահի թեկնածուները»։ Դակոնը իսկական հանճար, Սկուլէն հանճարեղ երազող։ Իբսենի երևակայութիւնը լոյս աշխարհ հանեց այն ամենը, որ Սկուլէնին դրաւիչ է դարձնում և Դակոնից էլ հետաքրքրական։

Երեք տարուց յետոյ նոր ընդհարում յառաջացաւ

հիւսիսի այս բանաստեղծների մէջ զուտ քաղաքական խնդրում, և այնուհետև երկար տարիներ Նորուեգիայի երկու բանաստեղծները զինեալ խաղաղութեամբ էին ապրում։ Բայց այս հակառակութիւնը մեծապէս նպաստեց Իբսենի առանձնայատկութեանց վերջին ծայր զարգանալուն։

Դիւրազգած, բարեսիրտ, սիրալիր Բըեռնսոնը նպաստեց Իբսենին աշխարհի առօրեայ աղմուկից հեռանալ, իր մէջ ամփոփուել և սակաւախօս դառնալ։

Բըեռնսոնը միշտ հասարակաց գործիչ էր. հայրենասէր կուսակցական մարդ և այս նպաստեց, որ հայրենասէր Իբսեն դարձաւ համաշխարհային քաղաքացի և կուսակցականը՝ անհատականութեան քարոզիչ։

Եւ այնպէս գնալով աւելի խորացաւ իւր հոգևոր կեանքի և իւր ստեղծած պատկերների մէջ. և զբաղուած բարոյական առեղծուածների լուծումով, բարձրացաւ առօրեայ և անցողական բաներից, որ ջնջում է կատարը. թատերգութեան սահմաններն ընդարձակում և դարաւոր սահմանափոսը հարթում, ոչնչացնում։

Ինչպէս բարոյախօս բանաստեղծ իւր հիմնական խնդիրը պատասխանատուութեան հարցն է։ Ի՛նչ չափով մարդս ազատ կեանքի տէր է և ինչ չափով հարկադրուած է անել այն, ինչ որ անում է։ Յուլիանոսի, Գելմերի և Նորայի, Բանդելի և «Ծովի կանանց», Ալմերսի և Ռիտայի. Սոլնեսի և Հիլդայի, Ռեբեկայի և Իրինայի մէջ այդ խնդիրն է չօշափուում, նորա չարագործ տիպարների՝ Բերնիկի և Ռեբեկայի, դժբաղդ Ալուինի և Բորկմանի և աշխարհը կատարելագործողների՝ Գրեգերսի և Մերլեի և դոկտոր Շտոկմանի մէջ։

Իբսենը չարունակ մաքառում է, որ հաշտեցնէ իւր դատաւորական կոչումը նախասահմանութեան և անհրաժեշտութեան հաւատի հետ։ Նա երբեք չի քարոզում, այլ հարց է տալիս և սիրում է մեզ խորհել։

Հետաքրքիր է տեսնել, թէ ինչպէս նա մշակում և ձևակերպում է իրական կեանքից վերցրած հատ հատ

տարրերը իր երևակայութեան ոյժով և մի լրացրած պատկեր տալիս։ Կիրկեգորդը և իր աշակերտ Լամերտը «Բրանդի» նշմարներն են։ Նոքա երկուսով էլ բարեպաշտութեան եռանդից թողել են եկեղեցին։ Կիրկեգորդը «Բրանդի» նման մեծ և խիտ, չուտ էլ մեռել է։ Սակայն Իբսենը որոշ ձև է տալիս և վարուում իր սեփական անձնաւորութեան համաձայն, Բրանդի պահանջած էութեան ամբողջութիւնը Իբսենի անձնական պահանջն է։ Խստութիւն, պնդութիւն և դաժանութիւն սեփական եսի գծերն են, նոյնպէս և անձնական կամքը։ Բայց ունի հոգու խորքում կասկած իր երկերի մասին, ուստի նա իր հերոսին իրաւացի չի ճանաչում, բայց ոչ էլ ցանկանում է ոչնչացնել։

Այս երկուութիւնը հէնց Բրանդի վերայ է երևում, զուտ մարդկային պահանջը—լինել կատարեալ, հանդիպում է քրիստոնէականի հետ,—հրաժարուել վայելքից։ Առաջինը Իբսենի դիտակցական հոգևոր կեանքն էր, երկրորդը՝ քրիստոնէական ժառանգական զգացմունքը։ Ինչպէս հեթանոս՝ երջանկութիւնը կեանքի լրութիւնն է ընդունում, բայց խոնարհում է անձնուրացութեան առաջ։ Ճգնաւորականի ժուժկալութիւնը զուգահեռաբար ապրում է նորա մէջ կեանքի վերայ ունեցած բազմատեսակեան հայեացքի հետ և նորա բոլոր երկերի մէջ երևում է այդ։

Օտարերկրացիների հանած տպաւորութիւնը զուտ տեսական այս է՝ թէ Իբսենը հասարակաց օրէնքներից և սովորութիւններից ազատուելու մտնեսիկն է, կեանքի ուրախութեանց համբաւաբերը։ «Ուրուականների» մէջ նա վրդովեցուցիչ է. Սոընեսում եկեղեցու թշնամի. «Ծառայաբանի» մէջ տանուլ տուած կեանքն է ողբում, որովհետև նորանում տեղ չկար սիրոյ, ուրախութեան, այլ միայն աշուեսաի և վաստքի։

Բայց և ամէն տեղ, պատկերացրած է զգայական կեանքը՝ միշտ անհրապոյր է։ «Կայսեր և Գալիլիացու» մէջ համարեա զզուելի է։

Այն անձինք, որոնք կեանքի ծարաւով են տոգո-

բուած, պարզամիտ են և օր. տիկ. Վիլման Բոլկմանի մէջ և արջի օրօրոցները։ Ջեղխութեան մէջ նա միայն կոպտութիւն է գտնում և հեղինակելու սիրոյ մէջ՝ ստահօսութիւն և պարծենկոտութիւն։ Պետրոս Գիւտի սուրը միայն խաբեբայութիւն չէ, այլ և ինքնախաբէութիւն։ Էապէս նա շատ հետաքրքիր տիպ է, որի համար հանգամանքները շատ անյաջող են կերպաւորել։ Երբեմն նեղկայանում է երգիծանք Նորուեգեայի առանձնայատկութեանց և ազգային արատների և հեռաւոր ազգակցութիւն ունի Սերուանտեսի Դոն Կիշոտի հետ և մերձաւոր Գոգէի Տարտարէնի հետ։

Թէ ինչպէս Իբսենը իւր ցանկութիւնները ճշտում է կեանքի տպաւորութիւններով և բանաստեղծական տիպարներ է ստեղծում, ցոյց տանք «Նորա»ի օրինակով։

1879 թ. Իբսենը նամակագրութիւն է ունեցել մի կնոջ հետ, որի անունը մի քիչ նման է Նորային։ Վերջինս յաճախ դանգատուել է տան հոգսերի համար. և երևայել է, որ գանգատի իսկական պատճառը փողի նեղութիւնն է եղել։ Վերջը այդ կինը կեղծ ատորագրութեամբ փող է ձեռք բերել, հարկաւ՝ ոչ ամուսնու կեանքը փրկելու, այլ տան կահաւորման համար, որի հետևանքն է լինում ամուսինների ամենօրեայ կռիւը։ Այս պատմութիւնը իւր հանապազօրեայ դառնութիւններով բաւական է լինում, որ Իբսենը իւր երևակայութեան ուժով մեծ դեղարուեստագէտի անուան արժանի երկ գարձնի։ Նա նոր գաղափարների համապատասխան՝ կնոջ ինքնուրոյնութեան և անհատական իրաւանց, կնոջ իւր սեփական կեանքով ապրելու գաղափարով է ձևակերպել։ Այս տեսակ ստեղծագործութեանց օրինակներ շատ շատ կարելի էր մէջ բերել։ Այսպէս աննշան, իրական կեանքում գրիւ ցաքան գծերը հաւաքելով Իբսենը խիստ, կապակցեալ, խորը մտածուած ամբողջութիւն է տալիս։

Իբսենը չատ երկեր ունի գրած. սակայն նորան աշխարհահռչակ դարձրել են ասելի ուշ ժամանակ գրած 12 դրամաները հասուն հասակում։

Այդ 12-ից 6-ը վիճաբանական բնաւորութիւն ունին և ուղղուած հասարակութեան դէմ—«Հասարակութեան սիւները», «Տիկնիկի Տնակը», «Վայրի բադը» և «Ռոսմերսհոլմ»։

Մնացած 6-ը զուտ հոգեբանական հետաքննութիւն են, նուիրուած մարդու և կնոջ յարաբերութեան, ուր կանայք առաջնակարգ տեղ են գրաւում։ Այդ դրամաներն են «Ծովի կանայք», «Հեդդա Գաբլեր», «Սոլնես» «Էյոլֆ», «Բորկման», «Մենք մեռեալներս երբ պիտի յառնենք»։ Այստեղ կամ ընտանեկան և կամ անձնական ողբերգութիւն է. հասարակական կամ պետական յարաբերութիւններ աներևին չեն շօշափուում։ Բայց և այնպէս այդ դրամաների մէջ էլ Իբսենը իրեն ցոյց տուեց առաջնակարգ գաղափարավար և բանաստեղծ։

Իբսենի նշանակութիւնը պարզելու համար չահեկան կլինէր համեմատել նրան իւր ժամանակի գաղափարավարների հետ։ Իբսենի մեկնողը և թարգմանող Գրանդ Պրոզոր այս փորձը արդէն արել է։ Իբսենի հետ միևնոյն դարում ծնուել են երկու մեծ գաղափարավարներ—Դաղիայում՝ Տենը և Ռուսաստանում՝ Տոլստոյ։ Թէև գոքա ոչ իրար նման են, ոչ էլ Իբսենին, սակայն և այնպէս ունեն ազդակցական գծեր։

Տենը Իբսենի նման մի ըմբոստ խելք էր և իւր առաջին 40 տարիները ֆրանսիական մտաւոր կեանքում յեղափոխութիւն յառաջացրեց։ Բայց ժամանակի ընթացքում ասելի ու ասելի մօտեցաւ Իբսենին՝ թշնամի յեղափոխութիւն, որ ամէն բան հաւասարում, տափակացնում, որպէս զի սպանի և ստորացնի ամէն դուրս ընկած բան։

Թէ Իբսենի և թէ Տենի արհամարհանքի առարկան մեծամասնութեան ոամկավարութիւնն է, որ Իբսենի առա-

լով միշտ անիրաւ է լինում։

Տենը Իբսենից էլ աւելի պահպանողական է քաղաքականութեան մէջ. նորա իդեալն է Անգղիայի քաղաքական կազմը՝ պահպանել անցեալի թանկագին աւանդութիւնները, տեղական ինքնավարութիւն և լայն զագաթումն, նորը հիմնել հնի վերայ։

Իբսենի համար կատարելապէս պարզ էր այն տեսութիւնը, որ իւրաքանչիւր վարդապետութիւն ինքն ըստ ինքեան շատ քիչ բան է նշանակում—ինչ անուն էլ կրելու լինի՝ սահմանադրութիւն, ռամկավարութիւն, թէ մի այլ բան։ Իրական փոփոխութիւն տեղի կունենայ այն ժամանակ, երբ մարդիկ փոխուենն։ Այս հասկացողութեան վերայ, նորա կարծիքով հիմնուած է առողջ սրմատակատնութիւնը։ Մի համայնական կարելի է աւելի նեական է քան մի անհատական և մի պահպանողական՝ աւելի հասարակական կարգերը կքանդէ քան մի արմատական։ Բանը ոչ թէ անունն է, այլ էութիւնը։ Սակայն Իբսենի վերայ չպիտի նայել իբր իմաստասէրի, մանաւանդ թէ քաղաքական. Տենը իմաստասէր էր, Իբսենը մարդիկ։

Տոլստոյը՝ չնայած իւր մեծութեան, աւելի նեղ մտածող է։ Նա Տենին չի ընդունում, իսկ Իբսենին ըմբռնում է իբր անմիտ բանաստեղծի։ Նա էլ Իբսենի նման յեղափոխական է, հասարակական նախապաշարմունքները քանդող և նոր պետութիւնից դուրս հասարակական կարգերի առաքեալ։ Դրա մտածում են անիշխանական, պետութեան հակառակ հայեացքներով։ Բայց մինչ Իբսենը աղնուական ձգտումներ ունի, Տոլստոյը հաւատում է հասարակութեան։ Տոլստոյը քարոզում է Աւետարանի սէրը, Իբսենը առանձնութեան վայելչութիւնը։

Իբսենը ունի մի քանի ընդհանուր հիմնական գծեր և Ըրնանի հետ, որ մի քանի տարով մեծ է և որի գրուածքները համարեա չէ կարդացել, ինչպէս և Տենինը։

Իբսենի խօսքը թէ «ես միայն հարց եմ տալիս, պատասխանելը իմ կոչումը չէ», որոշ չափով կարելի է վերադրել նրբամիտ Ըրնանին և նորա երկբայող մտածողու-

թեան։ Երկուսով էլ զարթեցնում են կենսական այժերը. Ըբսենը հրապուրելով, Իբսենը՝ սարսափեցնելով։

Իբսենը Բրանդի բերնով ասում է, որ եկեղեցին, որի վերայ տարածուում է երկնակամարը, ոչ պատ ունի, ոչ առվան. նոյնը մի քիչ այլ բառերով ասում է և Ըբսենը. «Հին եկեղեցուն պիտի փոխարինի նորը և ամենամեծը։ Մի կրօնական դաւանանք պիտի տեղի տայ միւսին, առաւածութեան մի տեսակը ուրիշին, որովհետև մեզերքի իսկական ծագումը անչափ բարձր է, քան մեր ողորմելի երևակայութեան թոռթովանքը»։ Իբսենը միւս կողմից մօտենում է և Նիցշէին։ Վերջինս Իբսենի նման աղմկայոյզ մտքի տէր է և Իբսենի պէս էլ հեռի է պահում իրեն քաղաքական և գործնական կեանքից։

Դոյա առանձին նմանութիւնը այն է, որ երկուսն էլ նշանակութիւն են տալիս իրենց ծագման—որ ազնուական տոհմից են։ Երկուսով էլ վայելում են այն գաղափարը, թէ պիտի կրթել ազնիւ մարդիկ։ Այս Ռոսմերսհ սիրելի գաղափարն է. ինչպէս և Նիցշէն գերմարդու մասին է խօսում, զարմի առաջին լանդրի, մինչև որ Զարադուստրան կայտառարար գերմարդու մասին։

Դարձեալ՝ Նիցշէն այնպէս է սիրում կեանքը և նորա ներքին էութիւնը, որ ճշմարտութիւնը ինքը այն չափով գին ունի, ինչ չափով որ նպաստում է կեանքի պահպանութեանը։ Մտութիւնը, խաբեբայութիւնը այն ժամանակ միայն գնաստակար են և աւերիչ, երբ խափանում են կեանքի ընթացքը։ Մտութիւնը, կեղծիքը նրան չի խրտնեցնիլ, ուր անհրաժեշտ է կեանքի համար և այս կետում նա մօտենում է իւր հակառակորդներից չատերին, մանաւանդ եղուխաններին, որոնց այնքան ատում էր։

Իբսենը, որ ամէն հանգամանքում ճշմարտութեան երկրպագու է, քանի գարգանում է՝ մօտենում է նոյն հայեացքին, երբ դոկտոր Ռեյլենդի բերնով ասում է թէ «կեղծիքը անհրաժեշտ է կեանքի համար»։

Սրդէն «Ուրուականներին» մէջ միշտ ճշմարտութիւնը ասել անհնարելի է համարում։ Ցրու Ալուին տեսնում է,

բայց չի ուզում պատմել Ռուալդին նորա հօր մասին։ Նա սարսռում է, երբ մտածում է, որ կսկսնչացնէ նորա բոլոր իդեալները։ Ֆռաս Բորկմանը ապրում է ինքնախաբէութեամբ. նա համոզուած է, որ իւր որդին մեծ գործ ունի կատարելիք. Բորկմանը ինքը ինքնախաբէութեամբ է բռնուած. նա հաւատում է, որ նրան հրաւիրակներ կգան և կխնդրեն բանկի ղեկը ընդունել։

Թէ Նիցշէն և թէ Իբսենը անդիտակցաբար ձգտում են դիտակից հոգեւոր կենաց. վսեմութեան ձգտումը երկուսի մէջ էլ մի բնազդ է։ Միայն Իբսենի դաւանանքով կինը պիտի պահպանի այդ ձգտումը մարդու մէջ։ Հասարակական բարքի և տուութեան դէմ միակ ղէնքը կինն է. նորա երկերում կինն է ուժերը պահպանողը և վառ պահողը։ Այս խնդրում շատ խիստ դատապարտում է Նիցշէից, որը ատատիկ տուում է կանանց։ Նիցշէի կարծիքով կինը մարդուն ներքև է ձգում, նա բնութեան ոյժ է, որի հետ պէտք է մաքառել։

Թէ Նիցշէն և թէ Իբսենը մենակ էին և երկուսով էլ շատ քիչ էին հոգս տանում իրենց երկերի բաղդի մասին։ Իբսեն Շտոկմանի բերնով ասում է. «Նա ամենատուժեղն է, ով որ ամենից մենակն է»։

Մի վերջին խնդիր է մնում վճռել. երկուից որի՞ աշխատանքը աւելի խորն է, մեծ ազդեցութիւն կթողնէ և աւելի երկար կպահէ իւր փառքը. հարցեր, որ բաւականին դժուար է որոշել։

Իբսենը հիւսիսում բոլորին հարստացրեց գաղափարներով, մեծապէս ազդեց թատերգուների վերայ, բայց դպրոց չստեղծեց։ Ութսունական թուականներին Գերմանիայում սկսուեց Շիլլերի իդեալիզմին հակառակ հոսանք և ոլնունեցին Իբսենին՝ իբր բնականութեան ներկայացուցչի՝ հաւասար Զոլային և Տոլստոյին՝ չնկատելով սորա իդեալիզմը։ Գերմանացի ընթերցողները չլսած Իբսենի՝ փոքրամասնութեան և միայնութեան վերայ ունեցած հա-

ատով՝ ընդունելին նրան մերթ համայնական, մերթ անհատական։ Ռիխարտ Բոսից մինչև Հերման Բարը և մանավանդ Ներգարտ Հաուպտմանը՝ թատերգուների մէջ ամենից մեծը՝ Իբսենի հետևողներն են. «Արևածագից առաջ» «Ուրուականների» ազդեցութեան տակ է գրուած, իսկ «Խաւարի իշխանութիւնը, «Մուգուած զանգը» «Բրանդի և Սոլնեսի»։

Անգղիայում էդմանդ Գոսսէ, Վիլիամ Անչար և Բերնարդ Շաու եռանդով աշխատում էին Իբսենի փառքը տարածելու համար։ Բայց մինչդեռ Անգղիայում յարձակուում էին Իբսենի վերայ, ոչ միայն անհատականալի համարելով նորա գաղափարները, այլ նորա նիւթապաշտական ուղղութեան համար և գովում էին յատկապէս իբր հոգեբան։

Ֆրանսիայում, երբ սիմբոլիզմը նորութիւն էր, Հենրիկոս Իբսենին ողջունում էին իբր մեծ սիմբոլիստ։ Խորհրդաւորութիւնը (մեստիքականութիւնը) նոյնպէս դուր էր գալիս նոցա։ Բայց նրան ընդունում էին իբր անիշխանական։ «Ժողովրդի թշնամին» ծափահարում էր իբր բողոք հասարակութեան և պետութեան դէմ, իսկ Ուրիկ Բրենդելի վերայ նայում էին իբր հասարակութեան հացէին մի երգիծանք։

Նորուեգիայում սկզբում ընդունում էին Իբսենին իբր պահպանողական, աւելի ուշ արմատական։ Գերմանիայում ողջունեցին իբր նատուրալիստ և համայնական, Ֆրանսիայում իբր սիմբոլիստ և անիշխանական։

Մի խօսքով ամէն երկրում երկար ժամանակ տեսնում էին նորա միայն մի քանի կողմերը, որից պարզ է թէ ինչպէս բազմակողմանի և խորն էր Իբսենը։

Ս. Շահազիզեան.

ԳԻՏԱԿԱՆ

ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԸ

Մեր նախաթարուքիւնները «աւատական իշխանուքիւն» կոչեցինք։ Եւ յիրաւի այդ երկու հասատատուքիւնները աւատականուքիւնը և մեր նախաթարուքիւնը յար և նման են միմեանց, եթէ չասենք որ միևնոյն են իւրեանց կազմակերպուքեամբ։

Երկուսն էլ ունէին սեփական ժառանգական երկիր, զօրք և հաւանօրէն և՛ մեր նախաթարուքիւնը իւր հպատակների բարձրագոյն պետն ու դատաւորն էր։ Մեր նախաթարուքիւններն ևս, ճանաչելով Հայոց արքաներին իբրև վեհապետի՝ souverain-ի մեռած են, դոնեա գլխաւորները, գերիշխան՝ suzerain, ունենալով իրենց գերիշխանութեան տակ այլ նախաթարուքիւններ։ Եւ այս ոչ միայն իրենց տոհմի երկրորդ, երրորդ և «այդ» կամ՝ «միւս» կոչուածները[1], որոնք անտարակոյս ենթարկուում էին ցեղի

---

1 Վռամական գահնամակն ունի 1. Ա. Սիւնեաց տէր, ԻՐ, Սիւնեաց երկրորդն։—2. Դ, Աբծրունեաց տէր. ԻԹ, Աբծրունեաց երկրորդն. Լ. Աբծրունեաց երրորդն։—3. Դ, Մամիկոնէից տէր. Լ Ա, Մամիկոնէից երկրորդն։—4. Անձաւացեաց տէր. ՃԸ, Ա յղ Անձաւացի։—5. ՃԱ, Ապահունեաց տէր. ՃԳ. Ա յղ Ապահունի։—6. ՃԴ, Վանանդացին. ԿԳ, Վանանդացին երկրորդն։—7. Իէ, Աբեղէնից տէր. ԼԶ, Ա յղ Աբեղեանն։—8. ԼԴ, Դիմաքսեանն. Լե, Բաւխա Դիմաքսեանն. Լէ, Ա յղ Դիմաքսեանն. Կէ, Ներքակա Դիմաքսեան։—(Ղ. Ալիշան, Այրարատ էջ 430—431)։—9. Ծոփք (Սոփերք Զ, ե, էջ 32) կամ զօրանամակի Ծոփացին ունի երկու անջատ նախաթարուքիւն իւր առանձին իշխաններով «Մեծ Ծոփք և Ծոփք կամ Միւս Ծոփք և կամ Ծոփք Շահէի կամ Շահունի Ծոփք» (Փ. Բուզ. Գ, թ, էջ 21, Գ, ժբ, էջ 29. Դ, դ, էջ 72—73. Դ, իդ, էջ 146)։ Սոփերք Զ, գ, էջ 30 և 25, որտեղ Վաթապդ Շահունի=Վաթապ Շահունի, ևս Զ, ա, էջ 11 և Զ, ը, էջ 53։—10. Ռաւեղեան նախաթարուքիւնն ևս գէթ մի երկրորդ

նահապետին կամ տանուտէրին, ինչպէս այսօր Մակուայ խանութեան մէջ է, այլև բոլորովին տարբեր տոհմերու։ Արծրունիք, Հայաստանի չորս գլխաւոր նախարարութիւն-ներէն մինը, ունէին գետ ե. դարուն իրենց ցեղի տոհ-

---

ճիւղ ունեցել է։ «ի տոհմէն առաջին Առաւեղէնից» ասում է Ղ. Փարպեցին Բ, խէ, էջ 86։—11. Պալունիք ևս երկու են, ինչպէս գաւառը կամ երկիրը, այնպէս էլ նախարարութիւնը, մինը Վասպուրականում, միւսը Տարօնում (Հ. Հիւբշման Altarm. Ortsnamen Դ, ը, 95, էջ 345)։—2. Արծրունեաց ե դարում մի երկրորդ ճիւղ լինելուն ապացոյց են և Ղ. Փարպեցի Բ. խը, էջ 75 և Բ, խէ, էջ 86. Հրտր. Ս. Էջմիածնի. Տփղիս 1904։ Հմմ. եղիշէ Ը, էջ 310—311. այլև ե. էջ 153—154. Թէոդոսիա 1861։ Իսկ լիներորդ դարում այդ երևում է Թ. Արծրունու պատմութիւնից ակներև կերպով։—3. Մամիկոնեանք Դ. դարում ունին երկու «տուն», մինը բուն երկիրը Տայք, միւսը «այլ տուն. (Փ. Բուզանդ Գ, ժը, էջ 47)։ Որ այստեղ տունը միայն կալուածք չէ նշանակում, այլ և նախարարութիւն, ցեղի մի երկրորդա-կան ճիւղ, այդ երևում է Խորովեան գահնամակից. ըստ Մ. Երէցի Մամիկոնեանք 10-րդ տեղումն են, բայց ունի և «Մամի-կոնք երկրորդ» 80-րդ տեղում (Սոփերք Զ, ե, էջ 32—35)։—4. Անձևացոց երկրորդ ճիւղ լինելուն ապացոյց է և սոցա Պաղէս-տինում շինած վանքերը «Անձևացեաց վանքն, որ յանուն Ս. Անանիայ մերձ ի Բեթղեհէմ» և «Այլ Անձևացեաց վանքն» Գալի-լեայ կողմը Առատաճատուր եպիսկոպոս Տէր-Յովհաննէսեանց Պատմ. Ս. Երուսաղէմի I, ծԱ, էջ 91—92. Երուսաղէմ 1890)։—5. Դիմաքսեան երեք ճիւղ լինելուն ապացոյց ունինք և եղիշէի պատմագրութիւնը, որոնց նախարարները ջոկ ջոկ յիշուած են, ուր կան բացի երկու Արծրունի տոհմերից, երեք Դիմաքսեան, 27 նախարարներից է. Թաթուլ Դիմաքսեանն է, ծԳ, Համայեակ Դիմաքսեան, ծե, Միւս ևս այլ Դիմաքսեան (եղիշէ ե, էջ 153—154), նոյն որ Բուլա Դիմաքսեանը գօրանամակի Հիւսիսային դռան ծե, Բոլայեցին է (Շահխաթունեան I, § 382, էջ 58-ի և 59-ի միջև) այս յօդուածի վերջում կը տեսնենք։ Այս բոլորից յետոյ մեզ անհիմն է թուում Ի. Ջավախովի կասկածը, թէ Վռամական գահնամակը կեղծիք է (Государственный Строй Древней Грузіи и Древней Арменіи I, էջ 120—121. С.-Петер-бургъ 1905. Հմմ. Գ. Խալաթեանց Армянскіе Аршакиды, էջ 294—299, Москва 1903)։

բաբաժանմունքները, Թ. դարում ունին նույնը, որոնք կէսանկախ էն, բայց մինչոյն ժամանակ բոլորովին տարբեր և այլ հպատակ նախարարութիւններ։ Հռիփսիմէի որդի Աշոտ Արծրունին իւր Գուրգէն և Գրիգոր եղբայրների, այլև Արծրունի ցեղակիցների հետ գնում են իրենց քեռի Տարօնոյ Բագրատ Բագրատունուն օգնութեան Մուսէի դէմ։ Նոցա հետ գնացին «և այլք ի նախարարաց վաստակաւորական իշխանին»[1]։

---

1 Ահա այդ տոհմերը, «Սմբատ Ապահունի, Գրիգոր Քաջբերունի, Վահան Հաւնունի, սեպուհն Դաւիթ, Գագըկն Ապուհարազ (*մակդիր թէ տոհմ՞*), Թոդոսոս Վարազի (=Վարազ), Խոսրով Վահեւունի, Խոսրով Ակեացի, Վարդան Դաբայեղեց, Սմբատ Մարացեան, սեպուհն մի Սահակ, Պատրիկն Անձեւացի, Գօրգ Հարմացի (Բարմայլ՞), Դաւիթ Գունդստաղսը, և այլ բազումք յաշատ տանէ Թ. Արծրունի Բ, *գ.* էջ 109։ Մինչդոյն էջում Թ. Արծրունին յիշելով այն պատերազմն *տանուտէրց* Արծրունի երկոց գօրքով, անմիջապէս կցում է. «Եւ ի տանէն Բագրատունեաց Թոռնիկայ որդի գօրաւք իւրովք, ի տոհմէն Ամատունեաց Շապուհ Ը. հարազատօք և գօրօվք իւրեանց, ի տոհմէն Գնունեաց Գրիգոր որդի Հազրի Զ. այլ ևս հարազատօք և գօրօք իւրեանց, ի տոհմէն Կնտրունեաց Արտաւազդ է, հարգատօք գօրօք իւրեանց։ Որ վերջիններս անկախ չէն, այդ երևում է այն հանգամանքից, որ երբ Գագիկ Ապուսմրատանը Գրիգոր Գեղեկի որդուց Աշոտին՝ իւր փեսային ու Գագիկին ու Գուրգէնին *քանտարկում է*, «Յետ Տրունեաց տէր որդի Հոնաւարաց, Վարդգապուհ Աբելիցից տէր, Թագէոս Ակեացի Շերեփայ որդի, և այլք ընդ նոսա» գնում են նախ Գուրգէն Ապուպելէ Արծրունու որդի Գուրգէն Ա-ին կամ Մեծին «գտանել զերս երջայն» բայց գրանից գժգոհ՝ թողեցին ընտանեքով երենց տները, հայրենիքը և գնացին Համիդի տէր Ահմաթ օտար իշխանի մօտ լաւագոյն համարելով պանդուխտ և օտարութեան մէջ լինել, քանթէ տեսնել *քանտարկուած* երենց իշխանի որդուց, այս աշխարհի իշխանին, որոնք «որսի մտօք ի մանկութենէ զհարկ ծառայութեան հատուցեալ էին ըստ օրինի վայելչութեան հնազանդողաց, ըստ յորդորման հեթանոսաց վարդապետին» (Թ. Արծր. Գ, երր, 235—236)։ Պօղոս առաքելոյ սահման անկարճած յայտնի պատուէրի հակառակ «նահապետաք աղատաց վաստակաւորական իշխանին (Աշոտոյ)՝ Մուշեղ ի ցեղէ Վահեւունեաց, Վահրամ

Նեչտելով այս նահանութիւնները և մանաւանդ յատկապէս վերջին կէտը, որ յարդ անուշադիր է թողնուած, դառնանք կալուածական խնդրին։

Ամբողջ Հայաստանը բաժանուած էր նախարարութեանց, որոնք ունէին իրենց սեփական գաւառները, աւանները և գիւղերը և ագարակները, որ մեր բազմաթիւ նախարարութիւնները նախ խոշոր և մանր կալուածատէրեր էին, Թագաւորն ինքը խոշոր և ամենամեծ կալուածատէրն էր, և այդ այնպէս այնքան հին է, որ Հայաստանի գաւառների և նախարարութեանց շատ շատերի մանաւանդ հնագոյնների անուննները նոյն են, այնպէս որ Խորենացին «զՀայաստանեայցս նախարարութիւնս, զամենեցունց զուստն և զղիարդն յայտնելով համառօտ»[1] Ռշտունեաց և Գողթնեցոց մասին ասում է, «Գոհ պատմեալ ի սխալականէն արդարև հատուած. ոչ գիտեմ, թէ յանուն արանցն զգաւառն անուանեն, և թէ (=եթէ) յանուն գաւառացն զնախարարութիւնան կոչեցեալ»[2]։

Այդ որն են Մամիկոնեանց կալուածքները։ Փ. Բուզանդացին պատմում է, թէ ինչպէս անօրէն և դիւահար Հայր մարզպետը Խոսրով Կոտակի որդի Տիրան Թագաւորին գրգռեց նախարարների ազգերի դէմ և շատերին քստութեամբ կոտորել տուաւ։ Մանաւանդ «երկու աւագ տոհմերը» Ռշտունեաց և Աբծրունեաց ուզեց «անդունդ» ածել տալ։ Մեհենդակ Ռշտունու Տաճատ և Վաչէ Աբծրունու Շաւասպ որդուն փախցրին Արտաւազդ և Վասակ Մամիկոնեան զօրավարները այնտեղ հանդիպելով «և զնացին ի բաց ի բանակէն արքունի։ Եւ չոգան յաշխարհն

յազգէ Տրուճեաց, Վահրամ միւս ևս, որ և բիկճապահ եչխանէս և այլ գունդք ազատաց և զօրական պետութեանց» (Թ. Աբծր. Գ, ը, 134) մատնում են Աշոտին Բուզայի ձեռքը։ Աբծրունի տոհմերի «ըստ ազգս ազգս» մասին տես ևս Թ. Աբծր. Գ, ժբ, 191. իսկ «բազմութիւն ազատաց և մեծամեծացն Աբծրունեաց նախարարութեանց» տես Թ. Աբծր. Գ, գ, 143։

1 Մ. Խոր. Ա, ա, 4. Վ.Հենեթիկ։

2 Մ. Խոր. Բ, ը, 80։

իւրեանց յամուրս Տայոց. և անդ նստան ամս բազումս ընտանեօք իւրեանց, և թողին զայլ տուն իւրեանց»[1]։

Սրշակ Բ. թագաւորելով եղեւում է ի խնդիր «տոհմին զօրավարաց ազգին քաջացն Մամիկոնենից, մանաւանդ զի իւր դայեակը և սնուցիչք էին։ Ապա երթեալ գտանէր զնոսա յամուրս աշխարհին Տայոց յիւրեանց աշխարհին». և գարձնում է նոցա յընդանութիւն, զի պառակտուած և քակտուած էին ընդանութիւնից և Հայոց բոլոր գործոց ի Տիրանի խօսութեան այսինքն գժութեանց ժամանակ։

Սյս Մամիկոնեաններից էին, ինչպես յիշում է Փաւստոսը, Վարդան երէց եղբայր, որին Նահապետ է կացուցանում և Վասակ, միջնեակը, որին սպարապետ է կարգում։ Արդ այս Վարդանը, «Մամիկոնեան տոհմի տանուտէրը» և «Նահապետը» Շապուհ արքայից արքայի հրովարտակը բերում է Սրշակին, որ նորան յորդորում էր հնազանդելու մոռանալով անցեալը։ Սրշակը սիրով լսում է պատգամին, հաւանում է ասածին «եւ խաղաղութեամբ արձակէր զմեծ Նահապետն ի տուն իւր, զի երթիցէ հանդիպիցէ յաշխատութենէն յերկայն ճանապարհէն. և գնաց»։ Տիրատէր Վասակը, մանաւանդ և թագաւորի կին սիակալ Փառանձեմը, գրգռում են Սրշակին Վարդանի դէմ, և ինքն իսկ Վասակը զօրքով գնում է հարազատ եղբօրն սպանելու։ «Ապա երթեալ գտանէին զնա յիւրում զաւառին ի Տայս[3], յիւր ամուր ըստրին որում անուն Էրախանի[4] կոչի»։

---

1 Փ. Բուզ. Գ. ժը, 47, Վենետիկ 1889։

2 Փ. Բուզ. Դ, ը, 67։ Սոփերք, Զ, ը, էջ 16. Մ. Երէցն աւելացնում է «ընդ նոսին և զգնուն[ի]քն»։

3. Փ. Բուզ. Դ, ժը, 131—132։

4 Սյս ձևն է ճիշտ և ոչ մեւս վոտիոխակը Ախանի. որովհետև այսօր էլ կայ այդ «ամուր բերդը» և գտնուում է ձորոխի ափին, Օլթի-չայի և վերևինի խառնարանից ներքև, և կոչուում է Իրխան, ինչպես այդ հաստատում է Կիպերտը. տես նորա Տրապիզոնի աշխարհացոյց քարտէզը։ Համմ. H. Hübsemann. Die Altarmenischen Ortsnamen, IV, § 162—360:

Որ Տայքը Մամիկոնեանցն է եղել և ե. դարում, այդ երևում է Եղիշէի, մանաւանդ Ղ. Փարպեցու խօսքերից և վկայութիւններից։ Վերջինս պատմելով թէ ինչպէս Հայաստակի սրդիքը Վահան, Վասակ և Արտաշէս Վրաց Աշուշայ բդեշխի ձեռքով ազատուելով անուսում և կրթուում են Վրաստանում իսրեանց մօր Զուրիկի խնամքի տակ, որ ծնում էր քոյր Անուշ-Վռամի՝ Աշուշայի կնոջ մօտ, աւելացնում է. «Բայց էր նոցա միւս ևս եղբայր կրսեր, անուն Վարդ, որ էր մնացեալ տղայ ի ղայեակս իւր ի Տայս»[1]։ Այժմ պէտք է հասկանալի լինի, թէ ինչու Վարդանանց պատերազմին Աւարայրի մեծ ճակատամարտից յետոյ 451-ին «Հայոց փախստականների բազմութիւնը նախարարներ և սեպուհներ, ստանիկներ և ռամիկներ, դիմելով Տայոց երկիրը ժողովուսում էին սուրբ Վարդան զօրավարի եղբօր Հմայեակի մօտ, որ ուշացել էր Յունաց աշխարհում»[2]։ Եղիշէի ասելով Հայերից, որոնք ամրացել էին «Խաղդեաց լեռներում[3], երբոր տեսան թէ Պարսկաց զօրքը յանդգնաբար և աներկիւղ իջնում էին Հայոց աշխարհի ամրութիւնները, նոքա ևս մեծ զօրութեամբ յարձակուեցան Տայոց Զորագաւառը։ Եւ այնտեղ գտան արքունի զօրքից մեծ գունդ, որոնք կամենում էին առնել այն աշխարհի ամրականներին. դարձեալ և կարծում էին էլ թէ նախարարների (անշուշտ Մամիկոնեանց) գանձերն այնտեղ են, ուստի անխնայ յուզում (=խուզարկում) էին վայրերը»[4]։ Եւ դարձեալ երբոր Հայերը տեսան էլ այնտեղ երկու[5]

---

1 Ղ. Փարպ. Գ, կբ, 111, Հրատարակութիւն Ս. Էջմիածնի 1904, Տփղիս։

2 Ղ. Փարպ. Բ, խա, 73։

3 Խաղդեաց սահմանակից այդ լեռները Ղ. Փարպեցին կոչում է Պարխար (Ղ. Փարպ. Բ, խա, 74—75)։ Այդ լեռների մի մասն անշուշտ Տայքի մէջ է, ուր փախչում է Վահանի որդի հայրասպան Սամուէլ Մամիկոնեանը «եւ ինքն փախստական լինէր յերկիրն Խաղդեաց» ասում է Բուզանդը Դ, ծԹ, 184։

4 Եղիշէ Ե, 199, Թէոդոսիա 1861։

5 Կարծես թէ Եղիշէն երկու գնդ ասելով չվոխում է

գիւղամ եկեղեցիներն այրուած, բարկացան, յարձակուեցան, կոտորեցին չատերին նոցանից և փախցրին այն աշխարհից։ Եւ այնչափ յանդուգն յարձակմունքից ընկաւ քաջալերեամբ միայն երանելի Հմայեակը, Հայոց սպարապետ Վարդանայ եղբայրը։ Փարպեցին այդ գիւղը, ուր ընկաւ նահատակ Հմայեակը, անուանում է «Որջնհաղ[1], ի գաւառին Տայոց»։ Այսպէս էլ Ե. դարու վերջին քառորդին, երբ հայերը և Վահանը Սահակ Բագրատունուն «Հայոց մարզպան են կարգում» և Վահանն էլ հայերից ընդունում է «Մամիկոնեանց տէրութիւնը և Հայոց սպարապետութիւնը»[2], տեսնելով որ իրենց զօրքը դեռ ևս անկազմ և անպատրաստ է, «խորհում են առ վայր մի չուել Տայոց գաւառի ամուր տեղերը»։ Սոյնպէս Ճարմանայնու[3] դաշտի ճակատամարտից յետոյ Վահանը «առ վայր մի գնում է Տայոց ամուր տեղերը, ուր նորա մօտ ժողովեցան Հայոց փափուկ ինքնքորները և ուրիշները Հայոց աւագ նախարարներից. իսկ երկու կամաւորականները միշտ էլ նորա հետ էին, նորանից անբաժան և միաբան»[4]։

Արդ Տայքը Փ. Բուզանդը վերև Մամիկոնեանց «աշխարհ» և Վարդան Մամիկոնեանց Նահապետի «գաւառ» անուանեց։ Այս խօսքերի վրայ հիմնուած ուսուցչապետ Հիւբշմանն ասում է թէ այս ամբողջ նահանգը Դ. դարում Մամիկոնեանց է պատկանում[5]։ Առ հասարակ մեղ-

---

Հմայեակի նահատակութեան գիւղը, որ ըստ Փարպեցու Որջնհաղն է, Վահանի ժամանակի անցքերի հետ։ Հազարաւորապատ ընկնելով Վահանի եռանից և երթալով Տայոց Որջաղ գաւառը «դանակում է այն գիւղերի մօտ, որի անունն էր մինչեն Գիւղիկ և միւսին Վարդաշէն» Ղ. Փարպ. Գ, հթ, 145։

1 Ղ. Փարպ. Բ, խա, 74։

2 Ղ. Փարպ. Գ, կը, 121։

3 «Դաշտն Ճարմանոյ» Օրբէլեան Պատմ. ժէ, 46։ Մոսկվա 1861։ «Ճարմանու հովիտն» Սիմէոն Ալպարանցւոյ վիպասանութիւն էջ 60, Վաղարշապատ 1870։

4 Ղ. Փարպ. Գ, հե, 135։

5 Die Altarm. Ortsnamen. III, 14. էջ 276։

նում այն կարծիքն է տիրում, թէ մեր նահանգներից կամ գաւառներից մինը սեփականութիւն է ամբողջապէս այս կամ այն նախարարական տան։ Հաւանօրէն այդպէս էր նախնական ժամանակներում. բայց արդէն Դ. դարու մասին այդ բանը չէ կարելի պնդել. իսկ այնուհետև առաւել ևս։ Մի կողմ թողնելով Արարատ նահանգը, որ Աբշակունեաց «բնիկ ժառանգութիւնն»[1] էր, որի մասին ուրիշ առթիւ խօսելու ենք, դառնանք միւս նահանգներին և գաւառներին։ Մոփաց աշխարհը կամ Զորրորդ Հայքը, որի նահանգները ըստ Վռամական դահնամակի ղ. գահն[2] էր կազմում, երկու համանուն ցեղակից նախարարութիւն ունէր «Մոփք մեծ . . . Մոփք Շահունոց»[3], կամ Շահէի[4] կամ միայն Մոփոց[5] և կամ «միւս Մոփք»[6], որոնք ջոկ ջոկ իշխաններ ունէին. Այլև այդ նահանգում

---

1 Ղ. Փարպեցին Աբշակ Գ-ի համար ասում է «Աբշակ թագաւորն . . . թողոյր զբարի և զբնիկ ժառանգութիւն նախնեաց իւրոց, զգաւառն Այրարատու. զհոյակապն և զհռչակաւորն և զականաւորն . . .» Ա, է, 9։ Իսկ Կորիւնը ս. Մեսրոպի համար ասում է «Մաշթոց անուն, ի տարօնական գաւառէն . . . եկեալ հասեալ ի գաւառն Աղձնեաց թագաւորաց Հայոց մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանին առ հաղարապետութեամբն աշխարհիս Հայոց Աղձնեաց ուրումն»։ Պատմութիւն էջ 13—14. Վենետիկ 1894։— Համմ. Խոր. Բ, կա, 139. Գ, իբ, 207—208, ևս Խոր. Բ, ը, էջ 81։

2 «ե (6) Շահապն Մոփոց տէր» Ալիշան. Այրարատ էջ 430։

3 Փ. Բուզ. Դ, իդ, 146։

4 Փ. Բուզ. Գ, թ, էջ 21։ Համմ. Գ, ժբ, էջ 29։ Եւս մեր «Արարատ»։ վեպր.—մարտ. մեր յօդուածը «Պատմագիրք Հայոց» էջ 248—249։

5 Փ. Բուզ. Գ, ժբ, էջ 29։

6 «Դանիէլ մեծ իշխանն Մոփոց . . . և նոյն(*) իշխանն միւսոյ Մոփոց» Փ. Բուզ, Դ, դ, էջ 72—73։ Վենետիկի վերջին երկրորդ հրատարակիչները վերջին անունը Ինճիճեանի պէս կարդում են ոչ թէ Նոյ, այլ Նոյն, (Ստորագր. Հ. Հայասա. Զորրորդ Հայք, Մոփք, էջ 48)։ Նոյ հայ նախարարի անուն մեզ չէ պատահել թէև, իսկ Նոյն-ը երբեւ յատուկ անուն չգիտեմ թէ ոը ազգի մէջ կայ իւր համապատասխան բառով։

էին, Անգեղ տուն, Պաղնատուն, Հաշտեանք, վերջնում կային և Արշակունիք, ինչպէս և Աղիովիտ և Առքեբանի գաւառներում։ Վասպուրականը որ Արծրունեաց «բարձրագոյն և սեփական նահանգ»[1] է կոչւում, վերևը տեսանք թէ որքան ենթարկուած նախարարութիւններ ունէր բացի իւր երկք ճիւղաւորութիւնից։ Արդէն առաջին հայեացքից

Մեզ թուում է նոյն ն դիմորոշ յօդը արտագրողին պէտք է վերագրել, որ խառնել է դերանուան հետ, ինչպէս որ ունին «իշխանն, տանն, այնքան անգամ գործածուած անուննեըը և չունի ոչ մի յատուկ անուն։ Բերենք այդ վկայութիւնն ամբողջապէս. «Զհայր մեծ իշխանն մարզպետութեան, և զԲագարատ մեծ իշխանն ասպարապետութեան (՞՞՞), և զԴանիէլ մեծ իշխանն Ծոփից, և զՄեհանդակ Ռշտունի, և զԱնդովիկ իշխանն Սիւնեաց, և զԱրշաւիր իշխանն Շիրակայ և Արշարունեաց, և զՆոյն իշխանն միւսոյ Ծոփից և զՊապգէն իշխանն տանն Ամատունեաց»։ Ներսէսին կեսարիայ ուղեկցող այս Բագարատը յիշւում է «Բագրատ Բագրատունի» (Փ. Բուզ. Գ, է, էջ 17) պազդանունով։ Մինչդեռ Մ. Երէց այդ տուիթ յիշում է «զիշխանն Բագրատունեաց Դաւիթ» (Սոփերք Զ, գ, էջ 24), իսկ «Բագրատ նահապետն Բագրատունեաց» և նոյն «Բագրատ Բագրատունեաց իշխանն» յիշւում է Ներսէսին Կ. Պոլիս «հայսերական պաղատան» ուղեկցողների և նորա թունաւորման ներկայ եղողների թուում (Սոփերք 9, ը, էջ 53. և ժբ, էջ 88)։

Արդ թէ Փ. Բուզանդը և թէ Մ. Երէցը պատմագրութեան մէջ անդադար և մշտ սեփականն են համարում Մամիկոնեանց, որ ապացուցում է հայերէն, յունարէն և արաբերէն Ագաթանգեղոսով ևս հակառակ Մ. Խորենացու։ Տիւբինգէնի համալսարանի ուսուցիչ Մարքվարտն այս խանգարմունքն ուղղում է այսպէս. «ԶԲագարատ մեծ իշխանն ասպ[ետութեան և զՎասակ մեծ իշխանն սպ]արապետութեան». (Eranšhr. էջ 167. Berlin. Թարգմանուած Հանդէս ամսօրեայ, 1903. թիւ 1, էջ 2, ծանօթ. 3)։—Շատ յայտնի է այս, որովհետև քիչ վերև Բուզանդը պատմում է Մամիկոնեանց վերագործը Տայքից Արշակ Բ-ի ձեռքով, որ Վարդանին նահապետ է հաստատում, իսկ «զՎասակ զմիջին եղբայրն՝ պիւր գայեակին ի սպարապետութիւնն զօրավարութեան . . . կացուցանեը» (Փ. Բուզ. Դ, ը, էջ 67)։

1 Թ. Արծր. Դ, ութ, 266։

և եթե այս բանն անհնարին է ենթադրել, վասն զի Մեծ Հայքի նահանգները 15 են, մինչդեռ նախարարութիւնները բազմաթիւ։ Աւելի շատ գաւառների և նախարարութեանց թիւը մօտաւորապէս հաւասարւում են։ Զնայելով այս աչքի ընկնող հանդամանքին նոյն իսկ գաւառները ամբողջապէս այս կամ այն նախարարական տան չեն պատկանում։ Այսպէս Հաշտեանքն ունի Դ. դարում Խոսրով Կոտակի ժամանակ առանձին նախարարութիւն. «Գազ իշխանն Հաշտենից»[1] Կոստանդիանոս Մեծի որդուն Կոստանդի մօտ պատգամաւոր դնացող երկու իշխաններից մինը. նոյն դարում Խոսրովի որդու և յաջորդի ժամանակ յիշւում է «Գնեթի իշխան Հաշտենից գաւառին ի Կամինական[2] տոհմէ»։ Սակայն Հաշտեանքում վաղարշակի ժամանակից ապրում էին Արշակունի[3] արքայազունքը, ինչպէս և յետոյ Տրդատ–Արտաշէսի որդի Արտաւազդի ժամանակից Աղեսիւիտ և Առբերանի[4] գաւառներում։ Իսկ Տարօն գաւառում միաժանակ կալուածք ունէին Լուսաւորչի տոհմը, որ ունի և այլ գաւառներում[5], Մամիկոնեանք և Հայր մարդպետը[6]։ Վերջինս թերևս իբրև արքունի դործակալ, ինչպէս երբեմն Դրաստամատը Տիրանի և Արշակի ժամանակ Անգեղ տան, Անգեղ և այլ բերդերի և Ծոփաց երկրի Բնաբեղ բերդի[7], սակայն այսու չէ փոխուում մեր վարկածը, ապա ուրեմն թագաւորն ունէր կալուածներ այդ գաւառներում։ Այսպիսով ոչ միայն մի գաւառ ամբողջապէս մի նախարարութեան չէ պատկանում այլ և հեռուում է, որ ոչ միայն արքունիքը, այլ և Լուսաւորչի տոհմը և այլ նախարարութիւններ ունին շատ

---

1 Խոր. Գ, դ, 190։

2 Փ. Բուզ. Գ, ժբ, 29։ «Վարազ Կամինական» վինակը վաչէ Մամիկոնեանի։ Բուզ. Գ, է, էջ 17։

3 Խոր. Բ, ը, 81։

4 Խոր. Բ, կա, 138։

5 Փ. Բուզ. Գ, ժդ, էջ 117։

6 Փ. Բուզ. Ե, գ, էջ 195։

7 Փ. Բուզ. Ե, է, էջ 210—211։

գաւառներում կալուածքներ։

Առհասարակ Հայոց նախարարութեանց ամենամեծ մասը կենդրոնացած են Արարատ, Տուրուբերան և ապա Վասպուրական նահանգներում, այնուհետև մասամբ Մոկաց աշխարհում և Բարձր Հայքում, իսկ մնացեալ եղեբարան Աղձնիք, Մոկք, Կորճայք, Պարսկահայք, Սիւնիք, Արցախ, Փայտակարան, Ուտիք, Գուգարք և Տայք նահանգներից մեծ մասն ունին մէկ համանուն և մէկ–երկու այլ նախարարութիւն, ինչպէս այդ երևում է այս նահանգների գաւառների անուններից, որոնց մեծ մասի անունով նախարարութիւններ չկան։ Տայքի գաւառներն են Կող, Բերդացփոր կամ Բերդափոր, Պարեհոցփոր կամ Պարեհոփոր, Ճակք կամ Ճակատք կամ Ճակատ, Բուխա կամ Բոխա, Ոքաղէ կամ Ոքաղ կամ Ուքաղի և Աղորդու Կաւիոր կամ իսկապէս մի գաւառ Աղորդացփոր. Աշեացփոր կամ Արաեացփոր կամ Աարեաց վոր [1]։ Արդ խնդիր է թէ այս բոլոր գաւառներն էլ կամ այսպէս առնք ամբողջ Տայք նահանգը պատկանո՞ւմ էր Մամիկոնեանց։ Այս գաւառներից Ոքաղը Փարպեցին յիշից երկու դիւղով. բայց չէ ասում յատկապէս թէ Մամիկոնեաններինն է, մինչդեռ ուրիշ առթիւ, Մաղիկ գիւղի համար չեշտում է «որ էր ընդ իշխանութեամբն Մամիկոնէից» [2], սակայն այս գիւղը՝ ըստ ամենայն հաւանականութեան Տարօնում էր գտնւում, որ Հաշտենից սահմանակից էր, ուր վահան կամենում էր անցնել օգնութիւն գտնելու։ Այստեղ յատկապէս յիշելը անշուշտ այն մտքով է, որ այդ կողմերն ուրիշներն էլ կալուածքներ ունէին, ինչպէս որ մասամբ վերևը տեսանք. իսկ Տայքում ոչինչ չյիշելը առելի շուտ մի argumentum e silentio այսինքն լուռ ապացոյց պէտք է համարել, մանաւանդ թէ ի նկատի առնենք որ Փարպեցին յատկապէս չէ շեշտում, թէ Տայքը Մա-

1 Ն. Հիւբշման Die Altarm. Ortsnamen. IV. Abschnitt, XIV. էջ 359–360։ Ամմ. Ինճիճեան Ստորագրութիւն Հ. Հայոստ.

2 Ղ. Փարպ. Գ. ձա, 148։

վիկոնեաններին է։ Մեր վերև բերած ապացոյցները բաւական են այդ հաստատելու, և եթէ մի մեծ կալուածական վովոխութիւն տեղի ունեցած լինէր մինչև ե. դարու վերջը, որև է ակնարկ կը լինէր Փարպեցու և կամ միւս հեղինակների մէջ։

Միակ հաւանական ենթադրութիւնը, որ կարելի է անել, այդ Բախա կամ Բուխա գաւառի մասին է։ Վռամական գահնամակում յիշւում են «Վդ՝ Դիմաքսեանն, Լե՝ Բուխա Դիմաքսեան, Լէ՝ Այդ Դիմաքսեան, Կէ՝ Շիրակա Դիմաքսեան»[1]։ Ուրեմն ինչպէս մեր ուրիշ նախարարները, այնպէս էլ Դիմաքսեանները ունէին իրենց ստորաբաժանումները՝ երկրորդական ճիւղերը, ինչպէս որ վերևը տեսանք։ Դիմաքսեանց երկրորդական[2] ճիւղերը հաստատուում են և եղիշէի խօսքերով։ Շիրակա Դիմաքսեան ի հարկէ կոչուել են միւս ճիւղի ուրիշ տեղի Դիմաքսեաններից զանազանուելու համար, որովհետև մինչդեռ միւս նախարարութեանց երկրորդական ճիւղերը կոչուում են սովորաբար «Այդ»։ Այդ և կամ նախարարութեան անուան կցում են «երկրորդն, երրորդն», այստեղ Դիմաքսեաններն ունին մի «Այդ Դիմաքսեան», ճիւղաւորութիւն, երկուսն էլ կոչուում են գաւառների անուններով և այս հաւանօրէն այն պատճառաւ, որ երևի միմեանցից բոլորովին անկախ են։ Այս աւելի վաւերական է դառնում չնորհիւ այն հանգամանքի, որ զօրանամակում[3] մեր դահ-

---

1 Ալիշան Այրարատ 431։

2 Եղիշէն Վարդանի հետ Աւարայրի դաշտը դիմողների մասին ասում է. «Եւ փութով ամենեքեան հասանէին իւրաքանչիւր զօրօք» ապա թուում է անունները ըստ կարգի 7 «Թաթուլ Դիմաքսեան», 14 «Մամկեակ Դիմաքսեան», 15 և միւս եւս այլ Դիմաքսեան «Գազրիկ» (Եղիշէ ե. էջ 153—154)։ Այստեղից կարելի է հետևացնել, որ Դիմաքսեանները բացի գլխաւոր նախարարութիւնից, եթէ ոչ երկու՝ գոնեա մի երկրորդ նախարարութիւն ևս ունէին։—

3 Զօրանամակ կոչում ենք Շահխաթունեանի 86 նախարարութեանց ցուցակը իւրաքանչիւրի զօրքի քանակով (Ստորագր.

նամակի ուղի ճիւղաւոր նախարարութիւններից, ինչպէս և Առաւելեանք կամ Առաւելեանք և Պալունիք չեն յիշւում իրենց երկրորդական ճիւղաւորութիւններով, իսկ զօրանամակի հիւսիսային դռան «ԺԴ. Դիմաքսեան յ (=300) և Բուխա Դիմաքսեանն է հիւսիսային դռան» ԺԵ. Բուխայեի յ (=300), որոնք բանակին մասնակցում են 300-ական մարտիկներով։ Հետաքրքրական է, որ և թոռրոմական և վռամական գահնամակում և զօրանամակում Մամիկոնեանք և Տայք կամ Տայեցիք չոկ չոկ նախարարութիւններ են համարուում։

Այսպէս Թոռրոմականի Թ=10՝ Մամիկոնեանք և Թ=80 Մամիկոնք երկրորդ, իսկ Թ=75 Տայք[1]. Վռամականի Դ(5) Մամիկոնէից առջ, ԼԱ՝ Մամիկոնէից երկրորդն և ԺԹ(20)՝ Տայոց (առջ)[2]. իսկ զօրանամակում երկուսն էլ հիւսիսային դռանն այսինքն բանակ կազմող նախարարութիւններից են Զ. Տայեցի Ո=600 և Է. Մամիկոնեանն Ռ=1000 մարտիկներով[3]։

Զօրանամակում չկայ Մամիկոնեանց երկրորդական ճիւղի մասին, հետևաբար միասին մի գունդ էին կազմում և հաւանօրէն երկրորդները ենթարկուում էին առաջիններին գէթ զինուորական մասում. նոյնը կարելի է ասել և միւս նախարարութեանց համար։ Իսկ Մամիկոնեանք և Տայեցիք անշուշտ անկախ են, որ երեք նամակներում չոկ չոկ յիշուում են և զօրանամակին նայելով անկախ են իրարից և առանձին առանձին գունդ ունին։ Տայեցին հաւանօրէն հոմանուն երկրի նախնական ազատանին է. Տայքը կամ Տայեցիքն ունին առանձին իշխան, որ ներքս Մեծին կեսարիա ուղեկցող 26 նախարարներից վերջինն է «Դապրիկ իշխան Տայոց», մինչդեռ առաջինը

II, էջ 58-ի և 59-ի միջև)։ Այս ցուցակն արտատպել են Կ. Կոստանեան Հիւսուածքում (III, էջ 32-ի և 33-ի միջև) և Ղ. Ալիշան Այրարատում (էջ 424-ի և 425-ի միջև)։—

1 Սոփերք Զ, ե, էջ 32—35։

2 Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 430—431։

3 Շահխաթունեան Ստորագր. II, էջ 58-ի և 59-ի միջև։

«զօրավարն Շահէն ի Մամիկոնէից տոհմէ»[1]։

Վերոյիշեալներից պարզւում է. ինչպէս Մամիկոնեանք և Տայեցիք, այնպէս էլ Դիմաքսեաննեըը և Բախա–Դիմաքսեաննեըը կամ Բուխայեցիք անկախ են միմեանցից, գոնեա աւելի քան իրենց երկրօրդական ճիւղերն են«— Ըստ ամենայն հաւանականութեան Բուխա անունը կապ ունի Վրհի[2] հետ, որ Ճորոխ գետն է։ Հաւանօրէն այդ մի ցեղ է, որի անունը մնացել է գետին և գաւառին, ինչպէս որ Ֆազիանների[3] անունը մնացել է Երասխի սկզբնական հոսանքին և Բասեան գաւառների վրայ։

---

1 Սեբեոս Զ, գ, էջ 24—25։

2 Հայր Ալսէն Սուքրին Geographie de Moïse de Corène և Աշխարհացոյց Մովսիսի Խորենացւոյ Վենետիկ 1881· էջ 28 § ի Վիրք-ի տակ կարդում ենք «Սկսեալ ի Վոհ գետոյ և ի հիւսիսոյ Տայոց»· § իբ, էջ 30 «Ակամախս որ է Վոհ ի հիւսիս»· ուստի սխալ պէտք է համարել Ցոհ ձևը։ էջ 27 § ժԹ, Կողբիս-ի տակ «զԱկամախս որ է Ցոհ»· կամ էջ 35 § ժե, Տայքի-ի մէջ «եւ ըստ հարաւոյ Բուխա և Ազորդայիտը, իւրեանց գետակօք, որք ... ի՛ջանեն ի Ցոհ ... ընդ որ ի՛ջանէ Ցոհ, գալով ի Սպերայ ... զոր եգերացիք կոչեն Ակամախս և Խաղիք Կակամար»։ Ի նկատի առնելով որ ֆրանսերէնում էջ 38, Ակամախսի բացատրութիւնը «որ է Ցոհ», երևի իբրև ընդմիջարկութիւն, քաշ է թողնուած, և վերջին անգամ իբրև եաևիյ «Ցոհ»-ը ֆրանսերէնում էջ 46 «Yoh» է թարգմանուած, պէտք է կարծել թէ Ցոհ ապագրական սխալ է։ Բոխա ձևը այս պատճառաւ ճշտագոյն է, ինչպէս որ ունի Պաղոմէոսը· «Հ· Հիւբշման Altarm. Ortsnamen էջ 212 և 359)։

3 Ն· Պ· Ինճիճեանը իւր «Հնախօսութիւն» I, էջ 142—148 ճգնում է ապացուցանել, որ Ճորոխը Ս· Գրքի Փիսոն, է, և ոչ թէ Ֆարշ–Ռիսոնը· վերջինիս մասին ոչինչ չունինք ասելու, իսկ առաջինը չենք կարող ընդունել։ Առաջինը որ մեր մատենագրութեան մէջ և ոչ մի հետք կայ այս ենթադրութեան։ Երկրորդ Սարաբոնը և մանաւանդ Պլինիոսը շատ մշուշ գտպահւում ունին Հայաստանի աշխարհագրութեան մասին։ Այսպէս Սարաբոնը, որ Հայաստանը աւելի լաւ գիտի ճանաչէը, ասում է «Ողական և Բողբերդ ոչ հեռի յԱրտաշատէ (՞՞՞) և Արտագերք առ Երիտասարդ» (=Արածանի) (Սարաբոն ԺԱ, 14, 16։ Տես Գարագաշեան Քննական Պատմ· Հայոց II, Թ, § 12, էջ 136·) և այլն։

Աչքի է ընկնում մի կողմից Եւրոպայի Թրակացի Դա կամ Դակ, ըստ Կիպերտի Գէտ,[1] և Ասիայ սկիւթացի Դահ[2] կամ Դահք[3] ժողովրդի անուններուն նմանութիւնը, մանաւանդ որ վերջինից հիւսիս յիշուում է Մասագէտ: Միւս կողմից չունինք արդեօք որ և է առընչութիւն այս անուններու և մեր Տայքը:

Զաւեստայի և Հերոդոտին Դահան և սկիւթացի Սական մի և նոյն ժողովուրդն է, իսկ վերջինս յայտնի է Դիմիրլի՝ կամ յունական Կիմմէրի անունով, որ կոչուել է

Ըստ Մորաբոնի (ժա, 529) Հայաստան աշխարհի Պոնտոս ծովը թափող յայտնի գետերից են Փասիս և Լիկոս, որ է Փոքր Հայքի Գայլ գետը (Ինճիճ. I, 14 էջ 143): Վերջինս գոնեա ակնհայտ սխալ է: Երրորդ Ֆազիսը շփոթել են երբեմն Սկամանիի —ձորոխի հետքին ընթացքի հետ, ինչպէս Պրոկոպիոսը (Altarm. Ortsnamen IV, Տայք, էջ 358): Վերջապէս Քանոֆոնի Անաբազիսից պարզ երևում է, որ գոնեա նորա Ֆազիսը Արտզի վերին ընթացքն է, որտեղ գտնուում են մեր երկու Բասեան գաւառները (Համմ. Friedrich Lübker Reallexikon des klass. Altertums 1891. Phasis. էջ 925: Հ. Հիւբշման Altarm. Ortsnamen I Abschnitt էջ 207—208),

Հ. Գարեգին վ. Յովհէփեանը յիշում է 626 թուին Լազստանում Ֆազիսի մի եպիսկոպոս Կիրոս անունով (Die Entstehungsgeschichte des Monotheletismus, էջ 16, 44—45. Leipzig 1897): Ինճիճեանն յիշում է «ի Գ. Ժողովն Կոստ.[անդնուպոլսի՝869՝] Թէոդորոս եպիսկոպոս Փասիսի ի Լազիկիա» (Հնախօսութիւն I, գ, էջ 146): Ի նկատի առնելով և Լիւրկէրի պնդումը հակառակ Ինճիճեանին, թէ յետոյ Ֆազիս անուանով անտարակոյս հասկացուում էր Ռիոնը, միևնոյն անունով կոչուել է հնում այժմեան Փոթին, և այս երկուսի անունը մնացել Փասեան թռչունի՝ Phasianae aves վրայ, պէտք է ենթադրել թէ Ֆազիս-Բասեան ժողովուրդը հիւսիսից Հայաստան գալով իր հետքերը թողել է և այդ տեղերում:—

1 Δᾶος=Davus, Γέτης=Geta. Lehrbuch der Alten Geographie, § 301, § 307, էջ 305—307, Berlin 1878:

2 Iran, Philol. II, էջ 401. 445. Strassburg. 1896—1904:

3 Δάαι=Dahae. Fried. Lübker. Reallexikon des klass. Altertums, Leipzig, 1891:

և Ducha կամ Gucha [1]:

Ա յս նոր ժողովրդի հաւանօրէն տարբեր ցեղերը հիւսիսից յարձակուել են Հայաստան։ Կիմմէրները, Ըստ Կիպերտի, դեռ Ք. դարում ն. Ք. այլ և 679-ին Կապադովկիա [2] են արշաւել, իսկ 624-ին Մարաստան, Փոքր-Ասիա, Ասորիք մինչև Եգիպտոսի սահմանները երկար ժամանակ։ Արդ Կապադովկիան հայերս կոչել ենք և Գամիրք, ունինք Տաւհք [3] գաւառ, որ գուցէ Ducha-ի հետ կապ ունենայ. այլև Շակաշէն կամ Սագաշէն (=Շաքի)։ Խիդորոսը յիշում է Սագաստանում Բարդա, որ՝ ինչպէս Իճիճեանը նկատել է, մօտ է Պարտաւ անուան [4], որ սակայն այժմ կոչւում է Բարդա [5]։ Հ. Կիպերտը հաւանական է համարում որ Սակերի պէս Կասպ ժողովուրդն ևս թուրանական ծագումն [6] ունի, համանուն ծովով անցնելով հաստատուել է մեր Փայտակարանում։

Այսպէս էլ գուցէ և մեր Բասեան և Տայք գաւառի և նահանգի նախնական բնակիչները սկիւթական ծագումն ունին։ Տայքը Բաենոփոնը կոչում է Τάοχοι, իսկ Ստ. Բիւզանդացին և Τάοι [7], վրացերէն Տաոս-կարի կամ Տաւաս-գերդ, որտեղ կարծես խառնուած են Դահք և Ducha անունները։ Դու կամ Տու անունով երկու գիւղ գտնուում են Բասեան գաւառում, որ սահմանակից էր Տայքին, որոնք դաշնակից էին միմեանց Բաենոփոնի ժամանակ։

---

1 Heinrich Kiepert, Lehrbuch, § 91, էջ 91:

2 Iran. Philol. II, էջ 408, 412:

3 Խորենացի Բ, կե, էջ 144:

4 Ն. Հայաստ. Շակաշէն, էջ 341:

5 Արդեօք Աղուանք, Ուտէացիք, Գարդմանացիք, Ծոփքէացիք և Գարգարացիք (Խոր. Բ, ը, էջ 78), սկիւթացի չէին։ Սոցա բոլորին Խորենացին ցեղակից է համարում և առաջիններին ակնարկելով ասում է ս. Մեսրոպի մասին. «Առեղծ զնշանագիրս հոկորդաեօս, ազեաղուբ, լաժական լեցբեկագունէն այնորիկ գարգարացւոց լեզուէին» (Խոր. Գ, ծդ, էջ 248)։

6 Lehrbuch § 84 էջ 82—83:

7 Հիւբշման Altarm. Ortsnamen էջ 277:

Բացի այդ՝ Դահա ժողովրդի մասն էր Պարն[1] Աշշակունեաց հարստութեան ցեղը, որ ըստ Մարաբասի կաչունի են Դա[ՀՔ]ք Պարնեանք, որոնք «Հատուածեալ են ի Դաց բնակելոց ի վեր կոյս Մէոտիս (Ծովուն)». և սոքա ըստ Ինճիճեանի[2] մեր Տայքը պիտի լինին։

Այս տեղից հետևում է, որ անհիմն է այս ենթադրութիւնը, մանաւանդ որ ունինք մի նախարարութիւն Բառնէից[3] անունով, որ եթէ ոչ Տայքի, գէթ Դուհք–Պարնի

---

1 A. Gutschmid Gesch. Irans, էջ 29, Tübingen 1888

2 Հ. Հայոցաց. Տայք, էջ 368։

3 Ներբէս Մեծի հետ վաղէսի մօտ գնացող տասնութ նախարարներից ե. է «Կիշկէն Նահապետան Բառնէից» Սոփ. Զ, ը, էջ 52։ Փ. Բիւզանդն այս առթիւ յիշում է միայն 9 նախարար, որոնք չնչին տարբերութեամբ Մ. Երէցի յիշած ոհզբի անուններով են, ի. է «Կիշկէն Նահապետան Բագէնից» Փ. Բուզ. Դ, ժա, էջ 106։ Բագէնից նախարարութիւն և այն էլ միայն այս տեղում. իսկ Մ. Երէցը յիշում է Խորովեան գահնամակի 84-րդ տեղում «Բագուանք» (էջ 35), որ գուցէ Փ. Բիւզանդի Բագէնից-ը լինի։ Միևնոյն ժամանակ նկատենք, որ սոքա կարող են և երկու տարբեր նախարարութիւններ լինել։—

Կայ և մի այլ նախարարութիւն Բարմեայք, Բարմայք կամ Բարմայիք (Մ. Երէց, Սոփերք Զ, ե, էջ 38 162-ղը և էջ 130)։ Ներբէս Մեծին կեսարիա ուղեկցող 26—27 նախարարներից 21-դն է «Սագ կամ Սէգ իշխանն Բարմայ» (Սոփերք Զ, գ, էջ 25, որ Փ. Բուզանդը չունի։ Խոշոր տարբերութիւն կայ առհասարակ երկուսի մէջ, ինչպէս և այլ ցանկերում. Համմ. Փ. Բուզ. Դ, գ, էջ 72—73)։ Արդեօք այս երկու նախարարութիւնները նոյն են, չենք համարձակւում պնդել լոկ անուններն նմանութիւնից։ Վերջինս տեղը որոշակի յայտնի է «Կատարեցաւ Բարթողմէոս, յՈրբանոս քաղաքի, ի Բարսա անուանեալ տեղւոջն յանուն(!?!) առաքելոյն»։ (Խոր. Թուղթ Ա.ռ. Ս. Աբծրունի, մատենագրութիւնք էջ 295)։ Ըստ Ինճիճեանի Տէր Խորայէլ Ցայսմաւուրքի հեղինակ ասում է Դեկտ. ԻԹ. «Թաղեցին զնա հուպ ի քաղաքն Ուրբանոս, որ կոչի Բարմ» (Հ. Հայոցաց. էջ 510)։ «Փիլիպպոս Թարսուղիկոսն էր յերկրէն Բարմայ, որ այժմ ասի Աղբակ» (Ա-ռաքել Դաւրիժեցի Իե, էջ 314, Վաղարշապատ 1896)։ «Ելեալ գնացին յերկրէն Բարմայ, որ այժմ ասի Աղբակ» (Ա.ռ. Դաւրիժ. ԽՐ, էջ 552)։ Կարծում ենք այս իշխանութիւնը կանգուն էր

հետ կապ ունին։ Պարթևների սկիւթական[1] ծագումն յայտնի է, և պարթև Կարէնի, Սուրէնի և Կամսարական ու Պահլաւունի ցեղերը ունէին իրենց ճիւղերը Հայաստանում և կամ միայն այդտեղ էլին ապրում, հաւանօրէն ուրեմն ունեցել են և Պարնեանք։ Այսպիսով ուրեմն Հայք մեր օտար և պարթևական նախարարութեանց վրայ և Բառնեանք, որոնց մասին յիշատակում է միայն Մեսրոպ երէցը հակասելով Փ. Բիւզանդին։

Այսպիսով ուրեմն Տայքում լինում են Մամիկոնեանք, Տայեցիք, Բոխա–Դիմաքսեանք կամ Բոխայեցիք, գուցէ և Բառնեայք, որ չունի զօրանամակը։ Հետաքրքրական է յամենայն դէպս այն, որ ոչ միայն առաջին երեք նախարարութիւններն, այլև Դիմաքսեանք պատկանում են Հիւսիսային գաւառ կամ զօրաբանակին։

Այժմ ուրեմն պարզ պէտք է լինի, որ ամբողջ Տայքը չէր պատկանում Մամիկոնեանց, թէկուզ Դ. դարում, ինչպէս ասում է մեր յարդելի ուսուցչապետ և բարեկամ պ. Հ. Հիւբշմանը։ Վասն զի նախ այդ դարուց յետոյ այլևս նոր նախարարութիւններ չեն կազմուել, ինչպէս որ կարելի է տեսնել ե. և յետագայ դարերի պատմագրերից։ Ապա Դ. դարու թագաւորները խոսրով Բ. Կոտակ, Տիրան, Արշակ և Պապ ձգտում են նախարարութիւնները չնչելու և կալուածատիրութիւնը նուազեցնելու. այնուհետև էլ ոչ զօրութիւն, ոչ էլ երևի իրաւունք ունէին հնները չնչելու կամ նորերը հաստատելու, քանի որ ստուերք թագաւոր-

---

մինչև Թ. դարը։ Թ. Արծրունին յիշում է «Գորգ Հարմացի» (Ր, ղ, էջ 109), որ պիտի լինի Բարմացի, մանաւանդ Գորգի հետ յիշուած բոլոր միւս նախարարութիւնները ևս Վասպուրականի հպատակներից են, նոյն Մեծ Աղբակը, հին Արտազանի-տիսը, Վասպուրականի գաւառներից մինն է։—Արդեօք երկու պատմագրի Բարմա թէ Յայոմատուրքի Բարմ ձևն է ուղղագոյնը, դժուարանում ենք ասել։ Հաւանական է որ Բարմա ձևն է ճշտագոյնը, եթէ ի նկատի առնենք, «Բարմայիք» փոփոխակը։—

1 Տես և Հ. Պիսերտ, Lehrbuch der Alt. Geograp. § 69, էջ 69—66։

ներ էին դարձել Գալով Մարզպետունի, Պահլաւունի և Շերեվեան ըստ երևութին նոր նախարարութեանց կամ բացառիկ երևոյթներ են, կամ աւելի ճիշտ հեշտութեամբ բացատրուում է սոցա հնագոյն ծագումը։—

Մամիկոնեանց «այլ տուն»[1] Տարօնի և միւս կալուածքների մասին կը խօսենք ուրիշ անգամ։

Սեբէոս Կանայեանց.

12 մարտի 1907 թ.
Վաղարշապատ։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ *

1. Վար. Նեմիրովիչ—Դանչենկո. Հայուհի Դայիանէն. Թարգ. Արսէն սարկաւագ Սիմէոնեանց, Մոսկուա, 1907 թ.
2. 1896 Թուին Ս. Էջմիածնում գտնուած հին պղնձեղէն առարկաների ցուցակը և արձանագրութիւնները. կազմեց Գալուստ Տ. Մկրտչեան օժանդակութեամբ Սահակ վարդ. Ամատունու. Պարիս, 1906։
3. Դոկտ. Յովհ. Աբթինեան. Տունկերը և անոնց հայերէն անուանները. Փարիզ, 1906։
4. Հայք ի Կ. Պոլիս քաղաքին դարու սկիզբը գրեց Արծրունի. Փարիզ, 1906։
5. Մ. Յովհաննիսեան, Դաշնակցութիւնը և նրա հակառակորդները (Յառաջի գրադարան). Տիֆլիս, 1906։
6. Извѣстія Кавказскаго отдѣла императ. русск. географическаго общества. Т. XVIII. 1905—1906, Тифлисъ, 1906.
7. Die ostarmenischen Laute des 15. Jahrhunderts nach den Transcriptionen in Hans Schiltbergers Reisebuch. Von F. N. Finck,

---

1 Փ. Բուզ. Գ, ժը, ԽՀ 47։

* Ստացուած գրքերի համար այսուհետեւ կանոնաւոր կերպով գրախօսութիւններ կղրուին։

Berlin. Տպուած է Wissenschaftliches Korrespondenzblatt-ում, Նոյեմբ.—Դեկտ. 1906 թ.

8. Systematisch-Alphabetischer Hauptkatalog der königl. Universitätsbibliothek zu Tübingen XIII. Verzeichniss der armenischen Handschriften, von Franz Nicolaus Finck und. Leon Gjandschezian. Tübingen 1907.

9. K. Universitätsbibliothek zu Tübingen. Veröffontlichungen. I. Atlas zum Katalog der arm. Handschriften. 1. Armenische Palaeographie, von Franz N. Finck. 2. Kleinarmenische Miniaturenmalerei. Die Miniaturen des Tübinger Evangeliars Ma XIII. I. vom J. 1113 bezw. 893 n. Chr. von Iosef Strzygowski Tübingen 1907.

Ս. Էջմիածնի տպարանում լույս են ընծայել եւ վաճառում են

	Ռ.	Կ.
1. Ժամագիրք մինջադիր (կազմած)	2	—
2. Ժամագիրք գրպանի (կազմած)	1	50
3. Մեղուաբուծութիւն Գ. Ղազարեան . . .	—	50
4. Դաւիթ Հարքացի. Գ. Տ. Մկրտչեան . . .	—	50
5. Ֆաըրարի Ֆիլոսոֆական արշալոյսին թարգմանեց Մխիթար վարդ.	2	50
6. Հայկականք Գ. Տ. Մկրտչեան	—	50
7. Աստուածուն թէ՞ մամոնային. թարգ. Մամբրէ վարդ.	—	3
8. Հայերը Ռուսաստանում. Մխիթար վարդ. . .	—	80
9. Հոգեբանութեան հիմնական գաղափարների մասին. համաձգրութեամբ Ս. Տիգրանեանի . . .	—	40
10. Մարդուս չա՞տ հող է հարկաւոր թարգ. Վ. Թանէս քհ. Մարգարեան	—	5
11. Հապաղ ու մի խաղ. կոմիտաս վ. և Մ. Աբեղեան Ա. յինեակ	—	15
12. Նոյնը Բ. յինեակ	—	20
13. Ի՞նչ է ճշմարտութիւնը. թարգ. Մամբրէ վարդ.	—	10
14. Բարի սերմերը թարգմ. Մամբրէ վարդ. . .	—	10
15. Էջմիածնի ծոցի օրացոյց 1907 թուականի . .	—	20
16. Ծուցակ ձեռագրաց Խաչիկ վ. Դադեան . .	2	—
17. Գեղցեր. պատմութիւն Բիւզանդական կայսրների թարգ. Մեսրոպ վարդապետ	1	—
18. Խոսրովիկ թարգմանիչ և երկասիրութիւնք, Գարեգին վարդ. Ծովսէփեան	1	20
19. Հայոց նոր վիճակը, Մանանդեան և Աճառեան, գիտական	3	—
20. Նոյնը ժողովրդական Ա. հատոր . . .	—	50
21. » » Բ. հատոր . . .	—	50
22. Համառօտ տեսութիւն Հայրապետական Աթոռի մասին. Ծուսիկ եպիս. Տ. Մարգարեան . . .	—	30
23. Ջէմս քրայս. Կրօնը և եկեղեցին Ամերիկայի Միացեալ Նահանգներում. թ. ե. ծ. վ. Մ. . . .	—	25
24. Տօնատոմի երկերի ժողովածուի առաջի գիրքը՝ Կրէյցերի Սօնատը, Կրէյցերի Սօնատի վերջաբանը, Կանանց և Սէր ե. ծ. վ. Մ.	—	60

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լոյս է տեսել և վաճառւում է

Սրբոյց Իրեներոսի (Երանոսի) հետևողին առաքելոց

ՅՈՅՑՔ ԱՒԱՔԵԼԱԿԱՆ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆՆ

Նորագիւտ հայերէն թարգմանութիւն նախնեաց. հրատարակեցին և գերմաներէնով վերածեցին

Լից. Դր. Կարապետ Վարդապետ

և

Լից. Դր. Երուանդ Վարդապետ

Լայպցիգ. 1907. VIII+137 էջ. Գինն է 3 րուբլի.

Դիմել էջմիածին՝ Երուանդ Վարդապետին.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՈՎ

Պատրաստում եմ դպիրները Հայոց եկեղեցիների համար, ընդամենը չորս ամսուայ ընթացքում անցնելով ամբողջ հայկական երաժշտութիւնը (Շարական, Ժամագիրք, Պատարագի արարողութիւն)։ ***Սովորողները կարող են մասնակցել ժամերգութեան. վճարում են չորս ամսուայ համար յիսուն րուբլի, 25-ը դասընթացի սկզբում, 25-ը վերջը։ Դիմել այս հասցէով։***

Св. Эчміадзинъ, архидіакону ИСРАЕЛЪ

Դպրապետ Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի

ԻՍՐԱՅԵԼ ՍԱՐԿԱՒԱԳ